

ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

## ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԼԻԼԻԹ ԺՈՐԱՅԻ

ՀՀ ԳՈՐԾՎՈՒՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ԿԱՌՎՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄԱԿԵՆԴԻՐՆԵՐԸ

## Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտմերի տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությանը տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

գիտական դեկավար՝  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ԷՂՈՒԱՐԴ ՍԵՐԳԵՅԻ ՂԱԶԱՐՅԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ</b>	<b>9</b>
1.1. Գործադիր իշխանության գործունեության ընդհանուր բնութագիրը	9
1.2. Գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության արտասահմանյան փորձը: Նախարարությունները և գերատեսչությունները արտասահմանյան երկրների գործադիր իշխանության համակարգում	25
1.3. Էլեկտրոնային կառավարության ներդրման միջազգային փորձը: «Պետական նոր կառավարում»	56
<b>ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ</b>	<b>76</b>
2.1. ՀՀ գործադիր իշխանության գործունեության առանձնահատկությունները և հարաբերություններն իշխանության մյուս թևերի հետ	76
2.2. Սահմանադրական բարեփոխումների համեմատական վերլուծությունը և սահմանադրականության մակարդակի գնահատումը	86
2.2. ՀՀ գործադիր իշխանության կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքային մոդելը	109
<b>ԳԼՈՒԽ 3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԱՅԻՆ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ</b>	<b>120</b>
3.1. Էլեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրները ՀՀ-ում	120
3.2. ՀՀ գործադիր իշխանության գործունեության բարելավման հիմնական ուղիները:	131
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>152</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b>	157
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	166
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	167
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3</b>	169

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Տնտեսության կառավարման գործում կենտրոնական դերակատարում ունի գործադիր իշխանությունը, որի առանձին օղակների գործունեության արդյունքներով է պայմանավորված այդ համակարգի արդյունավետությունը: Ընդ որում, կախված երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրների բնույթից, դրանց բարդության աստիճանից և լուծման հնարավորություններից, գործադիր իշխանության գործունեությունն ունի կատարելագործման և բարելավման անհրաժեշտություն: Այս տեսանկյունից հրատապ է դառնում գործադիր իշխանության գործունեության արդյունավետության բարձրացման և կառավարման կատարելագործման ուղիների բացահայտումը, ինչպես նաև էլեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրների լուծումը:

Անցած ժամանակահատվածում Հայաստանի երրորդ հանրապետության կայացմանը զուգընթաց ձևավորվել է գործադիր իշխանության գործունեության որոշակի կարգ, պետական կառավարման մարմինների որոշակի համակարգ՝ իրեն բնորոշ լիազորություններով և պարտականություններով, կառավարման գործառույթներով և մեթոդներով, որն ուսումնասիրության և նորովի իմաստավորման կարիք ունի: Ըստ որում, գործադիր իշխանության գործունեության որակն անմիջականորեն առնչվում է երկրում ձևավորված պետական կառավարման տեսակին՝ նախագահական, պառլամենտական, թե խառը: Այսինքն, ընտրված թեման համահունչ է ՀՀ-ում իրականացվող սահմանադրական բարեփոխումների գործընթացին:

Տնտեսության կառավարման հիմնախնդիրների և դրանց լուծման ուղիների մշակման գործում կարևորվում են կառավարման ճյուղային և ֆունկցիոնալ գործառույթների զուգակցման և դրանց միջև լավագույն հարաբերակցության սահմանումը: Հայաստանի երրորդ Հանրապետության պայմաններում, երբ երկիրը համայնավարական կառավարումից անցում է կատարում ազատ շուկայական միջավայրի, ավելի քան նշանակալի է դառնում վերը նշված գործառույթների, հատկապես, կառավարման պրակտիկայում, կիրառման կարևորությունը:

Գործադիր իշխանության մարմինների կազմավորման եղանակը նույնական գործակալի ազդեցություն է թողնում այդ մարմինների գործունեության արդյունքների վրա: Այս առումով անխուսափելի է դառնում գործադիր իշխանության մարմինների ձևավորման միջազգային փորձի, ինչպես նաև տարբեր երկրների կառավարությունների ձևավորման տեսակների՝ միակուսակցական, կոալիցիոն, անկուսակցական,

ժամանակավոր և այլն, հասարակության և կառավարման մյուս մարմինների հանդեպ դրանց լիազորությունների և պատասխանատվության հիմնահարցերի ուսումնասիրությունը:

Աշխարհի բոլոր երկրներում նախարարությունները և գերատեսչությունները գործադիր իշխանության համակարգում զբաղեցնում են կենտրոնական և կարևոր տեղ, քանի որ կառավարման մասնագիտացված մարմիններ են: Բազմաթիվ երկրներում հանրային կառավարման հիմքում ընկած է նախարարական համակարգը, որը կառուցվում է, որպես կանոն, ճյուղային և ծրագրանպատակային սկզբունքներով, որպեսզի ընդգրկի պետական կառավարման կարևորագույն ոլորտները և հասարակական զարգացման հիմնական ուղղությունները: Այսինքն, սոցիալ-տնտեսական զարգացման յուրաքանչյուր փուլին բնորոշ են նախարարությունների և գերատեսչությունների որոշակի գործառույթներ, դրանց կազմավորման սկզբունքներ:

Ժամանակակից աշխարհի բնութագրական կողմերից են էլեկտրոնային կառավարությունները: Վերջին 25-30 տարիների ընթացքում պետական կառավարման ոլորտում տեղի ունեցած բարեփոխումներն իրենց ազդեցությունն են ունեցել տարբեր երկրների ինչպես պետական կառավարման մարմինների կառուցվածքների, այնպես էլ դրանց գործառութային մեխանիզմների վրա: Մի շարք երկրներում այդ բարեփոխումները սկիզբ են առել որպես նեոպահպանողական սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղադրիչ, որն ուղղված էր տնտեսության պետական կարգավորման սահմանափակմանը (օրինակ, Մեծ Բրիտանիա), առանձին երկրներում այդ բարեփոխումները գործողության մեջ մտան նեոպահպանողական ալիքի անկման ժամանակահատվածում (օրինակ, ԱՄՆ): Վերջապես, որոշ երկրներ այդ բարեփոխումների մեջ ներգրավվեցին կառավարական «դիֆուզիայի» շնորհիվ (օրինակ, Գերմանիա): Այդ բարեփոխումների մեծ մասը ձևավորվել է պետական կառավարման նոր գաղափարախոսության հիմքի վրա, որն ստացել է «պետական նոր կառավարում» անվանումը: Պետական նոր կառավարման գաղափարախոսությունը մեծապես արտահայտվել է հատկապես Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և այլ երկրների կառավարման բարեփոխումների ծրագրերում: Ըստ որում, պետական նոր կառավարման ռազմավարության ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկն էլեկտրոնային կառավարությունն է եղել (e-Government), քանի որ այն համապատասխանել է պետական նոր կառավարման հիմնական սկզբունքներին: Զարգացող երկրների համար հետքրքրություն են ներ-

կայացնում էլեկտրոնային կառավարության իրագործման փուլերը, ինչպես նաև դրա ձևավորման հիմնական ռազմավարությունները:

ՀՀ գործադիր իշխանության գործունեության առանձնահատկությունները և հարաբերությունները իշխանության մյուս թևերի հետ որոշակի հետաքրքրություն կարող են առաջ բերել մյուս երկրներում: Մասնավորապես, ՀՀ գործադիր իշխանության կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքային մոդելը և գործադիր իշխանության գործունեության կատարելագործման հիմնական ուղիների բացահայտումը կարող է հարստացնել կառավարման գործիքակազմը:

Վերը շարադրվածով է հիմնավորվում ատենախոսության թեմայի ընտրությունն ու հրատապությունը:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է՝ օգտագործելով պետական կառավարման և գործադիր իշխանության գործունեությանն առնչվող գրականությունը, իրավական ակտերը, տարբեր հետազոտությունները, պարզել գործադիր իշխանության գործունեության առկա խնդիրներն ու թերությունները և տալ դրանց լուծման հիմնական ուղիները՝ բարձրացնելու ՀՀ պետական կառավարման համակարգում գործադիր իշխանության գործունեության արդյունավետությունը:

#### **Հետազոտության հիմնական խնդիրներն են.**

- հետազոտել գործադիր իշխանության գործունեության ներկայիս գործող կարգը պետական կառավարման համակարգում, ինչպես նաև արտասահմանյան փորձը, դրա տեղայնացման հնարավոր ճանապարհները և էլեկտրոնային կառավարության զարգացման միտումները,

- ուսումնասիրել արտասահմանյան երկրների գործադիր իշխանության համակարգում նախարարությունների և գերատեսչությունների տեղը և դերակատարումները, ինպես նաև գործադիր իշխանության ձևավորման ու կայացման միջազգային փորձը,

- ուսումնասիրել ՀՀ-ում գործադիր իշխանության ձևավորման առանձնահատկությունները, օրենսդրական հիմքերը, գործունեության յուրահատկությունները, հարաբերություններն իշխանության մյուս թևերի հետ, բացահայտել դրանցում առկա խնդիրները գործող սահմանադրության և սահմանադրական բարեփոխումների փաթեթի համեմատության համատեքստում,

- ուսումնասիրել ՀՀ գործադիր իշխանության կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքային մոդելը,

- բացահայտել կառավարության կառավարման ոլորտների խոշորացման տարբերակը՝ մեկ կենտրոնից կառավարման առավել արդյունավետ համակարգ ստեղծելու նպատակով,

- բացահայտել ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման ներդրման մեջ տեղ գտած խնդիրները, վեր հանել դրանց պատճառները և տալ համապատասխան լուծումներ:

**Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ գործադիր իշխանությունն է և էլեկտրոնային կառավարությունը, իսկ առարկան՝ ՀՀ գործադիր իշխանության գործունեության և էլեկտրոնային կառավարության ներդրման հետ կապված հիմնախնդիրներն ու դրանց լուծման հիմնական ուղիները:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք:** Հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես տնտեսագիտության դասականների, այնպես էլ ժամանակակից տնտեսագետների գիտական աշխատությունները, մասնագիտական հրապարակումները, ոլորտը կարգավորող իրավական ակտերը և փաստաթղթերը: Ատենախոսության տեղեկատվական հիմքը ՀՀ կառավարության, մի շարք նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրատարակված տեղեկագրերը, վերլուծական-տեղեկատվական նյութերն են: Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական և տրամաբանական, համեմատական ու գործոնային վերլուծությունների, գրաֆիկական գնահատումների, հարցումների, քանակական գնահատումների և այլ մեթոդներ:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը:** ՀՀ գործադիր իշխանության գործունեության ուսումնասիրության արդյունքում կանխորոշվել են առաջադրված հիմնական խնդիրներով պայմանավորված գիտական արդյունքները, մասնավորապես.

- մշակվել են կառավարության կառավարման ոլորտների խոշորացման ուղիներ՝ համախմբելու պետական կառավարման առանձին մարմինների գործառույթներն այնպես, որպեսզի բացառվեն լիազորությունների, իրավասությունների և պարտականությունների անհարկի կրկնությունները (Ներքին գործերի նախարարության ստեղծման օրինակով),

- [www.e-gov.am](http://www.e-gov.am) կայքի կատարելագործման և գործարկման արդյունավետության բարձրացման նպատակով հասարակության լայն զանգվածների համար

մշակվել են որոշակի գործառույթներ, մասնավորապես, ոչ պաշտոնական ակնթարթային նամակների ուղարկում և դրանց պատասխանների ստացում,

- Ելեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբրի ծրագրի գործնական կիրառման բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է գործողությունների շարք՝ ուսուցում տարեկան 1-2 անգամ, առանձին նախարարության կամ գերատեսչության ներքին գործավարության անջատ կազմակերպում, բալային գնահատման համակարգի ձևական բնույթից անցում արդյունավետ գործնականի, պաշտոնական գրությունների ընթացքի տեղեկացում,

- 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության և 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների (նախագծի) միջև համեմատական վերլուծության հիման վրա վեր են հանվել ՀՀ Սահմանադրության փոփոխությունների (նախագծի) հիմնական տնտեսական, ինչպես նաև պետական կառավարման համակարգի հետ կապված հիմնախնդիրները և առաջարկվել են լուծման այլընտրանքներ:

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:** Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական և կիրառական նշանակություն, մասնավորապես այնպիսի հիմնախնդիրների լուծման գործում, որոնք վերաբերում են գործադիր իշխանության գործունեությանը, ելեկտրոնային կառավարման ներդրմանը և դրանց կատարելագործման ուղղությունների բացահայտմանը: Ատենախոսությունում տրվել են նաև գիտագործական նշանակություն ունեցող առաջարկություններ՝ կապված գործադիր իշխանության ղեկավարի լավագույն մոդելի մշակման, ելեկտրոնային կառավարության ստեղծման ու ներդրման թերությունների շտկման, կառավարության կառավարման ոլորտների խոշորացման ուղիների բացահայտման և այլնի հետ: Տրված առաջարկությունները կարող են օգտակար լինել գործադիրի գործունեության կատարելագործման, ելեկտրոնային կառավարության ներդրման, ինչպես նաև ատենախոսության թեմային առնչվող գիտահետազոտական ուսումնասիրությունների համար:

**Յետազոտության արդյունքների գիտագործական նշանակությունը և իրապարակումները:** Աշխատանքում կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները, մասնավորապես, գործադիրի ղեկավարի մոդելը, ելեկտրոնային կառավարության մասով արված առաջարկությունները և այլն, կարող են համապատասխան պետական կառույցների կողմից կիրառվել ՀՀ գործադիր իշխանության գործունեության կատարելագործման նպատակով: Ատենախոսության շրջանակներում

ձևավորված արդյունքները քննարկվել են և իրենց օգտակար կիրառությունն են գտել ՀՀ Եներգետիկայի և բնական պաշարների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության և աշխատանքների կազմակերպման բնագավառում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված չորս գիտական հոդվածներում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է 165 էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

# ԳԼՈՒԽ 1. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

## 1.1. Գործադիր իշխանության գործունեության ընդհանուր բնութագիրը

Պետական կառավարումն իրականացվում է իշխանության 3՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջոցով:

Օրենսդիր իշխանությունը ժողովրդի անունից և հենց ժողովրդի կողմից ընտրված մարմնի կողմից պետական նշանակության նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավունքն է և հնարավորությունը: Այդ ակտերն ունենում են ընդհանուր բնույթ և բարձրագույն իրավական ուժ (դրանց թվում ամենամեծ իրավաբանական ուժը պատկանում է իիմնական օրենքին՝ սահմանադրությանը)<sup>1</sup>:

Օրենսդիր իշխանությունը դիտարկվում է որպես ժողովրդի կամքի, հետաքրքրությունների, ժողովրդավարական ինքնիշխանության արտացոլում: Այդ իսկ պատճառով էլ օրենքներն ունեն յուրահատուկ իրավաբանական ուժ՝ համեմատած գործադիր և դատական թևերի ընդունած ակտերի հետ: Նախագահների, կառավարությունների, դատարանների ընդունած ակտերը չպետք է հակասեն օրենքներին: Հակառակը, նրանք իրենց գործունեության համար օրենքները վերցնում են որպես հիմք և գործադրում դրանք: Միայն սահմանադրական ինստիտուտները (օրինակ, սահմանադրական դատարանները) կարող են դադարեցնել օրենքի ուժը, եթե պարզվի, որ օրենքը հակասում է սահմանադրությանը, այսիքն՝ հիմնական օրենքին, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ<sup>2</sup>:

Ժամանակակից օրենսդիր մարմինը ժողովրդի ներկայացուցչական բարձրագույն մարմինն է, որն արտահայտում է ժողովրդի ինքնիշխանությունը, կոչված է կանոնակարգել հասարակական հարաբերությունները՝ օրենքների ընդունման ժանապարհով, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության մարմինների և բարձրագույն պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ: Խորհրդարանն (պառլամենտն) ունի նաև բազմաթիվ այլ լիազորություններ: Այն ձևավորում է

<sup>1</sup>Уткин Э. А., Денисов А. Ф. Государственное и региональное управление, 2002, с . 68.

<sup>2</sup>Венгеров А.Б. Теория государства и права: Учебник. 2000, с . 162.

պետության մյուս բարձրագույն մարմինները, օրինակ, որոշ երկրներում ընտրում է երկրի նախագահին, ձևավորում է կառավարությունը, նշանակում է սահմանադրական դատարանի անդամներին (ամբողջությամբ կամ մասնակիորեն), վավերացնում է կառավարության կողմից կնքվող միջազգային պայմանագրերը, շնորհում է համաներում և այլն<sup>3</sup>:

Պառլամենտի կողմից ընդունված օրենքները, երկրի ղեկավարի հրամանները, դատարանների որոշումները ենթակա են պարտադիր իրականացման:

Տարբեր երկրներում գործադիր իշխանության մարմինները միանման չեն: Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանությունը պատկանում է կամ երկրի ղեկավարին և կառավարությանը (նախարարների խորհրդին, կարինետին), ինչպես Եգիպտոսում է, կամ միայն երկրի ղեկավարին, ինչպես ԱՄՆ-ում է, կամ միայն կառավարությանը, ինչպես Իտալիայում է:

Գործնականում շատ երկրներում երկրի ղեկավարը (միապետը կամ նախագահը) միայն ձևականորեն է գործադիր իշխանությունը ներկայացնում, պառլամենտական հանրապետություններում և պառլամենտական միապետություններում այն ներկայացնում է կառավարությունը, որի «խորհրդով էլ» (գործնականում հրամանով) նախագահն ակտեր է ընդունում: Խառը հանրապետություններում կառավարությունը, հակառակը, ենթակա է նախագահին, ում ձեռքբերում էլ հենց կենտրոնացված է ընդիանուր գործադիր գործունեությունը՝ չնայած, որ սահմանադրությամբ գործադիր իշխանությունը կարող է պատկանել միայն կառավարությանը<sup>4</sup>:

Գործադիր իշխանության մարմիններն ընդունում են նորմատիվ ակտեր: Դրանք ունեն նաև ինքնուրույն նորմատիվային լիազորություններ: Նախագահը, կառավարությունը, նախարարներն ընդունում են բազմաթիվ նորմատիվ ակտեր, որոնք կարգավորում են կենսական կարևորություն ունեցող ոլորտները: Յաճախ այդ ակտերն ունենում են ավելի մեծ նշանակություն, քան օրենքները<sup>5</sup>:

<sup>3</sup>Государственное управление: основы теории и организации. /Подред. В.А. Козбаненко. М.: 2000, с .425.

<sup>4</sup>Уткин Э.А. Государственное и муниципальное управление. 2001, С .49.

Ի տարբերություն ներկայացուցչական և դատական մարմինների, գործադիր իշխանության մարմինների համակարգը կազմված է միասնական ուղղահայացից:

Կառավարությունը ղեկավարում է երկիրը: Այն կարող է ունենալ տարբեր անվանումներ՝ նախարարների խորհուրդ, կարինետ, պետական խորհուրդ (Զինաստան), վարչական խորհուրդ (Կորեա), դաշնային կառավարություն (Գերմանիա), կառավարություն (Չեխիա) և այլն: Դաշնության սուբյեկտներում, երբեմն քաղաքական ինքնավար շրջաններում, լինում են տեղական կառավարություններ: Որոշ երկրներում, հատկապես դասական նախագահական հանրապետություններում (Բրազիլիա, Մեքսիկա, ԱՄՆ և այլն), այդպիսի կոլեգիալ մարմին չկա ոչ հանրապետությունում, ոչ էլ դաշնության սուբյեկտներում. նախարարներից յուրաքանչյուրն առանձին-առանձին ենթարկվում է նախագահին, իսկ նահանգներում՝ նահանգապետերին: Սակայն, վերջին տասնամյակներում շատ նախագահական և բոլոր խառը հանրապետություններում ստեղծվում է կոլեգիալ մարմին, որը սովորաբար կոչվում է նախարարների խորհուրդ: Այն ունենում է սահմանափակ լիազորություններ, ինչպես և դրա նախագահը՝ վարչապետը. փաստացի երկրի նախագահն է ղեկավարում կառավարությունը<sup>6</sup>:

Յուրաքանչյուր երկրում գոյություն ունեն տարբեր իրավաբանական հաստատություններ՝ նախաքննական, հետաքննական մարմիններ, դատախազություններ, նոտարական գրասենյակներ, փաստաբանական ծառայություններ մատուցող ընկերություններ և այլն: Դրանց շարքում հատուկ տեղ են զբաղեցնում պետական դատարանները, որոնք պետական իշխանության յուրահատուկ թեր՝ դատականի կրողներն են: Իրավաբանական այլ մարմինների նման իշխանությամբ օժտված չեն ինչպես դրանք, այնպես էլ ոչ պետական դատարանները (հասարակական, եկեղեցական և այլն)<sup>7</sup>:

Պետական իշխանության ավանդական երկրորդ կարևորագույն թեր գործադիր իշխանությունն է: Այն բնորոշ է պետության բոլոր տեսակներին և փաստացի հենց դրա միջոցով է իրականացվում պետության կառավարումը: Գործադիր իշխա-

<sup>6</sup>Уткин Э. А. Государственное и региональное управление. 2002, с . 73.

<sup>7</sup>Конституционное право зарубежных стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М.В. Баглай, д.ю.н., проф. Ю.И. Лейбоид. ю.н., проф. Л.М. Энтина.-М.:Издательство НОРМА, 2003, с. 529.

նություն հասկացությունն առաջացել է իշխանության թևերի բաժանման հայեցակարգի մշակմանը զուգահեռ, բայց դա չի նշանակում, որ նախքան այդ գործադիր իշխանություն գոյություն չի ունեցել<sup>8</sup>: Օրինակ, Յին աշխարհում կամ Միջնադարում այդ իշխանությունը միապետի ձեռքում էր, որը նաև միաժամանակ օրինաստեղծ մարմինն էր<sup>9</sup>:

Իր եռթյամբ գործադիր իշխանությունը օրենքների պահանջների կիրառումը ապահովող թևն է: Օրենքների կիրառման ապահովմամբ զբաղվում է նաև դատական իշխանությունը, սակայն եթե վերջինս այդ գործառույթն իրականացնում է միայն այն ժամանակ, երբ ի հայտ է գալիս օրենքի պահանջների խախտման որևէ փաստ, գործադիրի խնդիրն է օրենքների պահանջների ամենօրյա և մշտական ապահովումը:

Գործադիր իշխանության միջոցով է իրականացվում պետության գործառույթների գերակշիռ մասը: Գործադիրն է իրականացնում պետության արտաքին և ներքին քաղաքականությունը, սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը և այլն: Պետական իշխանության այնպիսի կարևորագույն գործիքներ, ինչպիսիք են ֆինանսները, բանակը, ոստիկանությունը և այլն, գտնվում են գործադիր իշխանության սուբյեկտների տրամադրության տակ: Գործադիր իշխանությունն իրականացվում է գործադիր իրավասությամբ օժտված հատուկ մարմինների համակարգի միջոցով: Պետական իշխանության մեխանիզմում դրանք ներկայացվում են գործադիր կառավարման մարմինների միջոցով: ՀՀ-ում այդ մարմինների համակարգն ունի հետևյալ տեսքը.

1. կառավարություն,
2. նախարարություններ,
3. կառավարությանն առընթեր մարմիններ,
4. գործադիր իշխանության գործառույթներն իրականացնող օրենքով կազմավորված մարմիններ<sup>10</sup>:

Գործադիր իշխանությունն իր արտահայտությունն է գտնում միմյանց հետ ուղղահայաց և հորիզոնական կապերով կապված մարմինների համակարգի մեջ:

8Алексеев Н.Н. Очерки по общей теории государства. Основные предпосылки и гипотезы государственной науки. Московское научное издательство. 1919 г., с. 203, с. 24.

9Чиркин В.Е. Государствоведение: Учебник. – М.: Юристъ, 1999, с. 360, с. 55.

Այդ համակարգի վերին օղակը կառավարությունն է, որը սովորաբար կազմավորվում և ղեկավարվում է երկրի ղեկավարի կամ վարչապետի կողմից: Կառավարությունն ընդհանուր իրավասությամբ կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է վարչական և գործադիր գործունեություն ողջ երկրի տարածքում: Որպես կանոն, կառավարության կազմի մեջ են մտնում կենտրոնական վարչարարության առավել նշանակալի և կարևոր մարմինների ղեկավարները: Մյուս կողմից, կարելի է ասել, որ վերոհիշյալ սահմանումն այնքան էլ ծիշտ չէ որոշ նախագահական հանրապետությունների և միապետությունների համար, քանի որ ընդհանուր իրավասությամբ բարձրագույն գործադիր մարմինն այդ երկրում ոչ թե կոլեգիալ, այլ միանձնյա է և ներկայացվում է կամ երկրի նախագահի, կամ միապետի կողմից: Օրինակ, չենք կարող խոսել ԱՄՆ-ում կառավարության գոյության մասին, քանի որ նախարարներն ուղղակիորեն ենթարկվում են նախագահին, իսկ կարինետը, որը միավորում է բոլոր նախարարներին, կոլեգիալ մարմին չէ, այն իմաստով, որ չի ընդունում կոլեգիալ որոշումներ, այլ ուղղակի խորհրդատվական գործառույթներ իրականացնելով՝ օգնում է երկրի նախագահին կարևորագույն որոշումների կայացման ժամանակ:

Տարբեր երկրներում կառավարությունը տարբեր անվանումներ է կրում՝ Կառավարություն, Կարինետ, Դաշնային կարինետ, Դաշնային խորհուրդ և այլն: Որոշ երկրներում կառավարության կազմում կարող են ստեղծվել ավելի նեղ ընդհանուր քաղաքական բնույթի մարմիններ, օրինակ, այդպիսին է Պրեզիդիումն Իտալիայում<sup>11</sup>:

Կառավարության տեղը պետական կառավարման մարմինների համակարգում որոշվում է երկրի պետական կառավարման ձևով: Միապետություններում և պառլամենտական հանրապետություններում կառավարությունը ձևավորվում է խորհրդարանական ճանապարհով, ինչից էլ հետևում է դրա անմիջական (ուղղակի) պատասխանատվությունը խորհրդարանի առջև: Այս երկրները սովորաբար ունենում են զարգացած և հարաբերականորեն կայուն կուսակցական համակարգ, իսկ կառավարությունը կազմավորվում է խորհրդարանի կողմից օժանդակվող կուսակցությունների կամ դրանց դաշինքների ներկայացուցիչներից:

<sup>11</sup> Государственное управление: основы теории и организации. Учебник. В 2т./Подред. В.А. Козбаненко. Изд. 2-е, сизм. идоп. - М.: "Статут", 2002, с . 56.

Ի տարբերություն խորհրդարանականի՝ նախագահական հանրապետություններում ժողովրդի կողմից ընտրված նախագահն ինքնուրույն է ձևավորում կառավարությունը: Այս դեպքում սովորաբար միակուսակցական հանդիսացող կառավարությունն ուղղակի պատասխանատվություն է կրում նախագահի առջև, սակայն սխալ կլինի կարծել, թե ձևավորվում է ավտորիտար ռեժիմ, և կառավարության գործունեությունը դուրս է մնում խորհրդարանական վերահսկողության շրջանակներից: Այս դեպքում կառավարությունը հնարավորություն է ստանում գործել առավել ազատ և անկաշկան՝ առանց պառլամենտի ուղղակի և անմիջական միջամտության: Սակայն ամեն դեպքում պառլամենտն ունի կառավարության վրա ազդելու իր լծակները և ցանկացած պահի կարող է անվտահություն հայտնել:

Ինչ վերաբերում է կիսանախագահական հանրապետություններին, ապա դրանց հատուկ է առաջինի և երկրորդի հատկանիշները: Թեև կառավարությունը ձևավորվում է նախագահի կողմից, սակայն այս գործընթացում նա առաջնորդվում է խորհրդարանական մեծամասնության կարծիքով, իսկ կառավարությունն իր հերթին կրում է երկակի պատասխանատվություն նախագահի և խորհրդարանի առջև: Հարկ է նաև նշել, որ բոլոր երկրներում էլ պետական բյուջեի հաստատումը (կառավարության գործունության տարեկան ծրագրի հաստատումը) մնում է խորհրդարանի բացառիկ մենաշնորհը, ինչպես նաև որպես հետևություն խորհրդարանն է ընդունում կառավարության՝ բյուջեի կատարման հաշվետվությունը:

Իրենց քաղաքական կազմի տեսանկյունից առանձնացնում ենք կառավարության հետևյալ երեք տեսակները.

1. միակուսակցական,
2. կոալիցիոն,
3. անկուսակցական<sup>12</sup>:

Պառլամենտական և կիսանախագահական պետություններում միակուսակցական կառավարություն ձևավորվում է այն ժամանակ, երբ խորհրդարանական ընտրությունների արդյունքում կուսակցություններից մեկը ստանում է ձայների բարձրակ մեծամասնություն: Նախագահական պետություններում միակուսակցական

<sup>12</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 365

կառավարություն ձևավորվում է այն ժամանակ, երբ նախագահը կառավարությունը ձևավորում է քացառապես իր կամ իրեն օժանդակող կուսակցության անդամներից, թեև դա միշտ չէ, որ այդպես է լինում, և նախագահը կառավարության կազմի մեջ է ընդգրկում նաև այլ կուսակցությունների ներկայացուցիչների կամ անկուսակցականների: Միակուսակցական կառավարություն ձևավորվում է նաև տոտալիտար քաղաքական ռեժիմի պայմաններում, օրինակ, կոմունիստական կուսակցությունը:

**Կոալիցիոն կառավարություն** ձևավորվում է այն ժամանակ, երբ պառլամենտական ընտրությունների արդյունքներով որևէ կուսակցության չի հաջողվում հավաքել ձայների այնպիսի քանակ, որը նրան թույլ կտար ձևավորել միակուսակցական կառավարություն: Այսինքն՝ կոալիցիոն կառավարությունը համաձայնություն է քաղաքական ուժերի միջև մեկ միասնական կառավարության ծրագրի շուրջ: Իր կազմով կոալիցիոն կառավարությունը, սովորաբար, արտահայտում է խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունը, որով և ապահովում է վերջինիս աջակցությունը: Երբեմն հնարավոր է նաև կառավարության կազմում բոլոր խորհրդարանական կուսակցությունների ներկայացումը և այսպես կոչված «ազգային միասնության» կառավարության ձևավորումը: Բայց գործնականում նման դեպքեր հնարավոր են միայն միասնական վտանգի դեմ միավորվելու անհրաժեշտության դեպքում և նման կառավարությունն էլ ավելի շատ խորհրդանշական, քան գործնական բնույթ ունի և ներկայանում է իրու ընդհանուր դժվարության առջև բոլոր ուժերի միավորման կամքի դրսնորում<sup>13</sup>:

**Անկուսակցական** են այն կառավարությունները, որոնք չեն ձևավորվում դրա անդամների կուսակցական պատկանելության հիմքերով և, որպես կանոն, իրենց մեջ ընդգրկում են արհեստավարժ մասնագետներ, որոնք կարող են չպատկանել որևէ կուսակցության կամ ունենալ կուսակցական պատկանելություն, որը, սակայն, տվյալ պահին գործնական նշանակություն չի ունենա: Անկուսակցական կառավարությունները հաճախ անվանում են նաև ծառայողական, իսկ դրանց գործունեությունը, որպես կանոն, հարատև չէ և ծգվում է այնքան, քանի դեռ չի հաջողվում ձևավորել ուժեղ կուսակցական հիմքերի վրա կառավարություն: Պատահում է նաև, որ

<sup>13</sup> Атаманчук Г.В. Теория государственного управления. М.2000 г., с. 153.

ծառայողական կառավարություն ձևավորվում է երկիրը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու նպատակով:

*Սահմանադրական ճանապարհով ստեղծված կառավարությունը համարվում է մշտական, թեև հասկանալի է, որ նոր խորհրդարանական կամ նախագահական ընտրությունները կարող են բերել դրա իրաժարականի: Պառլամենտական և խառը պետական կառավարման ձևերում կառավարության իրաժարական կարող է տեղի ունենալ նաև կառավարությանն անվստահության քվե հայտնելու ռեպրում:*

*Ժամանակավոր է կոչվում այն կառավարությունը, որը ձևավորվում է ոչ սահմանադրական ճանապարհով, ինչը հաճախ տեղի է ունենում ռեժիմների որպես վարչակարգերի փոփոխության դեպքում և ուղեկցվում է սահմանադրական փոփոխություններով<sup>14</sup>:*

Պետական նարմինների համակարգում կառավարության տեղը և դերը հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա հարաբերությունները պետական կառավարման այլ նարմինների հետ: Կառավարության հարաբերությունները պառլամենտի հետ սկզբունքորեն կախված են երկրի կառավարման ձևից:

*Նախագահական հանրապետություններում նախագահի կողմից դեկավարվող կառավարությունը ձևավորվում է արտախորհրդարանական ճանապարհով և պառլամենտի առջև պատասխանատվություն չի կրում: Նման դեպքերում իրավաբանութեն կառավարությունը համարվում է ընդունված օրենքների պահանջների իրականացնող: Այդ իսկ պատճառով էլ համաձայն նախագահական երկրներում իշխանության բաժանման սկզբունքների կառավարությունն ինքն էլ զուրկ է խորհրդարանի վրա ազդելու լծակներից, և իշխանության այս երկու թևերը կարծես թե գործում են միմյանցից անկախ:*

*Պառլամենտական երկրներում որքան էլ զարմանալի է կառավարությունը խորհրդարանի նկատմամբ գտնվում է ավելի ուժեղ դիրքերում, քան նախագահական երկրներում: Չնայած այն բանին, որ այս երկրներում կառավարությունը ձևավորվում է հենց խորհրդարանի կողմից և իրավաբանորեն պատասխանատու է նրա առջև, սակայն գործնականում հենց կառավարությունն է փաստացի կերպով պլա-*

<sup>14</sup> Мишин А.А. Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник. - М.: Белые альвы, 1996, с. 253.

նավորում և վերահսկում պառլամենտի գործունեությունը: Դրա համար չպետք է մոռանալ, որ այսպիսի դեպքերում կառավարությունը ձևավորվում է մի քանի կուսակցությունների ներկայացուցիչներից, որոնց վարքագիծն ի վերջո պայմանավորված է կուսակցական կարգապահությամբ, որն էլ թելադրվում է և պայմանավորված է գործադիրի աշխատանքով: Ստացվում է, որ խորհրդարանը, որը կազմավորված է գլխավորապես իշխող կուսակցության ներկայացուցիչներից, իր գործունեությամբ առաջնորդվում է կառավարության ծրագրով: Այս իմաստով կոալիցիոն կառավարություն ունեցող երկրներում պառլամենտի փաստացի ինքնուրույնությունը հարաբերականորեն բարձր է<sup>15</sup>:

Կառավարության հարաբերությունները երկրի ղեկավարի հետ կարելի է դիտարկել միայն պառլամենտական երկրների համար, քանի որ նախագահական երկրներում երկրի ղեկավարը, փաստացիորեն ղեկավարելով կառավարությունը, նաև համարվում է դրա մի մասը: Պառլամենտական երկրներում կառավարության դիրքերը բավականին ուժեղ են, և երկրի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է կամ դրա միջոցով, կամ էլ միայն դրա հետ համաձայնեցնելով:

Կոնտրասիգնատուրայի գործող ինստիտուտը չեղոքացնում է նախագահի ցանկացած փորձ որևէ ինքնուրույն գործ ձեռնարկելու, քանի որ, որպես կանոն, նախագահի կողմից ընդունված ցանկացած փաստաթուղթ իրավաբանական ուժ է ստանում միայն տվյալ բնագավառի համար պատասխանատու անձի (նախարարի) կողմից ստորագրվելուց հետո, բայց և այնպես միայն արտակարգ իրավիճակներում է, որ երկրի նախագահի լիազորությունները կարող են քիչ թե շատ նշանակալի դառնալ, իսկ մնացած դեպքերում նախագահն իրականացնում է գուտ ներկայացուցչական բնույթի գործառույթներ: Կիսանախագահական երկրներում երկրի ղեկավարի և կառավարության հարաբերությունները հավասարակշռված բնույթ են կրում և թեև նախագահն իրականացնում է գործադիր իշխանության ընդհանուր ղեկավարում և

<sup>15</sup>Козырин А.Н., Глушко Е.К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие/под ред. Проф., д.ю.н. А.Н.Козырина и доц., к.ю.н. Е.К.Глушко. –М.: Ось.-89,2007.-240с (Juris prudentia).

գործունեության ուղղորդում, սակայն կառավարությունը մնում է քիչ թե շատ ինքնուրույն մարմին և ինքնուրույն է իրականացնում իր գործառույթները<sup>16</sup>:

ՀՀ-ում կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից, որոնց նշանակում և ազատում է հանրապետության նախագահը: Նախագահը վարչապետ է նշանակում Ազգային ժողովի մեծամասնության, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա ամենամեծ թվով խմբակցություն ունեցող պատգամավորների վստահությունը վայելող անձին: Նախարարներին նախագահը նշանակում է վարչապետի առաջարկությամբ, իսկ նախարարներից մեկը կարող է վարչապետի առաջարկությամբ նախագահի կողմից նշանակվել փոխվարչապետ: Կառավարության կառուցվածքում կարող են ընդգրկվել նախարարություններ և ոչ պորտֆելային նախարարներ: Ոչ պորտֆելային է համարվում այն նախարարի պաշտոնը, որը պատասխանատու է որևէ բնագավառի համար, սակայն չի դեկավարում նախարարությունը: Սովորաբար այդ նախարարները հանդես են գալիս այլ նախարարությունների և գերատեսչությունների գործունեության համակարգողի դերում: Կառավարության գործունեության կարգը նախատեսում է գործադիր իշխանության մարմինների փոխհարաբերությունների, կառավարությունում հարցերի նախապատրաստման, քննարկման, որոշումների ընդունման հարաբերությունների ողջ համակարգը: Կառավարությունը կոլեգիալ մարմին է, որի համակարգումն իրականացնում է վարչապետը: Կառավարության գործունեությունն ապահովվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Կառավարության յուրաքանչյուր հերթական նիստ տեղի է ունենում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը: Նախարարները, նախարարությունների և իրենց ենթակայության տակ գտնվող պետական կառավարչական և այլ հիմնարկների միջոցով ապահովում են կառավարության ընդունած որոշումների իրականացումը: Կառավարության լիազորություններն ամրագրված են ՀՀ սահմանադրությամբ, օրենքներով և նախագահի հրամանագրերով: Կառավարության հիմնական խնդիրներն են.

1. Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը,

<sup>16</sup> Пикулькин А.В., Система государственного управления. – М.: ЮНИТИ, 2001, с. 253.

2. պետական բյուջեի նախագծի մշակում և այն Աժ-ի կողմից հաստատելու դեպքում իրականացման ապահովումը,

3. պետական սեփականության տնօրինումը,

4. երկրի տարբեր տարածաշրջանների համաչափ զարգացման ապահովումը:

Գործադիր իշխանությունը երկմակարդակ է և իրականացվում է կենտրոնական և տարածքային կառավարման մարմինների միջոցով:

Գործադիր իշխանության կենտրոնական կառավարման մարմիններն են՝ նախարարությունները, կառավարության առընթեր մարմինները, կառավարության մաս չկազմող, սակայն գործադիր իշխանության մարմիններ հանդիսացող հանձնաժողովները, խորհուրդները, ծառայությունները և այլն: Գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմիններն են՝ մարզպետարանները և նշված պետական կառավարման մարմինների տարածքային ծառայությունները: Գործադիր իշխանության կենտրոնական և տարածքային մարմինների միջև իրավասությունների բաշխումն իրականացվում է կառավարման կենտրոնացման և ապակենտրոնացման սկզբունքների հիման վրա: Կառավարման վերին հարթության վրա գտնվող մարմիններն իրենց լիազորությունների մի մասը փոխանցում են ստորին մակարդակի մարմիններին, որպեսզի դրանք ավելի արդյունավետ իրականացվեն: Կառավարման կենտրոնական մարմինների լիազորությունները, որպես կանոն, սահմանվում են կառավարության որոշմամբ (չի վերաբերում այն մարմիններին, որոնք կազմավորվում են առանձին օրենքներով): Նախարարությունը պետական կառավարչական հիմնարկ է, որն ապահովում է նախարարի ընթացիկ գործունեությունը և աջակցում է նրան որոշումների ընդունմանը և դրանց իրականացման կազմակերպման հարցերում: Նախարարը նախարարության միանձնյա ղեկավարն է, ով ունի տեղակալներ, խորհրդականներ, օգնականներ: Նախարարության աշխատակազմի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ոչ թե նախարարը, այլ աշխատակազմի ղեկավարը, որը տվյալ նախարարության գլխավոր քաղաքացիական ծառայողն է:

**Ֆունկցիոնալ** են համարվում կառավարման այն մարմինները, որոնց գործունեության օբյեկտն առնչվում է տնտեսության բոլոր ճյուղերին և բնագավառներին,

ինչպես նաև միջնուղային հարաբերություններին: Օրենքով ստեղծված մարմիններն իրենց բնույթով նույնպես համարվում են ֆունկցիոնալ: Ֆունկցիոնալ են՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ արդարադատության նախարարությունը: ՀՀ ֆինանսների նախարարությունը իրականացնում է հարկային և մաքսային քաղաքականություն, ապահովում է պետական բյուջեի կատարումը և դրանով նախատեսված ծրագրերի իրականացումը, իրականացնում է պետության արտաքին պարտքի սպասարկումը, կազմակերպում միջազգային արժութային-ֆինանսական կազմակերպությունների հետ պետության արտաքին քաղաքականությունը, կազմակերպում է պետության ներքին պարտքի սպասարկումը (այդ նպատակով ԿԲ-ի հետ համատեղ թողարկում և տեղաբաշխում է պետական պարտատոմսեր) և այլ գործառույթներ<sup>17</sup>:

Կառավարման ճյուղային մարմինները գործունեություն են ծավալում տնտեսության որոշակի բնագավառում, մշակում և իրագործում են տվյալ ճյուղի զարգացման քաղաքականությունը, նորմատիվ իրավական փաստաթղթերի միջոցով կանոնակարգում են տվյալ բնագավառում առկա փոխհարաբերությունները: Կառավարման ճյուղային մարմիններն են՝ ՀՀ առողջապահության նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

Գործադիր իշխանության մարմինների շարքում հարկ է առանձնացնել կառավարության կազմից դուրս գտնվող օրենքով կազմավորված մարմինները: Դրանք են.

1. Կենտրոնական բանկը,
2. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը,
3. Հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովը,
4. Քաղաքացիական ծառայության խորհուրդը,

<sup>17</sup> Страшун Б.А., Конституционное (государственное) право зарубежных стран: Учебник. Том 3. - М.: БЕК, 1999, с. 148.

5. Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը,
6. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը,
7. Ազգային վիճակագրական ծառայությունը,
8. Հանրային հեռուստաընկերության խորհուրդը:

Այս մարմինների լիազորությունների և պարտականությունների շրջանակները սահմանվում են համապատասխան օրենքներով: Դրանց ֆինանսվորումը և ծախսերի նախահաշիվը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով: Սրանք իրավասու են ընդունել նորմատիվ գերատեսչական ակտեր, որոնց կատարումը պարտադիր է քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար: Օրենքով կազմավորված մարմինները իրավասու են.

- ընդունել իրենց իրավասության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական բնույթի որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր և անվերապահ կատարման,
- իրագործել իրենց իսկ ընդունված որոշումները,
- իրականցնել վերահսկողություն իրենց կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ,
- կիրառել վարչական ներգործություն և պատժամիջոցներ՝ ընդունված որոշումների չկատարման կամ թերի կատարման դեպքում<sup>18</sup>:

Պետական կառավարչական հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը հիմնադրվում է նախագահի, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմինների, դատախազության, ինչպես նաև օրենքով կազմավորված մարմինների լիազորությունների իրականացման օժանդակման, գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: **ՊԿՀ** հիմնադիրը ՀՀ-ն է, որի անունից որպես հիմնադիր կարող են հանդես գալ.

1. ՀՀ նախագահը՝ ՀՀ նախագահի աշխատակազմ **ՊԿՀ-ի** համար,
2. Աժ նախագահը՝ Աժ աշխատակազմ **ՊԿՀ-ի** համար,
3. ՍԴ նախագահը՝ ՍԴ աշխատակազմ **ՊԿՀ-ի** համար,

---

<sup>18</sup>Диаконов В.В. Учебное пособие по теории государства и права. 2004, с . 135.

4. Վճռաբեկ դատարանի նախագահը՝ դատական մարմինների աշխատակազմների համար,

5. ՀՀ կառավարությունը՝ կառավարության աշխատակազմի, գործադիր իշխանության բոլոր մարմինների, դատախազության և այլ մարմինների աշխատակազմների համար:

ՊԿՅ կառուցվածքը հաստատվում է դրա հիմնադրի կողմից: Այն կարող է ունենալ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ, բացի այդ հիմնադրի որոշմամբ ՊԿՅ ենթակայությանը կարող է հանձնվել պետական ոչ առևտրային կազմակերպություններ: ՊԿՅ-ն կարող է իրականացնել միայն այնպիսի գործունեությունը, որը նպատակառուղղված կլինի համապատասխան պետական կառավարման մարմնի լիազորությունների արդյունավետ իրականացմանը: ՊԿՅ-ն չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, փոխարենը մատուցված ծառայությունների դիմաց կարող է գանձել պետական տուրք: Մինչդեռ հիմնարկի պահպանան բոլոր ծախսերը ֆինանսավորվում են բացառապես պետական բյուջեի հաշվին: ՊԿՅ-ն կառավարվում է հիմնարկի հիմնադրի կողմից, իսկ գործադիր իշխանության համակարգում կառավարումն իրականացվում է համապատասխան պետական մարմնի ղեկավարի կողմից: Հիմնարկի կառավարումն իրականացվում է դրա գործադիր մարմնի աշխատակազմի ղեկավարի կողմից: Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված ղեպքերում կարող են ստեղծվել կոլեգիալ խորհրդատվական մարմիններ, որոնց ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև լիազորությունները սահմանվում են կանոնադրությամբ: ՊԿՅ կանոնադրությունը հաստատվում է հիմնադրի կողմից: Հիմնադիրն է որոշում նաև ՊԿՅ-ին հանձնվող գույքի կազմը և չափը: Հիմնադիրը կարող է նշանակումներ կատարել ՊԿՅ որոշ պաշտոններում՝ մասնավորապես հիմնադիրն է նշանակում ՊԿՅ աշխատակազմի ղեկավարին: Պետական կառավարման մարմնի ղեկավարի լիազորությունները ՊԿՅ կառավարման ոլորտում սահմանվում են օրենքով, մասնավորապես նրա կողմից են սահմանվում կառուցվածքային ստորաբաժանումները, իր տեղակալների միջև աշխատանքի բաժանումը, ինչպես նաև նա կարող է սահմանված կարգով նշանակումներ կատարել պաշտոններում:

ՊԿՀ ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է աշխատակազմի ղեկավարի կողմից, որին նշանակում և ազատում է հիմնադիրը: Աշխատակազմի լիազորությունների մեջ են մտնում.

- ՊԿՀ կանոնադրական նպատակներին համապատասխան դրա գույքի (այդ թվում ֆինանսական միջոցների) տնօրինումը,
- իր լիազորությունների սահմաններում ՊԿՀ աշխատողների նշանակում և ազատում,
- աշխատողների նկատմամբ կարգապահական տույժերի և խրախուսանքի միջոցների կիրառում,
- կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակում, նրանց իրավասությունների շրջանակների ճշտում և այլն:

ՊԿՀ գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը կամ նրա կողմից լիազորված կառավարման այլ մարմինը:

Դիմնարկն ունի իր անվանումը, որը ներառում է համապատասխան պետական մարմնի անվանումը, իսկ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերուն՝ նաև «աշխատակազմ» բառը: Դիմնարկն ունի ՀՀ պետական զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք: Դիմնարկը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաբղեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Դիմնարկն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ) շահույթ ստանալու նպատակ չի ետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, բնապահպանության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության և ոչ առևտրային այլ բնագավառներում՝ գործունեություն իրականացնելու նպատակով: ՊՈԱԿ-ը ստեղծվում է հիմնադրման, ինչպես նաև 100% պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմավորման միջոցով: ՊՈԱԿ-ի հիմնադիր կարող է լինել բացառապես ՀՀ-ն ի դեմս ՀՀ կառավարության: ՊՈԱԿ-ի սեփականությունը ձևավորվում է հիմնադրման ժամանակ, ինչպես նաև հիմնադիր կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքի հաշվին:

ՊՈԱԿ-ը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն հիմնադրի որոշմամբ նախատեսված դեպքերում, սակայն այդ ընթացքում գոյացած շահույթը կարող է օգտագործվել կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան:

ՊՈԱԿ-ի կառավարումն իրականացվում է նրա հիմնադրի, լիազորված պետական կառավարման մարմնի, ինչպես նաև կազմակերպության գործադիր մարմնի կողմից: Լիազորված պետական մարմինը սահմանված կարգով իրականացնում է կառավարման մարմնի և դրա գործունեության վերահսկումը: Դրա խնդիրն է՝ ՊՈԱԿ-ի ընդհանուր կառավարման իրականացումը և բնականոն գործունեության ապահովումը: ՊՈԱԿ-ի ընթացիկ գործունեության ղեկավարառումն իրականացնում է դրա գործադիր մարմինը, որը նշանակվում և ազատվում է պետական լիազորված մարմնի կողմից, եթե հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի լիազորությունների մեջ է մտնում կազմակերպության տնօրինումը, նա կարող է հանդես գալ կազմակերպության անունից, ներկայացնել դրա շահերը և կնքել գործարքներ, նա է նշանակում և ազատում կազմակերպության աշխատակիցներին, սահմանում կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների և աշխատակիցների իրավունքները և պարտականությունները և այլն:

Հիմնադրի որոշմամբ կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ՊՈԱԿ-ը կարող է ունենալ կառավարման կոլեգիալ մարմին, որի քանակական կազմը չի կարող պակաս լինել 3 հոգուց:

ՊՈԱԿ-ը կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանշից և անհատականացման այլ միջոցներ: Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Ներկայումս ՀՀ-ում ՊՈԱԿ-ի կարգավիճակով հանդես են գալիս պետական ԲՈՒԺ-երի մի մասը, հանրակրթական դպրոցները, թանգարանները, պատկերասրահները և այլն: Այդ կազմակերպությունները գործունեության առումով ունեն հարաբերական ինքնուրույնություն: Իրավաբանական անձի կարգավիճակը դրանց հնարավորություն է տալիս քաղաքացիական կարգավիճակը հարաբերություններում

հանդես գալ որպես առանձին սուբյեկտ: Պետության միջամտությունը այդ կազմակերպության գործունեությանը սահմանափակվում է կառավարման մարմնի խորհրդի կազմում ներկայացուցիչների մի մասին նշանակելու իրավասությամբ: Իրենց գործունեության արդյունքում առաջացած շահույթը ՊՈԱԿ-ը ներդնում է կանոնադրական նպատակների իրականացման մեջ:

Տեսչությունները և գործակալությունները նախարարությունների առանձնացված ստորաբաժանումներ են, որոնց աշխատակազմերում իրականացվում է քաղաքացիական ծառայություն:

Տեսչությունները պետական կառավարման այն մարմիններն են, որոնք այս կամ այն բնագավառում վերահսկողություն են իրականացնում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում իրավասու են իրականացնել վարչական ներգործության միջոցներ:

Գործակալությունները պետական կառավարման այն մարմիններն են, որոնք պետության անունից ծառայություններ են մատուցում քաղաքացիներին և կազմակերպություններին: Գործակալությունները վերահսկողական և վարչական ներգործության իրավասություններ չունեն: Միևնույն նախարարության համակարգում կարող են գոյություն ունենալ ինչպես տեսչություններ, այնպես էլ գործակալություններ:

## **1.2. Գործադիր իշխանության ձևավորման ու գործունեության արտասահմանյան փորձը: Նախարարությունները և գերատեսչությունները արտասահմանյան երկրների գործադիր իշխանության համակարգում**

Գործադիր իշխանությունը և դրա մարմինները: Ինչպես արդեն նշել ենք, օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքները, երկրի ղեկավարի հրամանները, դատարանների որոշումները անհրաժեշտ է իրականացնել:

Տարբեր երկրներում գործադիր իշխանության մարմինները տարբեր են: Սահմանադրության համաձայն՝ գործադիր իշխանությունը պատկանում է կամ երկրի ղեկավարին և կառավարությանը (նախարարների խորհրդին, կարինետին), ինպես

Եգիպտոսում է, կամ միայն Երկրի ղեկավարին, ինչպես ԱՄՆ-ում է, կամ միայն կառավարությանը, ինչպես Խտալիայում է:

Գործնականում շատ Երկրներում Երկրի ղեկավարը (միապետը կամ նախագահը) միայն ձևականորեն է գործադիր իշխանությունը ներկայացնում, պառլամենտական հանրապետություններում և պառլամենտական միապետություններում այն ներկայացնում է կառավարությունը, որի «խորհրդով էլ» (գործնականում հրամանով) նախագահն ակտեր է ընդունում: Խառը հանրապետություններում կառավարությունը, հակառակը, ենթակա է նախագահին, ում ձեռքբերում էլ հենց կենտրոնացված է ընդհանուր գործադիր գործունեությունը՝ չնայած, որ սահմանադրությամբ գործադիր իշխանությունը կարող է պատկանել միայն կառավարությանը:

Գործադիր իշխանության մարմիններն ընդունում են նորմատիվ ակտեր: Դրանք ունեն նաև ինքնուրույն նորմատիվային լիազորություններ: Նախագահը, կառավարությունը, նախարարները ընդունում են բազմաթիվ նորմատիվ ակտեր, որոնք կարգավորում են կենսական կարևորություն ունեցող ոլորտները: Յաճախ այդ ակտերն ունենում են ավելի մեծ նշանակություն, քան օրենքները:

Ի տարբերություն ներկայացուցչական և դատական մարմինների, գործադիր իշխանության մարմինների համակարգը կազմված է միասնական ուղղահայացից:

**Երկրի ղեկավարը:** Երկրի ղեկավարը, որպես կանոն, միապետն է (թագավորը, սուլթանը և այլն) կամ նախագահը: Երկրի կոլեգիալ ղեկավարը (Սուլտանի, Եմենի, Սիրիայի երբեմնի Պրեզիդենտական խորհուրդը, այժմ Շվեյցարիայի Դաշնային խորհուրդը և Կուբայի Պետական խորհուրդը) հազվադեպ է պատահում: Երկրի ղեկավարը սահմանադրական մարմին է և միաժամանակ պետության բարձրագույն պաշտոնատար անձն է, որը պետությունը ներկայացնում է ինչպես դրա ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս: Որոշ երկրներում (Բրունեյ, Օման, Սաուդյան Արաբիա և այլն) նա իր ձեռքում կենտրոնացնում է մեծ իշխանություն, մյուսներում նա միայն պետության սիմվոլն է (ճապոնիայի կայսրը) կամ գործում է «կառավարության խորհրդով» (Յանդկաստանի նախագահը)<sup>19</sup>:

<sup>19</sup> Общая теория государства и права: Учебник / Под. ред. Лазарева С.Н.- М.: Юристъ, 1996, с. 158.

Երկրի ղեկավարը ձևավորում է կառավարությունը (Երբեմն հաստատում է այն միայն ձևականորեն), իրավունք ունի նախարարներին և կառավարությանը ազատել աշխատանքից, իրավունք ունի նշանակել դատավորներին, շնորհել երկրի քաղաքացիություն և բնակատեղիի իրավունք, միջազգային պայմանագրերի որոշ տեսակներ կնքել և վավերացնել (ռատիֆիկացնել), նշանակել դիվանագիտական ներկայացուցիչներին, պարգևներ շնորհել, ներում շնորհել դատապարտյալներին և այլն, սակայն գործնականում այդ լիազորությունների իրականացումը կախված է կառավարման ձևից, պետության ղեկավարի իրական դիրքից: Բացի այդ, կառավարման յուրաքանչյուր ձևի դեպքում էլ կան որոշակի լիազորություններ, որ երկրի ղեկավարը կարող է իրագործել ինքնուրույն, իսկ մյուսների իրագործման համար անհրաժեշտ է և պահանջվում է պառլամենտի համաձայնությունը կամ հաստատումը (օրինակ, ԱՄՆ-ում դեսպանների նշանակման համար) կամ նույնիսկ կառավարության համաձայնությունը (պառլամենտական հանրապետության պայմաններում): Սեփական լիազորությունների իրագործման համար երկրի ղեկավարը ընդունում է նորմատիվ և ոչ նորմատիվ (իրամաններ, ղեկրետներ և այլն) իրավական ակտեր, անցկացնում է նախարարների և այլ պաշտոնատար անձանց հետ խորհրդակցություններ, հրամաններ է տալիս, ուղևորվում է երկրի տարբեր շրջաններ և եկրի սահմաններից դուրս, ստորագրում է միջազգային պայմանագրեր, իրականացնում է արարողակարգային միջոցառումներ: Պառլամենտական հանրապետություններում և միապետություններում, երբեմն նաև խառը հանրապետություններում, որպեսզի երկրի ղեկավարի որոշ ակտեր գործի դրվեն, անհրաժեշտ է վարչապետի ստորագրությունը (կոնտրասիգնացումը): Հազվադեպ դեպքերում վարչապետի ստորագրության հետ մեկտեղ անհրաժեշտ է լինում նաև այն նախարարի ստորագրությունը, ով պատասխանատու է տվյալ ոլորտի համար<sup>20</sup>:

**Միապետը:** Որպես կանոն, միապետը (թագավորը, սուլթանը և այլն) երկրի ղեկավարն է և միաժամանակ գործադիր իշխանության գլուխը: Գործնականում ողջ իշխանությունը նրան է պատկանում միայն բացարձակ միապետություններում:

<sup>20</sup> Иностранные конституционные права: Учебник / Подред. В.В. Маклакова.- М.: Юрист, 1996, с . 356.

Միապետն իր պաշտոնը ստանում և փոխանցում է ժառանգաբար: Գոյություն ունի ժառանգորդության մի քանի համակարգ.

1. սալիկյան, երբ ժառանգում են միայն տղամարդիկ (առաջնահերթ ավագ որդին), իսկ կանայք, այդ թվում՝ դստրերը, բացարձակապես հանվում են ժառանգորդների ցուցակից (ճապոնիա և այլն),
  2. կաստիլյան, երբ կանայք (դստրերը) ժառանգում են գահը, եթե հանգուցյալ միապետը որդի չունի, իսկ եթե նույնիսկ ունի կրտսեր որդի և ավագ դուստր, ապա որդին ունի առավելություն (Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Նիդերլանդներ և այլն),
  3. ավստրիական (գոյություն է ունեցել անցյալում), երբ կանայք կարող են ժառանգել գահը այն պայմանով, որ այդ դինաստիայում որոշակի սերունդների ժամանակահատվածում տղամարդիկ չեն եղել (գործնականում, համենայն դեպք վերջին հարյուրամյակի ընթացքում, կանայք տվյալ համակարգով միապետի գահը չեն ստացել),
  4. սկանդինավյան (Ռանիա, Նորվեգիա), երբ կանայք ժառանգում են գահը տղամարդկանց հետ հավասար պայմաններով՝ առաջնեկի իրավունքով,
  5. մուսուլմանական, երբ գահը ժառանգում է անորոշ մեկը. որոշվում է իշխող ընտանիքի կողմից (Կատար, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա և այլն),
  6. ցեղական, երբ քագավորը դիտարկվում է որպես ցեղի առաջնորդ, իսկ նրա ժառանգորդը որոշվում է ցեղի խորհրդում հանգուցյալի բազմաթիվ որդիների կազմից (Սվագիլենդում վերջին անգան նրանց թիվը 150 էր)<sup>21</sup>:
- Մալազիայում քագավորի գահը չի փոխանցվում ժառանգաբար. նա ընտրվում է միապետական սուբյեկտների սուլթանների կողմից և միայն իրենց կազմից:
- Միապետի իրավական կարգավիճակը:* Միապետն անձեռնմխելի է: Նա չի կարող վարչական, քրեական պատասխանատվության ենթարկվել, նրա դեմ հնարավոր չէ քաղաքացիական հայց ներկայացնել: Միապետի պետական գործողությունների համար քաղաքական պատասխանատվությունը կրում են նրա նախարարները:
- Միապետն իրավունք ունի կրել հատուկ տիտղոս՝ քագավոր, սուլթան և այլն:*

<sup>21</sup> Пикулькин А.В. Система государственного управления.. М.: 2000, с. 98.

Հաճախ միապետն օժտված է լինում օրենքների նկատմամբ վետոյի իրավունքով (ի տարբերություն նախագահի, նա կարող է ունենալ բացարձակ վետոյի իրավունք, որը պառլամենտը չի կարող հաղթահարել), սակայն շատ երկրներում այդ իրավունքը չի գործածվում (օրինակ, Մեծ Բրիտանիայում մոտ 300 տարի, որի հետևանքով էլ ձևավորվել է սահմանադրական ավանդույթ՝ միապետի կողմից վետոյի չօգտագործման հետ կապված): Որոշ նոր սահմանադրություններում, օրինակ, իսպանական, ճապոնական, միապետը վետոյի իրավունքից զրկված է:

Սահմանադրության համաձայն՝ միապետը նշանակում է կառավարությունը, բայց գործնականում պառլամենտական միապետություններում նա միայն ստորագրում է համապատասխան փաստաթուղթը, իսկ կառավարության կազմը պայմանավորված է լինում պառլամենտում տարբեր ուժերի հարաբերակցությամբ և որոշվում է կուսակցության (կուսակցությունների) կողմից, որը պառլամենտում կազմում է մեծամասնություն:

**Նախագահը:** Նախագահն ընտրվում է որոշակի ժամկետով՝ Լատվիայում՝ 3 տարի, ԱՄՆ-ում՝ 4, Բրազիլիայում՝ 5, Եգիպտոսում՝ 6, Ղազախստանում՝ 7 և այլն: Սակայն եղել են նաև «ցմահ» նախագահներ (ներկայումս Թուրքմենիայում, Կորեայում), ինչպես նաև նախագահներ, որոնք իրենց պաշտոնը զբաղեցրել են ոչ թե ընտրությունների միջոցով, այլ հեղաշրջումների արդյունքով:

Նախագահի պաշտոնի ընտրության համար սովորաբար պահանջվում է հետևյալ պայմանների առկայությունը՝ տվյալ հանրապետության քաղաքացիություն (որոշ երկրներում իրենց թեկնածությունը կարող են դնել նաև 2 և ավելի քաղաքացիություն ունեցող անձինք, սակայն այժմ մի շարք երկրների օրենսդրություններն արգելում են դա), քաղաքացիական և քրեական իրավունքների լիարժեք առկայություն, որոշակի նվազագույն տարիքային շեմ (սովորաբար 35 տարեկան, Նիկարագուայում՝ 25, Վենեսուելայում՝ 30, Չինաստանում՝ 45, Իտալիայում՝ 40՝ սկսած 2005թ.): Երբեմն սահմանվում է նաև տարիքային վերին սահման (օրինակ, Նամիբիայում մինչև 65): Մի շարք սահմանադրություններ թեկնածուի համար սահմանում են տվյալ երկրում ապրած տարիների քանակը (Բուլղարիայում՝ 5 տարի, Ուկրաինայում՝ 10, ԱՄՆ-ում՝ 14, Վրաստանում՝ 15): Նիգերիայում նախագահի թեկնա-

ծուն պետք է ունենա միջնակարգ կրթություն, Թուրքիայում, Ադրբեյջանում՝ բարձրակարգ, Ֆիլիպիններում նա պետք է կարողանա գրել և կարդալ: Կան նաև այլ պայմաններ, որոնք նշված են լինում տվյալ երկրի սահմանադրությունում:

Կառավարության կազմը տարբեր երկրներում տարբեր է, որի կազմի մեջ մտնում են դրա նախագահը (սովորաբար կոչվում է վարչապետ, սակայն կան նաև այլ անվանումներ՝ Չինաստանում Պետական խորհրդի պրեմիեր, Բուլղարիայում նախարար-նախագահ, Շվեյցարիայում պետական նախարար և այլն): Վարչապետի դեկավարության ներքո աշխատում են նախարարները, պետական նախարարները (Պորտուգալիայում նրանք վարչապետի տեղակալներն են), պետական քարտուղարներ (ԱՄՆ-ում այդպես է կոչվում արտգործ նախարարը, մյուս նախարարները կոչվում են քարտուղարներ), գերատեսչությունների (ծառայությունների, գործակալությունների) դեկավարներ: Պառլամենտական քարտուղարները, ովքեր ապահովում են կառավարության, նախարարների և պառլամենտական կառույցների միջև կապը, պառլամենտում ներկայացնում են նախարարներին<sup>22</sup>:

**Կառավարության կազմավորման կարգը:** Կառավարության կազմավորման կարգը կախված է երկրի պետական կառավարման ձևից: Կիսաքացարձակ միապետություններում սահմանադրական քողի տակ թաքնված երկրի դեկավարը կառավարության անդամներին սովորաբար նշանակում է իր մոտ բարեկամների շարքերից (Բահրեյն, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա և այլն): Նախարարների ընտրության հարցում երկրի դեկավարը ազատ է նաև դուալիստական միապետություններում՝ չնայած թագավորը երբեմն նաև հաշվի է առնում պառլամենտում առկա իրավիճակը: Նախագահական հանրապետություններում նախագահն ինքնուրույն է ձևավորում նախարարների կազմը կուսակցության ակտիվ գործիչների ցանկից (Բրազիլիա, Եգիպտոս, Մեքսիկա, Կոլումբիա և այլն)` չնայած այսպիսի որոշ հանրապետություններում կառավարման ձևավորմանը մասնակցում է նաև պառլամենտի վերին պալատը (ԱՄՆ-ում նախարարների նշանակման համաձայնությունը տալիս է Սենատը. այն չի գրադաւում նախարարների պաշտոնին նշանակվող անձանց կուսակցական պատկանելու-

<sup>22</sup> Глазунова Н.И. Система государственного управления. М.: 2002, с. 207.

թյան հարցի լուծմամբ, այլ միայն ստուգում է թեկնածուների բարոյական կարգավիճակը, նրանց կոմպետենտությունը):

Խառը հանրապետություններում կառավարության ձևավորման գործընթացում հաշվի է առնվում պառլամենտի կուսակցական կազմը և կառուցվածքը, քանի որ, որպես կանոն, վարչապետի նշանակման համար անհրաժեշտ է լինում պառլամենտի (ստորին պալատի) համաձայնությունը (Ուկրաինա) կամ ել ողջ կառավարության հաստատումը պառլամենտի կողմից (Ռումինիա):

Պառլամենտական միապետություններում և պառլամենտական հանրապետություններում կառավարության ձևավորման պառլամենտական կարգն է գործում, ինչը հիմնված է լինում պառլամենտական ընտրությունների վրա: Յուրաքանչյուր ընտրություններից հետո (ներառյալ եթե պառլամենտը վաղաժամ է ցովել) կառավարությունը նորից է կազմավորվում, նույնիսկ եթե իշխանությունը մնում է նույն կուսակցության ձեռքբերում, սակայն նոր նախագահի ընտրություններից հետո չի հետևում նոր կառավարության ձևավորում:

Իտալիայում, 2005թ. սահմանադրական փոփոխության համաձայն, կառավարության գլուխն ընտրվում է քաղաքացիների կողմից անուղղակի ընտրությունների միջոցով, ապա հանրապետության նախագահի կողմից նշանակվում է որպես վարչապետ: Կառավարության ձևավորման նմանատիպ մեխանիզմ գործում էր նաև իսրայելում, սակայն հետագայում իրաժարվեցին դրանից:

Յնդկաստանում կառավարության կազմի մեջ պարտադիր կերպով մտնում են խոշոր նահանգների ներկայացուցիչները, Քենիայում՝ այն ցեղերի ներկայացուցիչները, որոնք կազմում են երկրի ողջ բնակչության 3%-ից ոչ պակասը (այդ իսկ պատճառով ել Քենիայի կառավարությունը սովորաբար բազմաթիվ անդամներից է բաղկացած լինում): Կանադայում հաշվի է առնվում ազգությունը և լեզուն: Լինում է նաև այնպես, որ կառավարության անդամ դառնալու կարգը սահմանված է լինում տվյալ երկրի սահմանադրությամբ<sup>23</sup>: Բելգիայում, համաձայն սահմանադրության 99-րդ հոդվածի, կառավարության կազմում պետք է ընդգրկված լինեն ֆրանսերեն և

<sup>23</sup>Козырин А.Н., Глушко Е.К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие/под ред. Проф., д.ю.н. А.Н.Козырина и доц., к.ю.н. Е.К.Глушко. –М.: Ось.-89,2007.-240с (Juris prudentia).

նիդերլանդերեն իմացող նախարարների հավասար թվով անդամներ<sup>24</sup>: Շվեյցարիայի Սահմանադրության 175 հոդվածը սահմանում է, որ կառավարության ձևավորման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երկրի տարածքների և լեզվական շրջանների համաչափության ապահովումը<sup>25</sup>: Մի շաբթ երկրներում կառավարության անդամների համար սահմանված է որոշակի տարիք (Բրազիլիայում՝ 25, Եգիպտոսում՝ 30):

Մեծ Բրիտանիայում և այլ երկրներում (Գնդկաստան, Հունաստան) նախարարները նշանակվում են միայն պառլամենտականների շարքերից, նրանք պահպանում են իրենց պառլամենտական մանդատը և նույնիսկ կարող են քվեարկել կառավարությանը անվտահություն հայտնելու հարցի քվեարկության ժամանակ: Ֆրանսիայում, Ուկրաինայում նրանք պետք է ընտրություն կատարեն՝ մնալ պառլամենտում, թե դառնալ նախարար: ԱՄՆ-ում, Բուլղարիայում նախարարները չպետք է լինեն պառլամենտի անդամներ:

Նախարարներն ունեն իմունիտետ, որը երբեմն հավասար է լինում պառլամենտի անդամների իմունիտետին: Նախարարները երբեմն կարող են հանձնվել դատարան միայն պառլամենտի որոշմամբ, նրանց դատում է հատուկ դատարանը: Նրանք չպետք համատեղեն նախարարի պաշտոնը այլ պաշտոնների հետ, պետք է դադարեցնեն մասնագիտական գործունեությունը, չպետք է մասնակցեն պետական գույքի հետ կապված գործարքներին<sup>26</sup>:

**Կառավարության տեսակները:** Պառլամենտական այն հանրապետություններում, որտեղ որևէ կուսակցություն կազմում է բացարձակ մեծամասնություն (50%+1 ծայն միապալատ պառլամենտում կամ երկպալատ պառլամենտի ստորին պալատում), ստեղծվում է միակուսակցական կառավարություն: Այդպիսի իրավիճակը հատուկ է երկկուսակցական համակարգ ունեցող երկրներին (Մեծ Բրիտանիա, Ավստրալիա, Կանադա և այլն) և 1 իշխող կուսակցություն ունեցող երկրներին (օրինակ, Գնդկաստանում, ճապոնիայում այդպես է եղել բավական երկար ժամանակահատված): Այսպիսի երկրներում միայն պատերազմների, արտակարգ իրավիճակ-

<sup>24</sup> Конституции государств Европы. В. Зт. Т. 1. М.: 2001. с.357-358.

<sup>25</sup> Конституции государств Европы. В. Зт. Т. 1. М.: 2001. с. 570.

<sup>26</sup> Чиркин В.Е., Государственное и муниципальное управление М.: Юристъ, 2003.

ների ժամանակ միակուսակցական կառավարության կազմի մեջ են ընդգրկվում այլ կուսակցությունների ներկայացուցիչներ:

Նախագահական հանրապետություններում (Եթե կա կառավարություն) նույնպես ստեղծվում է միակուսակցական կառավարություն: Երկրի ղեկավարը նշանակում է նախարարներին իր կուսակցությունից և շատ հազվադեպ է ներգրավում կառավարության կազմի մեջ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ կամ անկուսակցական մասնագետներ:

Խառը հանրապետություններում կառավարության կազմը որոշ չափով կարող է կախված լինել պառլամենտի կազմից (այսպիսով՝ ֆրանսիայում կառավարությունը պետք է ստանա պառլամենտի համաձայնությունը):

Եթե պառլամենտական միապետություններում կամ պառլամենտական հանրապետություններում պառլամենտում որևէ կուսակցություն չի կազմում բացարձակ մեծամասնություն, մի քանի կուսակցությունների առաջնորդների նախնական համաձայնության հիման վրա ձևավորվում է կոալիցիոն կառավարություն, որին հավանություն է տալիս պառլամենտի մեծամասնությունը: Այդ կուսակցությունների առաջնորդները իրար միջև բաժանում են նախարարական պաշտոնները: Կոալիցիոն կառավարության կազմում սովորաբար ընդգրկվում են բնույթով նման կուսակցություններ: Կոալիցիոն կառավարության ձևավորումը հակառակորդ կուսակցությունների միջև հազվադեպ է լինում (քրիստոնյա-դեմոկրատների և սոցիալ-դեմոկրատների միջև Գերմանիայում 2005թ.):

Կրիտիկական պահերին, հատկապես պատերազմական իրավիճակներում կարող է կազմավորվել հատուկ տիպի կոալիցիոն կառավարություն՝ ազգային միասնականության կառավարություն, որում ներգրավված են լինում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, որոնք իրենց վրա են վերցնում երկրի ղեկավարման պատասխանատվությունը:

Այն դեպքերում, երբ երկրում կա 2-3 խոշոր կուսակցություն, որոնք պառլամենտում չունեն բացարձակ մեծամասնություն, կարող է ստեղծվել պայմանենտական փոքրամասնության կառավարություն: Կուսակցություններից մեկը ձևավորում է կառավարությունը, իսկ մի քանի փոքրաքանակ կուսակցություններ, իրավիրված

չլինելով կոալիցիոն կառավարություն, խոստանում են ցուցաբերել իրենց աջակցությունը վստահության քվեարկության ժամանակ և դա անում են գործնականում նույնպես (ժամանակին այդպես էր Հնդկաստանում, Թուրքիայում, ճապոնիայում):

Եթե պառլամենտական միապետությունում կամ պառլամենտական հանրապետությունում չի հաջողվում ձևավորել կոալիցիոն կառավարություն, ստեղծվում է ծառայողական (գործնական, պաշտոնական) կառավարություն՝ մասնագետներից ընտրված կազմով: Նրանք կարող են լինել անկուսակցական, կարող են նաև պատկանել որևէ կուսակցության, սակայն իրենց գործունեության մեջ չպետք է արտահայտվի կուսակցական պատկանելությունը: Այսպիսի կառավարությունը սովորաբար ժամանակավոր բնույթ է կրում և գոյություն է ունենում մինչ պառլամենտական նոր ընտրությունները, երբ արդեն հնարավոր կլինի ձևավորել կուսակցական հիմքերով կառավարություն: Անկուսակցական կառավարությունները մշտապես գոյություն ունեն նաև այն երկրներում, որտեղ բոլոր քաղաքական կուսակցությունները արգելվում են կամ ել քաղաքական օրգացումը դեռ չի բերել կուսակցությունների ստեղծման: Ներկայումս անկուսակցական կառավարություններ՝ կազմված մեծամասմբ միապետի մոտ բարեկամներից, գործում են Սաումյան Արաբիայում, Բութանում, Բահրեյնում, Կատարում, Քուվեյթում:

Հեղափոխական և պատերազմական հեղաշրջումների պատճառով հաճախ ստեղծվում է ժամանակավոր կառավարություն: Այն կազմավորվում է արտապառլամենտական կարգով և ոչ սահմանադրական նորմերի հիման վրա: Ժամանակավոր կառավարությունը իր անդամների կազմով կարող է լինել կուսակցական և անկուսակցական: Հաճախ այն չի անվանվում ժամանակավոր, սակայն իրականում այդպիսին է<sup>27</sup>:

**Կառավարության լիազորությունները:** Սահմանադրությունների մեջ մասում կառավարության լիազորությունները սահմանված են լինում շատ ընդհանուր ձևով: Օրինակ, ֆրանսիայի Սահմանադրության մեջ ասվում է. «Կառավարությունը որոշում

<sup>27</sup>Чиркин В. Е., “Опыт зарубежного управления (государственное и муниципальное управление)”, Москва, Юристъ 2006г., с. 47.

և իրականացնում է ազգի քաղաքականությունը. դրա ենթակայության տակ են գտնվում վարչական ապարատը և զինված ուժերը» (հոդված 20)<sup>28</sup>:

Կառավարության լիազորություններն ավելի մանրակրկիտ է ձևավորված լինում տոտալիտար սոցիալիզմի և հետսոցիալիստական խառը հանրապետությունների սահմանադրություններում:

Միայն հազվագյուտ սահմանադրություններ են պարունակում հարցեր, որոնք կառավարությունը պետք է որոշի կողեգիալ կարգով (օրինակ, Սլովակիայի Սահմանադրության 119 հոդվածում՝ սկսած 1992թ. սեպտեմբերի 1-ից<sup>29</sup>):

Գործնականում կառավարության իրավասության տակ գտնվող հարցերը հաճախ լուծում է դրա նախագահությունը (բյուրոն), կառավարությունում գործող հանձնաժողովները, վարչապետը:

Կառավարությունը ընդունում է ենթաօրենսդրական ակտեր՝ նորմատիվ և ոչ նորմատիվ (օրդոնանսներ, դեկրետներ, կարգադրություններ և այլն): Դրանք պետք է համապատասխանեն օրենքներին և երկրի դեկավարի ակտերին: Նախարարները նույնպես կարող են ընդունել ակտեր որոշ հարցերի վերաբերյալ: Նախագահական հանրապետություններում, նույնիսկ եթե այդտեղ գործում է նախարարների խորհուրդը, կառավարության նորմատիվ ակտերն ընդունվում են որպես երկրի դեկավարի ակտեր: Խառը հանրապետություններում կառավարությունը ընդունում է սեփական նորմատիվ իրավական ակտեր:

*Կառավարության և դրա անդամների պատասխանատվությունը:* Կառավարության և դրա անդամների պատասխանատվությունը կախված է նրանից, թե արդյոք նրանց կողմից կատարվել է այս կամ այն իրավական խախտումը ծառայողական պարտականությունները կատարելիս կամ էլ անհատական անձանց կարգավիճակով: Վերջին դեպքում մի շարք երկրներում նրանք պատասխան են տալիս քաղաքացիներին հավասար պայմաններում, սակայն որոշ երկրներում էլ նախարարը

28 Конституции государств Европы. В. Зт. Т. 1. М., 2001, с. 415.

29 Конституции государств Европы. В. Зт. Т. 1. М., 2001, с. 413.

հանձնվում է դատարան՝ պառլամենտի որոշման համաձայն, և նրան դատում է հատուկ դատարանը<sup>30</sup>:

Ներկայումս նախարարներին և կառավարությանը անվստահություն հայտնելու գործընթացի որոշակի բարդացում է նկատվում: Դա կապված է խառը հանրապետությունների թվի կտրուկ աճով՝ կապված կառավարության կայունության ապահովման հետ: Շատ երկրներում կառավարության անվստահություն հայտնելու համար անհրաժեշտ է միայն պառլամենտի կամ դրա ստորին պալատի ձայների 1/10-ը (Կոլումբիա), 1/4-ը (Չեխիա), իսկ երբեմն էլ 1/3-ը (Բելոռուսիա): Որոշ պառլամենտական հանրապետություններում և միապետություններում (Գերմանիա, Ֆունզարիա, Պապուա-Նոր Գվինեա) նախատեսված է, այսպես կոչված, անվստահության հայտնման կառուցվածքային տարբերակը. կառավարության ղեկավարին անվստահություն հայտնելու բանաձևում անպայմանորեն պետք է նշված լինի, թե ով է նրան հաջորդելու: Անվստահության հայտնումը և վարչապետի պաշտոնանկությունը ընթանում է միաժամանակ հաջորդ վարչապետի նշանակման հետ, ինչն ապահովում է կառավարչական իշխանության հաջորդականությունը և կայունությունը:

Մյուս կողմից, անվստահության հայտնման գործընթացի բարդացմանը զուգահեռ նկատվում է նաև այդ գործընթացի լայն տարածում: ճիշտ է, մի շարք պայմաններով, սակայն սա այժմ կարող է կիրառվել նաև Լատինական Ամերիկայի նախագահական հանրապետություններում (Վենեսուելա, Կոստա-Ռիկա, Ուրուգվայ), սակայն միայն առանձին նախարարների հանդեպ (կառավարությունը այս երկրներում նախագահի կարինետն է):

Նախարարների պատասխանատվությունը պառլամենտի առջև կարող է լինել միահավասար կամ անհատական: Միահավասար պատասխանատվության դեպքում ողջ կառավարությունը պաշտոնանկ է արվում, նույնիսկ եթե անվստահությունը հայտնվել է անդամներից միայն մեկին (ֆրանսիա, Իսպանիա, Կուբա), իսկ անհատականի դեպքում պաշտոնանկ է արվում միայն այն նախարարը, որին պառլամենտը հայտնել է անվստահություն: Որոշ երկրներում հնարավոր է նույնիսկ պա-

<sup>30</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление здравебежных стран: учебное пособие /С.В. Пронкин, О.Е. Петрунина.- 3-е изд., доп. и перераб.- М.: КДУ, 2007, с. 157.

տասխանատվության այս երկու տեսակների համադրություն: Այն հարցը, թե պատասխանատվության որ ձևը կկիրառվի, եթե անվստահությունը հայտնվել է միայն մեկ նախարարին (մի քանի նախարարներին), բայց ոչ կառավարությանը ամբողջությամբ, երկրների մի մասում որոշում է կարինետը (Մեծ Բրիտանիա), իսկ որոշ երկրներում էլ՝ պառամենտը (Իտալիա):

Նախարարներին գործից ազատման տարբերակ է նաև իմպիչմենտը: ԱՄՆ-ում դա իրականացվում է նախագահի իմպիչմենտի նման: Դանիայում նախարարներին իմպիչմենտ կարող է հարուցվել ոչ միայն պառամենտի կողմից. այս դեպքում որոշումը կայացնում է թագավորության Գերագույն դատարանը<sup>31</sup>:

Ստորև կփորձենք ներկայացնել ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի, Ուկրաինայի և Վրաստանի կառավարությունների սահմանադրական հիմքերը, կառուցվածքը և լիազորությունները:

**Ֆրանսիայի կառավարությունը**, որը սերտորեն կապված է հանրապետության նախագահի հետ, առանձին մարմին է, որին նվիրված է Սահմանադրության երրորդ բաժինը: Ազգային ժողովը կարող է ցրել կառավարությունը՝ վերջինիս հայտնելով անվստահություն, ինչն անհնար է իրականացնել նախագահի հանդեպ: Կառավարության ձևավորումը սկսվում է վարչապետի նշանակմամբ<sup>32</sup>: Սա նախագահի ամենակարևոր սեփական լիազորություններից մեկն է: Հայտնի է, որ նախագահը, լինելով ազատ իր ընտրության մեջ, պարտավոր է հաշվի առնել Ազգային ժողովում ուժերի բաշխվածությունը: Այսպիսով, կառավարության կազմը պետք է շահեկան լինի թե՛ նախագահի, թե՛ պառամենտի համար, սակայն եթե առկա են անհամաձայնություններ, որոշիչ նշանակություն ունի Ազգային ժողովի կարծիքը<sup>33</sup>: Կառավարությունը կարելի է ցրել երեք դեպքերում՝ նախագահի, Ազգային ժողովի կամ էլ սեփական նախաձեռնությամբ: Կառավարությունն ավելի պակաս կայուն է, քան նախագահը և, նույնիսկ, քան Ազգային ժողովը, քանի որ այն վերակազմավորվում է երեքից չորս տարին մեկ անգամ: Եթե կառավարությունը ներկայացնում է նույն կուսակցությունը

<sup>31</sup>Рой О. М., Система государственного и муниципального управления: Учебное пособие. 3-е издание. – СШБ.: Питер, 2007, 152с.: ил. – (Серия «Учебное пособие»)

<sup>32</sup>Брэбен Г., Французское административное право / Пер. с Франц. М.: Прогресс, 1998.

<sup>33</sup>Ведель Ж., Административное право Франции / пер. с Франц. М.:Прогресс, 1973.

ինչ նախագահը, այն կարող է նաև պաշտոնանկ արվել այն դեպքում, եթե նախագահը պարտություն է կրում նախագահական ընտրությունների ժամանակ՝<sup>34</sup>:

Վարչապետի նշանակումից հետո սկսվում է կառավարության կազմավորման գործընթացը, որի կազմը կախված է ինչպես նախագահի, այնպես էլ վարչապետի կարծիքից: Նախարարներին նշականում և պաշտոնից ազատում է նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Հինգերորդ հանրապետության Սահմանադրությունը ընդիատեց արդեն ավանդույթ դարձած այն փաստը, որ նախարարները համատեղությամբ և նախարար էին, և պատգամավոր: Նրանց արգելվում է նաև պետական կամ մասնագիտական որևէ այլ գործունեության համատեղումը նախարարի պաշտոնի հետ՝<sup>35</sup>:

Կառավարության հիմնական լիազորությունը «ազգային քաղաքականության որոշումն ու իրականացումն է», որն իր մեջ ներառում է վարչարարությունը և գինված ուժերը: Այս փաստը հարց է առաջացնում կապված նախագահի և վարչապետի լիազորությունների բաշխման հետ, թվում է, թե նախագահը պետք է օժտված լինի ավելի լայն և ռազմավարական նշանակության հարցերի հետ կապված լիազորություններով, իսկ կառավարությունը պետք է զբաղվի ընթացիկ վարչարարական հարցերով, սակայն գործնականում նախագահի և վարչապետի լիազորությունները միահյուսվում են և դժվար է դրանք տարանջատել: Վարչապետը «ղեկավարում է կառավարության գործունեությունը»: Այս ձևակերպումը նույնպես բազմաթիվ հարցեր է առաջ բերում: Այսպիսով, վարչապետը կառավարության ղեկավարը չէ. նա միայն ղեկավարում է դրա գործունեությունը: Կառավարության գլուխը հանրվում է հանրապետության նախագահը, որը ղեկավարում է նախարարների խորհուրդը: Կառավարության նմանատիպ երկակի ղեկավարումը չի կարող չառաջացնել գործնական բազմաթիվ դժվարություններ:

Կառավարության կառուցվածքային կարևորագույն տարրերից է նախարարների խորհուրդը: Սա կառավարական միակ կառույցն է, որը նշված է Սահմանադրու-

<sup>34</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В.Пронкин, О.Е.Петрунина.-3-е изд., доп. и перераб.-М.:КДУ, 2007, с. 143

<sup>35</sup>Козырин А.Н., Глушко Е.К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие/под ред. Проф., д.ю.н. А.Н.Козырина и доц., к.ю.н. Е.К.Глушко. -М.: Ось.-89,2007.- с. 265 (Juris prudentia).

թյան մեջ: Խորհուրդը կոլեգիալ մարմին է, որն օժտված է լիազորությունների լայն շրջանակով: Այն ուսումնասիրում է օրենքի նախագծերը, որոնք հետագայում մտցվում են Ազգային ժողով, ընդունում է տարբեր իրավական ակտեր (օրդոնանսներ, դեկտրետներ), կատարում է նշանակումներ տարբեր բարձրաստիճան պաշտոններում և այլն: Յինգերորդ հանրապետությունում վարչապետի գլխավորած կառավարության ինքնուրույն նիստերը չունեն սահմանադրական կարգավիճակ: Վարչապետն իրավունք ունի (նախագահի հանձնարարությամբ) միայն դեկավարել Նախարարների խորհրդի նիստերը: Այնուամենայնիվ, կառավարության գործունեության դեկավարը կարող է վերահսկել տվյալ մարմնի գործունեությունը միջնախարարական զանազան խորհրդների միջոցով: Կառավարական գործունեության շրջանակների ընդլայնմանը գուգընթաց դրանց նշանակությունն ավելի է կարևորվում: Դրանցից որոշներն աշխատում են մշտապես, իսկ մյուս մասը ստեղծվում է ժամանակավոր սկզբունքով որոշակի խնդրի ուսումնասիրման նպատակով: Նմանատիպ խորհրդների դեկավարը կարող է լինել նախագահը, սակայն գործնականում մեծամասամբ վարչապետն է կամ տվյալ ոլորտի համար պատասխանատու նախարարը<sup>36</sup>:

Ֆրանսիայում, ինչպես նաև մի շարք այլ երկրներում, գոյություն ունի կառավարության անդամների որոշակի բրգաձևություն, որը կարող է հասնել մինչև 50 անդամի: Այդտեղ առաջինների շարքին են դասվում պետական նախարարները՝ կարևորագույն գերատեսչությունների դեկավարները: Դրանց թիվը կայուն է, անփոփոխ և, սովորաբար, դրանք հինգն են: Պետական նախարարներին այս բրգաձևության շրջանակներում հաջորդում են սովորական նախարարները՝ ինքնուրույն գերատեսչությունների դեկավարները, նրանց օգնականները<sup>37</sup>:

Վարչապետի նստավայրը Մոնտենյոն պալատն է<sup>38</sup>:

**Մեծ Բրիտանիայի Կառավարության գործունեությունը կարգավորվում է տարբեր իրավական ակտերով:** Մեծ Բրիտանիայի գործադիր իշխանությունը իրա-

<sup>36</sup>Организация административной власти во Франции. Российско-французская серия информационных учебных материалов. М., 1993. с. 113.

<sup>37</sup>Организация работы правительства во Франции: на примере Генерального секретариата Правительства. Российско-французская серия информационных учебных материалов. № 6. М., 1993. с. 46.

<sup>38</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – З-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 392.

գործվում է կառավարության կողմից, որը կազմված է նախարարությունների և այլ գերատեսչությունների ղեկավարներից, պետական նախարարներից, պառլամենտական քարտուղարներից և այլ պաշտոնատար անձանցից: Սրա հետ մեկտեղ գործադիր իշխանության համակարգում իր ուրույն տեղն է զբաղեցնում միապետը, քանի որ այս պետությունը պառլամենտական միապետություն է: Յենց միապետն է նշանակում վարչապետին և դատավորներին, հայտարարում է համաներում, իրավասու և ցրել պառլամենտը, ստորագրում է օրենքները, զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, իրավունք ունի պատերազմ հայտարարել, կնքել միջազգային պայմանագրեր և այլ իրավասություններ<sup>39</sup>: Որպես վարչապետ նշանակվում է համայնքների պալատի ընտրություններում հաղթած կուսակցության առաջնորդը: Կառավարության բազմանդամության և բազմազանության պատճառով այն գրեթե փաստացիորեն երբեք չի գումարվում ողջ կազմով: Այդ պատճառով ծևավորվել է կառավարման կարինետային համակարգ: Կարինետը մի խումբ նախարարների մասնակցությամբ նարմին է, որի կազմը որոշվում է վարչապետի կողմից. կարինետն ընդունում է որոշումներ կարևորագույն հարցերի վերաբերյալ: Սովորաբար կարինետի կազմի մեջ մտնում են 20-25 պաշտոնյա (օրինակ, 2000թ. այդ թիվը 22 էր, իսկ 2003թ.՝ 21): Կարինետի կազմի մեջ կարող են մտնել ինչպես առանձին նախարարությունների ղեկավար նախարարներ, այնպես էլ նախարարներ առանց պորտֆելի<sup>40</sup>:

Որոշ պաշտոններ պահպանել են իրենց ավանդական, միջին դարերից եկող անվանումները, որոնք միշտ չեն, որ արտահայտում են տվյալ պաշտոնի կատարած աշխատանքների բովանդակությունը, օրինակ, Լանկաստերյան դքսության կանցլեր, որը պատասխանատու է մշակույթի զարգացման, գրադարանային և թանգարանային գործերի համար: Յետաքրքրական է այն փաստը, որ կարինետի ներսում ստեղծվում է «ներքին կարինետ», որն իր մեջ ներառում է նախարարների ավելի նեղ շրջանակներ, իհարկե, նաև վարչապետին, այս կարինետը իրավաբանական ոչ մի կարգավիճակ չունի<sup>41</sup>:

<sup>39</sup> Великобритания. Соединенное Королевство Великобритании и Северной Ирландии // Конституции государств Европы, Т. 1. М., с. 137.

<sup>40</sup> Роуз Р. Политическая система Англии // Сравнительная политология сегодня: Мировой обзор / Пер. с. англ. М.: Аспект Пресс, 2002. С. 283.

<sup>41</sup> Bradley A., Ewing K. Constitutional and Administrative Law. 13<sup>th</sup>ed. London, 2002. p. 35.

Վարչապետի լիազորությունները բխում են ավանդույթներից: Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և իրականացնում է վերահսկողություն նախարարությունների և գերատեսչությունների կողմից կառավարության ընդունած որոշումների կայացման հարցերում: Շնորհիվ իր լիազորությունների լայն շրջանակի, վարչապետը ելակետային դեր է խաղում գործադիր իշխանության համակարգում: Նախարարների կարինետի հիմնական գործառույթները կապված են քաղաքականության ուղիների սահմանման հետ: Նախարարների կարինետը գործադիր իշխանության բարձրադիր մարմինն է. այն իրականացնում է նախարարությունների և գերատեսչությունների գործունեության կոորդինացում: Սակայն այս բոլոր հիմնական գործառույթներից, լիազորություններից բացի, կարինետի իրագործմանն են ենթակա նաև որոշ լիազորություններ, որոնք ավանդաբար պատկանել են պետության ղեկավարին, սակայն որոնք միապետը գործնականում երթեք չի իրականացնել, օրինակ, արտաքին քաղաքականության կառավարում, պայմանագրերի կնքում և այլն: Այս ամենը իրականացնում է վարչապետը:

Ինչպես արդեն նշել ենք նախարարների կարինետը լիարժեք կազմով չի անցկացնում նիստեր, այդ իսկ պատճառով երբեմն որոշումներ կայացնելու համար նիստը անցկացնում է «ներքին կարինետը»: Շատ հաճախ գումարվում են նաև մշտական և ժամանակավոր կոմիտեների նիստեր, որոնք գլխավորում է վարչապետը: Կառավարությունը կանոնավոր կերպով պատասխանում է պատգամավորների հարցերին: Կառավարության գործունեությունն իրականացվում է՝ ուղղորդվելով ավանդույթներով և արդեն ձևավորված փորձով:

Կառավարության գործունեության ընթացքն ապահովելու գործընթացում յուրահատուկ տեղ է գրադեցնում վարչապետի անձնական քարտուղարությունը, որը ձևավորում է հենց ինքը՝ վարչապետը: Քարտուղարությունը, որպես կանոն, աշխատակիցների ոչ մեծ խումբ է, որը, սակայն, բաղկացած է հմուտ մասնագետներից:

Կարինետի քարտուղարի ենթակայության տակ գործում է 6 դեպարտամենտ.

1. տնտեսական ոլորտի քարտուղարություն (գրադպատմ է տնտեսական, արդյունաբերական և էներգետիկ քաղաքականությամբ),

2. արտաքին գործերի և պաշտպանության հարցերի քարտուղարություն (զբաղվում է արտաքին և պաշտպանության քաղաքականություններով, ինչպես նաև համագործակցում է անվտանգության և հետախուզության քարտուղարության հետ),

3. անվտանգության և հետախուզության քարտուղարություն (հավաքագրում և համակարգում է հետախուզական տվյալները և փոխանակում է դրանք Մեծ Բրիտանիայի դաշնակից երկրների հետ),

4. Եվրոպական քարտուղարություն (Եվրամիության ինստիտուտների հետ կապի պատասխանատու մարմին),

5. Աներքին գործերի քարտուղարություն (զբաղվում է սոցիալական քաղաքականությամբ, օրինականությամբ, իրավակարգությամբ, շրջակա բնական միջավայրի հարցերով, կրթությամբ, բնակարանային հարցերով, տեղական ինքնակառավարման հարցերով, կառավարության օրենսդրական գործունեության պլանավորմամբ),

6. գիտության և տեխնիկայի քարտուղարություն<sup>42</sup>:

ԶԼՄ-ների հետ կապի համար պատասխանտվությունը կրում է վարչապետի մամլո քարտուղարը:

Իսպանիայի գործադիր իշխանության համակարգում Իսպանիայի կառավարությունը զբաղեցնում է կենտրոնական տեղ: Կառավարության իրավական հիմքերը, կազմը, գործունեության կարգը, իրավասությունները և հարաբերությունները իշխանության այլ մարմինների հետ կարգավորվում է Սահմանադրությամբ: Կառավարությանը Իսպանիայում շատ հաճախ անվանում են նաև «Նախարարների խորհուրդ»: Իսպանիայի առաջին կառավարությունը ստեղծվել է դեռևս 1714թ.՝ Ֆիլիպ V-ի օրոք: Իսպանիայի կառավարության ներկայիս կազմը հետևյալն է՝ նախագահ, նախագահի տեղակալներ, նախարարներ:

Իսպանիայի Սահմանադրության համաձայն՝ նախարարները նշանակվում և ազատվում են թագավորի կողմից՝ կառավարության նախագահի առաջարկությամբ: Նախարարները դադարեցնում են իրենց պաշտոնավարությունը կառավարության նախագահի պաշտոնավարության դադարեցման արդյունքով կամ սեփական նախա-

<sup>42</sup>Роуз Р. Политическая система Англии // Сравнительная политология сегодня: Мировой обзор / Пер. с. англ. М.: Аспект Пресс, 2002. С. 287-283.

ձեռնությամբ: Նախարարությունը ղեկավարում է նախարարը, ում օգնում է գլխավոր քարտուղարը<sup>43</sup>:

Ստորև կներկայացնենք իսպանիայում կառավարության կազմավորման կարգը: Պառլամենտական ընտրություններից հետո իսպանիայի թագավորը իրականացնում է խորհրդակցություն քաղաքական կուսակցությունների առաջնորդների, ինչպես նաև պառլամենտի 2 պալատների խոսնակների հետ: Առաջին հերթին սա վերաբերում է ընտրություններում հաղթած կուսակցության առաջնորդին: Խորհրդակցություններից հետո թագավորը կոնգրեսին է ներկայացնում կառավարության նախագահի իր թեկնածուին, որը սովորաբար ընտրություններում հաղթանակած կուսակցության առաջնորդն է: Ապա սահմանված կարգով կոնգրեսում իրականացվում է քվեարկություն:

Կառավարության նախագահը իրականացնում է կառավարության պաշտոնական ներկայացուցչական գործունեություն: Նա ղեկավարում է կառավարության գործունեությունը և կոորդինացնում է դրա բոլոր անդամների աշխատանքները: Նա հրավիրում է կառավարության նիստերը, նախագահում է դրանք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք նախագահում է անձամբ թագավորը: Կառավարության նախագահը ներկայացնում է կառավարությունը ինչպես միջազգային հարաբերություններում, այնպես էլ իշխանության մյուս թևերի հետ հարաբերություններում:

- Կառավարության լիազորությունները կարելի է բաժանել մի քանի խմբի.
- Լիազորություններ օրենսդրության ոլորտում,
  - Լիազորություններ պետական կառավարման ոլորտում,
  - Լիազորություններ տնտեսության և ֆինանսների ոլորտում,
  - արտաքին գործերի լիազորություններ,
  - լիազորություններ՝ կապված ինքնավար շրջանների գործունեության վերահսկողության հետ,
  - արտակարգ լիազորություններ<sup>44</sup>:

Կառավարության քարտուղարությունը իրականացնում է հետևյալ գործառույթները.

<sup>43</sup> Heywood P. The government and politics of Spain. New York, 2002. p. 51.

<sup>44</sup> Закон от 27 ноября 1997г. № 50/1997 “О правительстве”, Мадрид.

- ✓ օգնում է նախարարների խորհրդի նախարար-քարտուղարին,
- ✓ կառավարության կոլեգիալ տարբեր մարմինների խորհուրդներն է կազմակերպում,
- ✓ կառավարության պատվիրակված կոմիտեների տեխնիկական քարտուղարությունների հետ է համագործակցում,
- ✓ ժողովներ է կազմակերպում, գրանցում, կազմում է ակտեր,
- ✓ կառավարության կողմից ընդունված իրավական նորմերի իրատարկության հավաստիությունն է ապահովում և այլը<sup>45</sup>:

Կառավարական կարևորագույն մարմիններից է Պետական խորհուրդը, որն իրականացնում է խորհրդատվական գործառույթներ: Պետական խորհուրդը կառավարության ներքո գործող կազմակերպական և գործառութային ինքնուրույն մարմին է, ինչը պետք է լինի դրա գործունեության և որոշումների ընդունման օբյեկտիվության և անկախության երաշխիքը: Խորհրդի գործունեության ժամկետը 4 տարի է: Խորհրդի նախագահը նշանակվում է թագավորի կողմից երկրի հայտնի իրավաբանների շարքից, որը պետք է ունենա պետական հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու փորձ<sup>46</sup>:

**Ուկրաինայի կառավարությունը:** Ուկրաինայի գործադիր իշխանության վերին օղակը նախարարների կարինետն է: Դրա գործունեության իրավական հիմքերը շարունակում են մնալ ձևավորման փուլում և մինչ օրս էլ դրանցում հակասություններ են նկատվում:

Խնդիրը նրանում է, որ Ուկրաինան մինչև վերջերս էլ չուներ կառավարության մասին օրենք: Բավական է նշել միայն այն, որ այդ օրենքը բազմիցս մերժվել է նախագահ L. Կուչմայի կողմից և վերադարձվել խորհրդարան: 2006թ. «Ուկրաինայի նախարարների կարինետի մասին» օրենքի ընդունումը կապված էր նաև երկարատև կոնֆլիկտների հետ: Տվյալ օրենքն ընդունվել է Բարձրագույն Ռադայի կողմից և մերժվել է Ուկրաինայի նախագահի կողմից: Նախագահի վետոն հաղթահարվել է խորհրդարանի կողմից, իսկ օրենքը երկրորդ անգամ ուղարկվել է նախագահին: Ին-

<sup>45</sup> Козырин А.Н., Глушко Е.К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие/под ред. Проф., д.ю.н. А.Н.Козырина и доц., к.ю.н. Е.К.Глушко. –М.: Ось.-89,2007.-240с (Jurisprudentia).

<sup>46</sup> Heywood P. The government and politics of Spain. New York, 2002. p. 42.

չից հետո նախագահը ելույթ ունեցավ հայտարարությամբ, որ իրեն ուղարկված տեքստը տարբերվում է խորհրդարանի կողմից ընդունված տեքստից: Դրա հիման վրա և Սահմանադրական դատարանի 1998թ. հուլիսի 7-ին ընդունված որոշման հիման վրա նախագահը վերադարձրեց օրենքը Բարձրագույն Ռադա՝ վերանայման համար: Շուտով օրենքը ստորագրվեց Բարձրագույն Ռադայի և կառավարության կողմից, իսկ արդարադատության նախարարությունն այդ օրենքը մտցրեց պետական նորմատիվային ակտերի ցուցակի մեջ, որից հետո նախագահը կրկին դիմեց Սահմանադրական դատարան:

2007թ. հունվարի դրությամբ կառավարության գործունեության կարգը որոշվում է Ուկրաինայի նախարարների կարինետի ժամանակավոր կանոնադրությամբ, որը հաստատվել է 2000թ. հունիսի 5-ի թիվ 915 որոշմամբ: Բացի այդ, Ուկրաինայի նախարարների կարինետի գործունեությունը կանոնակարգող բազմաթիվ ակտեր կան:

Ուկրաինայի Սահմանադրության համաձայն, նախարարների կարինետի կազմի մեջ մտնում են վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետը, նախարարները: Պաշտպանության նախարարը և արտգործ նախարարը նշանակվում են Բարձրագույն Ռադայի ներկայացմամբ նախագահի կողմից, իսկ նախարարների կարինետի մյուս անդամները նշանակվում են Բարձրագույն Ռադայի կողմից՝ վարչապետի ներկայացմամբ:

Նախարարների կարինետի կազմի մեջ բացի վերը նշվածներից մտնում են նաև այլ նախարարներ, այդ թվում՝ ֆինանսների, ճարտարապետության և կոմունալ-բնակարանային տնտեսության, ագրարային քաղաքականության, ներքին գործերի, առողջապահության, արտաքին գործերի, մշակույթի և տուրիզմի, կրթության և գիտության, շրջակա միջավայրի պաշտպանության, ընտանեկան հարցերի, երիտասարդության և սպորտի, վառելանյութի և էներգետիկայի, տրանսպորտի և կապի, աշխատանքի և սոցիալական քաղաքականության, ածխի արդյունաբերության, Զերնոբիլի դեպքերի հետևանքներից և այլ արտակարգ պատահարներից բնակչության պաշտպանության նախարարները, ինչպես նաև Բարձրագույն Ռադայի և Ուկրաինայի պետական կառավարման այլ մարմինների հետ կապերի նախարարը, էկոնոմի-

կայի, արդյունաբերության և այլ նախարարների կարինետի նախարարները: Բարձրագույն Ռադայի և Ռւկրախնայի պետական կառավարման այլ մարմինների հետ կապի նախարարը նոր պաշտոն է:

Վարչապետը նշանակվում է Բարձրագույն Ռադայի կողմից՝ նախագահի ներկայացմամբ:

Նախարարների կարինետի անդամները իրավունք չունեն պաշտոնը համատեղել այլ աշխատանքի հետ, բացի գիտամանկավարժական և մշակութային աշխատանքներից՝ իրենց աշխատանքային ժամանակից դուրս:

2007թ. հունվար ամսվա դրությամբ Վ. Յանուկովիչի կարինետի ծրագիրը մշակված չէր, ինչը դարձել էր ևս մեկ պատճառ երկրում քաղաքական լարվածության համար: Կարինետը գործում էր նրա կողմից ընդունված հակազգնաժամային միջոցառումների ծրագրին համապատասխան: Նախարարների կարինետի պաշտոնական տեղեկատվություններում շեշտվում էր, որ հենց այդ ծրագրի շնորհիվ հաջողվեց կայունացնել իրավիճակը տնտեսության և բյուջետային ոլորտներում, ինչպես նաև ապահովել երկրի նորմալ կենսագործունեությունը կարինետի աշխատանքների սկզբնական փուլում:

Երկարաժամկետ պլաններում կարինետի գործունեության նպատակներից է վերականգնել երկրի ներդրումային–նորարական մոդելը, տեխնոլոգիական վերազինման բազայի հիման վրա հասնել ոչ ապակաս, քան տարեկան 1% տնտեսական աճ, սղաճի սահմանափակում մինչև 3-4% և բնակչության իրական եկամուտների աճ:

Նախարարների կարինետը իր իրավասությունների շրջանակներում ընդունում է որոշումներ և կարգադրություններ, որոնք ենթակա են պարտադիր կատարման: Կարինետի կողմից ընդունված ակտերը ստորագրվում են վարչապետի կողմից: Նախարարների կարինետի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը ենթակա են գուանցման օրենքով սահմանված կարգով:

Սերկայացնենք Վրաստանի կառավարությունը: Սահմանադրության համաձայն, որն ընդունվել է 1995թ. օգոստոսի 24-ին, բարձրագույն օրենսդիր մարմինը խորհրդարանն է, որը բաղկացած է 2 պալատներից՝ Հանրապետության խորհուրդ և

Սենատի կազմի մեջ են մտնում Աբխազիայի, Աջարիայի և Վրաստանի տարածքային այլ միավորների պատգամավորները, ինչպես նաև նախագահի կողմից նշանակված 5 սենատորները<sup>47</sup>: Ներկայումս պետական ապարատի կազմավորումն ավարտված չէ, և քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով գործում է միապալատ խորհրդարան, որն ընտրվում է 4 տարի ժամկետով՝ համընդիանուր, հավասար և ուղղակի ընտրակարգով: Պատգամավորների թիվը 150 է, որոնցից 75-ն ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ մյուս 75-ը՝ մեծամասնական: Ընտրական իրավունք ունեն հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները:

Վրաստանի Հանրապետության գործադիր իշխանության ղեկավարը նախագահն է, որն ընտրվում է 5 տարի ժամկետով համաժողովրդական քվեարկության միջոցով: Նախագահի պաշտոնը հաստատվել է 1991թ. ապրիլին: Նախագահը կարող է ընտրվել անընդմեջ միայն 2 անգամ: Գործադիր իշխանությունը պատկանում է կառավարությանը: Նախարարներին նշանակում է նախագահը՝ խորհրդարանի համաձայնությամբ: Կառավարության կազմի մեջ մտնում է պետական նախարարը, որն իրականացնում է վարչապետի գործառույթները<sup>48</sup>:

Վրաստանի նախագահն իրավասու է չեղյալ համարել կամ դադարեցնել կառավարության և գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված ակտերը, եթե դրանք հակասում են սահմանադրությանը, միջազգային համաձայնագրերին, պայմանագրերին, Վրաստանի օրենսդրությանը և նախագահի նորմատիվ ակտերին<sup>49</sup>:

Նախարարությունը կառավարման մասնագիտացված մարմին է: Գրեթե բոլոր երկրներում հանրային կառավարման հիմքում ընկած է նախարարական համակարգը, որը կառուցվում է, որպես կանոն, ճյուղային և ծրագրանպատակային սկզբունքներով՝ այն նպատակով, որպեսզի ընդգրկի պետական կառավարման կարևորագույն ոլորտները և հասարակական զարգացման հիմնական ուղղությունները:

<sup>47</sup>Постсоветский Южный Кавказ. Библиография и обзор публикаций по социальным и политическим наукам. М., 2002. с. 187.

<sup>48</sup>Очерки политической экономии посткоммунистического капитализма (Опыт Грузии). Папаева В.Г., Беридзе Т.А. М., 2005. с. 151.

<sup>49</sup><http://unmepecno.ru/gruziya/index.php>

ճյուղային սկզբունքը թույլ է տալիս ստեղծել մասնագիտացված կառավարչական ապարատ հասարակական կյանքի այն ոլորտներում, որոնք կառավարությունը համարում է իրավական կարգավորման մշտական օբյեկտ. հնարավորություն է տալիս համախմբել տարբեր ինստիտուտներ կառավարչական միասնական ոլորտի համակարգում:

Արևմտյան կառավարման տեսության համապատասխան՝ յուրաքանչյուր նախարարության խնդիրն է իշխանության իրագործումը, կառավարումը և միջամտումը, այսինքն՝ կառավարման օբյեկտների գործունեության ուղղվածության և կազմակերպման փոփոխությունը: Այդ հարցերի լուծման համար նախարարությունն իր կազմում պետք է ունենա կառավարման կենտրոն՝ նախարար, որակավորված կառավարչական անձնակազմ և ֆինանսական միջոցներ, որոնք նախատեսված են բյուջեով: Այս ամենը միասին թույլ են տալիս նախարարությանը արդյունավետ գործել և իրագործել լիազորությունները:

Չնայած նախարարությունների գործունեության ոլորտների բազմազանությանը՝ դրանց գործունեության մեջ կարելի է գտնել շատ ընդհանրություններ: Արևմտյան տեսաբանները սովորաբար առանձնացնում են նախարարությունների հետևյալ ընդհանուր գործառույթները.

1. համագգային քաղաքականության փոխակերպումը կառավարչական որոշակի գործունեության,

2. նախարարության ծառայությունների կառավարում (բյուջեի կազմում, անձնակազմի ընտրություն և առաջխաղացում, նախարարության կազմակերպում՝ դրա կառուցվածքի որոշում, նախարարության իրավասությունների բաշխումը դրա կառուցվածքային ստորաբաժանումների միջև),

3. կոորդինացում (առօրյա կառավարչական գործունեության կարգավարում, այն գերատեսչությունների գործունեության կոորդինացում, որոնք չեն մտնում նախարարության կազմի մեջ, բայց պարտավոր են իրենց գործունեությունը որոշ մասով համաձայնեցնել տվյալ նախարարության հետ, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ոլորտների փոխհարաբերությունների կոորդինացում),

4. Վերահսկիչ գործառույթը իրացվում է երեք հիմնական ձևով՝ տեսչություններ, որոնք պարբերաբար գնահատում են վարչական հատվածի գործունեության արդյունավետությունը և սահմանում են համապատասխան անձանց պատասխանատվությունը աշխատանքներում թերությունների համար, բրգածն հսկողություն, երբ վերադասը կարող է միջամտել ենթակայի աշխատանքներին, ֆինանսական հսկողություն, որն իր մեջ ներառում է իրենց մեջ ֆինանսական հետևանքներ պարունակող ծառայողական բոլոր հարաբերությունները<sup>50</sup>:

Ներկայումս գոյություն ունեցող նախարարությունները պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի.

- ❖ Վարչաքաղաքական ոլորտում ստեղծվող նախարարություններ (պաշտպանության, ներքին գործերի և այլն),
- ❖ Ֆինանսատնտեսական և տնտեսության ոլորտներում ստեղծվող նախարարություններ (էկոնոմիկայի, ֆինանսների, արդյունաբերության, առևտության, գյուղատնտեսության, տրանսպորտի և այլն),
- ❖ սոցիալ-մշակութային ոլորտներում ստեղծվող նախարարություններ (կրթության, մշակույթի, առողջապահության և այլն)<sup>51</sup>:

Վարչարարության մասին գրականության մեջ մշակված են նախարարությունների տարբեր դասակարգումներ: Օրինակ, առանձնացնում են ճյուղային կառավարման նախարարություններ, որոնք կառավարում են իրենց ենթակայության տակ գտնվող օբյեկտները (ներգետիկայի, տրանսպորտի և այլն), և ֆունկցիոնալ կառավարման նախարարություններ, որոնք իրացնում են կառավարման որոշակի գործառույթներ (պլանավորման, ֆինանսների և այլն), ինչպես նաև սուպերնախարարություններ, որոնք զբաղվում են մի շարք ճյուղերի կառավարմանը որոշակի ոլորտում կամ բնագավառում (էկոնոմիկայի նախարարություն) և այլն:

Կախված, թե կազմավորման հիմքում ինչ սկզբունքներ են դրված՝ առանձնացվում են նախարարություններ՝ ստեղծված՝

- ❖ պրոբլեմատիկ-նպատակային սկզբունքով (էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, ներքին գործերի և այլն),

<sup>50</sup> Куприяшин Г.Л., Соловьева А.И., Государственный менеджмент. М. 2004. с. 53.

<sup>51</sup> Министерства и ведомства: учеб. Пособие/под. ред. А. Н. Козырина и Е.К. Глушко. – М.: Норма, 2008, с. 39.

- ❖ ճյուղային սկզբունքով (տրամադրություն, էներգետիկայի և այլն),
- ❖ «սպասարկվող հաճախորդների» սկզբունքով (սպառողների, վետերանների, երիտասարդության հարցերով գրաղվող, փոքր բիզնեսի և այլն),
- ❖ տարածքային սկզբունքով (օրինակ, Մեծ Բրիտանիայում Ուելսի գործերով նախարարությունը և այլն)<sup>52</sup>:

Նախարարությունների օպտիմալ թվի որոշումը, ինչպես ցույց է տալիս պետությունների մեջ մասի փորձը, բավականին բարդ գործընթաց է: Բոլոր տատանումների հետ մեկտեղ նկատվում է դրանց թվի համընդիանուր կրծատում: Շատ քիչ երկրներում է, որ նախարարությունների թիվը երկար ժամանակ անփոփոխ է մնում: Առանձին դեպքերում հնարավոր է ժամանակավոր նախարարության ստեղծում՝ որոշակի հարցի լուծման համար, որից հետո այն լուծարվում է: Մի շաբթ երկրներում նախարարական համակարգում փոփոխությունները կապված են պետության և հասարակության առջև ծառացած ավելի սուր և արդիական հարցերի հետ: Օրինակ, Նոր Զելանդիայում ստեղծված են բիոանվտանգության նախարարություն և կլիմայի փոփոխության նախարարություն, Կոտ դե Իվուարում՝ ՄԻԱՎ-ԶԻԱՅ-ի դեմ պայքարի նախարարություն, Կուբայում՝ շաքարի արդյունաբերության նախարարություն, Բոլիվիայում և Բրազիլիայում՝ ածխաջրերի նախարարություն, Ճնդկաստանում՝ ցեղերի նախարարություն, Անդորրայում՝ տարածքային պլանավորման նախարարություն<sup>53</sup>, Լատվիայում ստեղծվել է էլեկտրոնային կառավարման նախարարի պաշտոն և այլն:

Նախարարության գլուխը նախարարն է: Նախարարը իրագործում է ինչպես քաղաքական, այնպես էլ վարչական գործառույթներ: Որպես կառավարության անդամ, նա օժտված է քաղաքական իշխանությամբ, իսկ որպես նախարարության ղեկավարի կարգավիճակում՝ վարչական իշխանությամբ: Մի շաբթ երկրներում փորձ է

<sup>52</sup> Министерства и ведомства: учеб. Пособие/под. ред. А. Н. Козырина и Е.К. Глушко. – М.: Норма, 2008, с. 88.

<sup>53</sup> Եվրոպական այս փոքրիկ պետությունը, որը տեղակայված է Ֆրանսիայի և Իսպանիայի սահմանային մասում, չունի տարածքային բավարար ռեսուրսներ կենսագործունեության համար, այդ պատճառով էլ մշտապես խնդիր ունի հայթայթել լրացուցիչ տարածքներ՝ բնակության և գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար (Власть. 2006.24 июля. С. 68):

արվել առանձնացնել քաղաքական դեկավարումը և օպերատիվ կառավարումը նախարարի և գլխավոր (մշտական) քարտուղարի միջև<sup>54</sup>:

Երբեմն կառավարությունում առանձնացվում է կարգավորող նախարարի կամ գլխավոր նախարարի պաշտոնը, որը կկարգավորի և կղեկավարի բնույթով միմյանց «հարազատ» նախարարությունները:

Զգալի առանձնահատկություն ունի «պետական նախարար» հասկացությունը. Ֆրանսիայում դա պատվավոր կոչում է, որը բնորոշում է այդ անձի գլխավորությունը մյուս նախարարների շրջանակում, Մեծ Բրիտանիայում՝ դա նախարարի առաջին տեղակալն է, ճապոնիայում՝ ոչ պորտֆելային նախարարը, Նորվեգիայում՝ վարչապետը:

Չնայած տարբեր երկրներում նախարարությունների կազմավորման տարբերություններին՝ դրանց կառուցվածքում կարելի է առանձնացնել որոշակի ընդհանուր տարրեր՝ աշխատակազմ, ներքին ստորաբաժանումներ (դեպարտամենտներ, բաժիններ, սեկցիաներ, բյուրոներ), խորհրդատվական բնույթի կոմիտեներ և խորհուրդներ, տեսչություններ և տարածքային ծառայություններ:

*Աշխատակազմը* նախարարի անձնական շտաբն է: Այն կազմված է անձամբ նախարարի կողմից հավաքագրված աշխատակիցներից՝ աշխատակազմի ղեկավար, հասարակության հետ կապերի համար պատասխանատու աշխատակից, տեխնիկական տարբեր խորհրդատուններ և այլն: Աշխատակազմի անդամները հատուկ վստահություն ունեն նախարարի մոտ և խիստ կապված են նրա հետ. նրանք պահպանուն են իրենց աշխատանքը այնքան ժամանակ, որքան հարմար կգտնի նախարարը, սովորաբար նախարարի հրաժարականի հետ մեկտեղ հեռանում է նաև աշխատակազմը, եթե, իհարկե, հաջորդ նախարարը նպատակահարմար չգտնի թողնել նախորդ աշխատակազմը:

Նախարարության կառուցվածքում առանձնացնում են ուղղահայաց, հորիզոնական և տեխնիկական ծառայություններ:

<sup>54</sup>Անգլոսաքսոնական իրավունքի երկրներում համապատասխան պաշտոնը կոչվում է «մշտական քարտուղար»: Յենց անվանումից պարզ է դառնում, որ տվյալ պաշտոնը անփոփոխ է քաղաքական առաջնորդ՝ նախարարի հրաժարականի դեպքում:

*Ուղղահայաց ծառայությունները* (կոչվում են նաև արտադրական կամ ճյուղային) իրականացնում են նախարարության հիմնական գործառույթների իրականացմանն ուղղված գործունեություն:

*Յորիզոնական ծառայությունները* (գործառութային) իրականացնում են աջակցող գործունեություն նախարարության հիմնական գործառույթները իրականացնելու համար:

Տեխնիկական ծառայություններն են՝ պահոցները, փաստաթղթերի կանոնակարգմանք, ալանավորմամբ, վիճակագրությամբ զբաղվող ստորաբաժանումները:

Նախարարությունների ներքո ստեղծվում են օժանդակող զանազան մարմիններ՝ խորհուրդներ և կոմիտեներ, ինքնավար բաժիններ: Որպես կանոն դրանք իրագործում են տեխնիկական-խորհրդատվական գործառույթներ (եզրակացություններ, առաջարկություններ և այլն):

Գրեթե յուրաքանչյուր նախարարություն ունի հսկողության իր մարմինները (ֆինանսական տեսուչներ, ազգային կրթության տեսուչներ, զինված ուժերի հսկիչներ և այլն): Դրանց գործունեությունը, որպես կանոն, կառավարում է նախարարը:

Որոշ նախարարություններ, բացի կենտրոնականից, ունենում են նաև տարածքային ապարատ և գրասենյակներ տեղերում: Այսպես, օրինակ, ճապոնիայում Բարեկեցության, աշխատանքի և առողջապահության նախարարության շրջանակներում ստեղծված են բժշկակական մի քանի տեղական ստորաբաժանումներ: ԱՄՆ-ում նահանգային օրենքները կյանքի կոչելու նպատակով տեղերում ստեղծվում են դեպարտամենտների տարածքային ստորաբաժանումներ, որոնք ամերիկյան գրականության մեջ ստացել են «դաշտային ստորաբաժանումներ» անվանումը:

Արևմտյան տեսաբանները նախարարի իրավունակությունը դիտարկում են՝ ելելով նրա իրավասությունների շրջանակից: Առանձնացնում են մի քանի հիմնական ուղղություններ որոնցով նախարարն իրացնում է իր լիազորությունները:

- ❖ նախարարն ընդունում է ընդհանուր նշանակության որոշումներ,
- ❖ նախարարն ղեկավարում է իր նախարարության աշխատակիցներին,
- ❖ նախարարն ընդունում է անհատական վարչական որոշումներ,
- ❖ նախարարն իրականացնում է լիազորություններ ֆինանսական ոլորտում,

❖ նախարարը ներկայացնում է պետությունն այն բոլոր հարցերի մասով, որոնք առնչվում են իր նախարարությանը<sup>55</sup>:

Նախարարն իրավունք ունի իր լիազորությունների մի մասը պատվիրակել նախարարության կենտրոնական ծառայությունների ղեկավարներին կամ պատասխանատու այլ աշխատակիցներին:

**Գերատեսչություններ:** Հասարակական կյանքի այն ոլորտներում, որոնք ընդունված չեն նախարարությունների մեջ, ստեղծվում են բազմաթիվ և բազմազան գերատեսչություններ:

«Գերատեսչություն» հասկացությունը բնութագրական չէ մի շարք երկրների համար. այն հանդիպում է Գերմանիայի, Չինաստանի, Ռուսաստանի և այլ երկրների վարչական իրավունքում, որոնց իրավական համակարգերը ձևավորվել են սովետական իրավունքի ազդեցության ներքո: Արտասահմանյան գրականության մեջ, որպես կանոն, պետական կառավարման կենտրոնական տարբեր մարմինների մատնանշման համար չի օգտագործվում մեկ միասնական եզր, այդ իսկ պատճառով էլ իրավաբանական գրականության մեջ չենք հանդիպում գերատեսչության միասնական, համընդհանուր սահմանման: Ոմանք գերատեսչությունների շարքին են դասում նախարարությունների ենթակայության տակ գտնվող կառավարման մարմինները: Մյուսներն այս հասկացության մեջ ներառում են այն գերատեսչությունները, որոնք կազմում են եկրի ղեկավարի, վարչապետի, կառավարության աշխատակազմերը, ինչպես նաև նախարարական խորհուրդները և կառավարական կոմիտեները:

Միանշանակ չէ նաև «գերատեսչություն» և «նախարարություն» հասկացությունների տարանջատումը: Տարածված է այն կարծիքը, որ գերատեսչություն ստեղծվում է այն ոլորտում, որն ընդգրկված չէ նախարարության կառավարման համակարգի մեջ: Հանդիպում է նաև այլ տեսակետ, որի կողմնակիցները գտնում են, որ «գերատեսչություն» հասկացությունն իր մեջ ընդգրկում է ինչպես նախարարությունները, այնպես էլ հենց բուն գերատեսչությունները, որոնք չունեն նախարարության կարգավիճակ: Այս դեպքում նախարարությունը դիտարկվում է որպես գերատեսչություն, որի գլուխը նախարարն է, ով կառավարության անդամ է:

<sup>55</sup>Министерства и ведомства: учеб. Пособие/под. ред. А. Н. Козырина и Е.К. Глушко. – М.: Норма, 2008, с. 87.

Որոշ գերատեսչություններ կարող են ստեղծվել նախարարությունից անջատվելու միջոցով՝ առանձնանալով դրանցից կամ ստանալով զգալի ինքնուրույնություն և դառնալով անկախ վարչական միավոր՝ համարելով հասարակական ապակենտրոնացված աղմինիստրացիայի մարմինների շարքը<sup>56</sup>:

Գերատեսչությունների դասակարգումը բարդ է դրանց մեջ քանակի և պատվիրակված բազմաթիվ լիազորությունների պատճառով: Ենիշտ է, գերատեսչությունների թվի ավելացումը տանում է նեղ մասնագիտացման և հեշտացնում է հասարակական հարաբերությունների կառավարումը, սակայն դա ունի նաև իր բացասական կողմը՝ այն բարդացնում է դրանց կառավարելիությունը: Օրինակ, Գերմանիայում դաշնային մակարդակում այժմ գործում են հետևյալ գերատեսչությունները՝ հիմնական օրենքի պաշտպանության, ֆինանսների դաշնային գերատեսչություն, բեռնափոխադրումների, առողջապահության, թռիչքների անվտանգությունն ապահովող, վիճակագրական, ճառագայթումից պաշտպանության, ապահովագական, շրջակա միջավայրի դաշնային գերատեսչությունները և այլն:

Մեծ Բրիտանիայում կենտրոնական խոշոր գերատեսչություններից են՝ տեղեկատվության կենտրոնական գերատեսչությունը, իրավաբանական հարցերով դեպարտամենտը, պետական եկամուտների գերատեսչությունը, գրադարանների և մշակույթի գործերով գերատեսչությունը և այլն: Գերատեսչությունը գլխավորում է մասնագետ պաշտոնյան, որը, որպես կանոն, չունի նախարարի կարգավիճակ: Առանձին դեպքերում գերատեսչության ղեկավարին կարող է տրվել նախարարի կոչում:

Չինաստանում ստեղծվել են մեծ թվով գերատեսչություններ: Գործում են պետական չորս կոմիտե՝ զարգացման և հեղափոխությունների, ազգերի գործերով,

<sup>56</sup>Նման փորձը մեծ բանավեճերի պատճառ է դառնում արևմուտքում: Օքսֆորդի համալսարանի քումազ քոլեջի քաղաքագիտության դասախոս ն. Օուենը գրում է. «Եթե այդպիսի մարմինները գրաղվում են ոչ բարդ և ոչ այնքան կարևոր գործերով, ապա դրանց գոյությունը արդարացված է, սակայն այժմ գործում են այնպիսի մարմիններ, որոնք ոչ են անձնագրեր և վարորդական իրավունք են տրամադրում, այլ կառավարում են Սիացյալ Թագավորության ուղղիչ հաստատություններ և վճարում են սոցիալական հատկացումներ... Կառավարությունը հավաստիացնում է, որ նախարարները պատասխանատու են իրենց գերատեսչությունների աշխատանքի համար՝ ներառյալ աշխատանքն ինքնուրույն իրականացնող հաստատությունները: Սակայն, քանի որ նախարարներն այլևս չեն մասնակցում կարևորագույն խնդիրների լուծմանը և նրանց միջամտությունը դրանց աշխատանքին կրում է ոչ կայուն բնույթ, գործնականում նրանց պատասխանատվությունը մեծ չէ: Ինչպես նաև, երբ պառլամենտը դժվարությամբ է կարողանում իմանալ իրեն հետաքրքրող հարցերին պատասխանները»: (Օյզ Հ. Պոնյա բրիտանские государственные институты Б/м., 2000, с. 43):

գիտության, տեխնիկայի և արդյունաբերության պաշտպանության, բնակեցման և ալանային ծնելիության:

Նոր գերատեսչությունների ձևավորման հարցը, դրանց իրավասությունները և կառուցվածքները, կախված ազգային օրենսդրությունից, կարող են կարգավորվել.

1. համապատասխան ճյուղի նախարարի հրամանագրերով,

2. կառավարության որոշումներով,

3. հատուկ օրենքներով (Գերմանիայում, օրինակ, գերատեսչությունները ստեղծվում են հատուկ օրենքներով՝ որպես բարձրագույն ինքնուրույն հաստատություն համապատասխան դաշնային նախարարության ներքո):

Հասարակական կենտրոնական ադմինիստրացիայի կազմի մեջ մտնող գերատեսչությունները կարող են ենթարկվել երկու տարբերակով.

❖ գերատեսչությունը ենթարկվում է տվյալ ճյուղի համար պատասխանատու նախարարին. գերատեսչության ղեկավարը կարող է նաև ունենալ նախարարի տեղակալի պաշտոն,

❖ գերատեսչությունը հանվում է նախարարի վարչական ենթակայությունից և ուղղակիորեն ենթարկվում է կառավարությանը, իսկ եթե գերատեսչության ղեկավարը չունի նախարարի պաշտոն, ապա կառավարության անդամներից մեկի վրա դրվում է պատասխանատվություն՝ ղեկավարել տվյալ գերատեսչության աշխատանքները:

Առաջին դեպքում նախարարը ղեկավարում է տվյալ ճյուղը ամբողջությամբ, իսկ երկրորդ դեպքում նա ղեկավարում է միայն նախարարությունը, իսկ տարբեր գերատեսչություններ համարվում են նախարարությունից անկախ և ենթարկվում են ուղղակիորեն կառավարությանը<sup>57</sup>:

<sup>57</sup> Министерства и ведомства: учеб. Пособие/под. ред. А. Н. Козырина и Е.К. Глушко. – М.: Норма, 2008, с. 191.

### 1.3 Էլեկտրոնային կառավարության ներդրման միջազգային փորձը:

#### «Պետական նոր կառավարում»:

1980-2000թթ. տեղի ունեցան մի շարք հեղաշրջումներ պետական կառավարման ոլորտում, որոնք իրենց ազդեցությունն ունեցան տարբեր երկրների ինչպես պետական մարմինների կառուցվածքների, այնպես էլ դրանց գործառութային մեխանիզմների վրա: Մի շարք երկրներում այդ հեղաշրջումները սկիզբ առան որպես ներպահպանողական սոցիալ-տնտեսական քաղաքականության մի մաս՝ տնտեսության պետական կարգավորման սահմանափակմանն ուղղված (Մեծ Բրիտանիա), այլ երկրներում այդ հեղաշրջումները պետական սեկտորին հասան արդեն նեռպահպանողական ալիքի անկման ժամանակ (ԱՄՆ): Վերջապես, որոշ երկրներ ներգրավվեցին այդ հեղաշրջումների մեջ կառավարական դիֆուզիայի շնորհիվ (Գերմանիա): Այս հեղաշրջումների մեջ մասը թելադրվել է պետական կառավարման նոր գաղափարախոսության կողմից, որն ստացել է «պետական նոր կառավարում» անվանումը (New Public Management)<sup>58</sup>:

Գաղափարախոսության ծնունդը հիմնականում կապում են ԱՄՆ-ում հեղաշրջումներ ոգեշնչողներ Դ.Օսբորնի և Թ. Գեբլերի «Պետական կառավարման վերակազմավորումը. ինչպես է ձեռնարկատիրական ոգին վերափոխում պետական սեկտորը» գրքի հետ<sup>59</sup>:

Նմանատիպ բարեփոխումները որոշ երկրներում սկսվել են ավելի վաղ ժամանակներում, բայց տվյալ գրքի հրատարակումը դարձավ մի սահման՝ առանձին երկրների բարեփոխումների և միջազգային բարեփոխական շարժման միջև: Այս գրքի հեղինակները ձևակերպել են տասը սկզբունք, որոնց վրա պետք է հիմնվի պետական կառավարման նոր տիպը.

1. «ավելի շատ աշխատել ղեկով, քան թիերով»,
2. ավելի շատ լիազորել, քան ծառայել,

<sup>58</sup>New Public Management-ը որոշ աշխատություններում բարգմանվում է որպես «Պետական նոր մենեջմենք»:

<sup>59</sup>Osborn D, Gaebler T. Reinventing Government: How the Entrepreneurial Spirit is transforming the Public Sector. – Addison. – Wesley. 1992. p. 21.

3. ծառայությունների բաշխման համակարգում մրցակցության սկզբունք ներդնել,
4. վերակազմավորել այն ձեռնարկությունները, որոնց գործունեությունը խստորեն կանոնակարգված է,
5. ավելի շատ ներդնել վերջնական արտադրության մեջ, քան միջանկյալի,
6. ընդառաջել սպառողի պահանջներին, այլ ոչ թե բյուրոկրատիային,
7. աշխատել ավելի շատ, քան ծախսել,
8. աշխատել կանխարգելել խնդիրները, այլ ոչ թե լուծել դրանք,
9. բրգածն կառուցվածքներից անցում կատարել թիմային աշխատանքներին,
10. փոփոխությունները կարգավորել շուկայական մեխանիզմների միջոցով:

Կառավարությունների մեջ մասը, որոնք իրականացրել են բարեփոխումներ արձանագրել են դրանց նմանատիպ նպատակները, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. պետական ծախսերի նվազեցում, ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծում,
2. ղեկավարող էլիտայի կողմից հասարակության կառավարելիության բարձրացում, օրինական քաղաքականության իրականացման դիմադրության հաղթահրում և մի շարք ծրագրերի կրճատում (առաջին հերթին սոցիալական) հետաքրքրված շրջանակների կողմից,
3. որպես գործատուի՝ պետության գործառույթների ավելի կոպիտ իրագործում. պետության վերափոխումը պատասխանատու գործատուի, համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բավարար քանակի ներգրավումը՝ աշխատուժի վրա կատարվող ամբողջական ծախքերի սահմանափակումով կամ կրճատումով,
4. մասնավոր հատվածի և բնակչության կողմից իշխանության հանդեպ վերահսկողության ամրապնդում և ծառայությունների մատուցման որակի բարձրացում:

Տեխնիկապես պետական նոր կառավարումը իրագործվում է կառավարչական գործընթացի մասնակիցների միջև պայմանագրային հարաբերությունների անցնան միջոցով:

Պետական նոր կառավարման գաղափարախոսությունը մեծապես արտահայտվել է Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և այլ երկրների բարեփոխսական ծրագրերում, այսինքն, վեստմինստերյան մոդելի երկրներում: Բարեփոխումների սկիզբը թելադրվում էր ֆինանսական ճգնաժամից դուրս գալու ցանկությամբ, որի մեջ Մեծ Բրիտանիան հայտնվել էր 1970-ականների կեսերին, Նոր Զելանդիան՝ 1980-ականների կեսերին: Ավստրալիայում բարեփոխումների համար հիմք էր 1983թ. լեյբորիստական կառավարության իշխանության հանձնումը, որը ցանկանում էր իրականացնել մի շարք քանկարժեք սոցիալական վերափոխումներ՝ բյուջեի վրա հավելյալ ծանրաբեռնվածություն չդնելով<sup>60</sup>:

Պետական նոր կառավարման ռազմավարության ամենաարդյունավետ մեխանիզմներից մեկը դարձավ **Էլեկտրոնային կառավարությունը** (e-Government), քանի որ այն համապատասխանում էր պետական նոր կառավարման բոլոր սկզբունքներին: «Էլեկտրոնային կառավարությունը» պետական իշխանության մարմինների գործունեության կազմակերպման նոր ձև է, որը տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների շնորհիվ ապահովում է կազմակերպություններին և քաղաքացիներին մատուցվող պետական ծառայությունների օպերատիվության և հարմարավետության որակական նոր մակարդակ, ինչպես նաև ապահովում է տեղեկատվություն՝ պետական մարմինների գործունեության արդյունքների մասին:

«Էլեկտրոնային կառավարության» ստեղծումը նեղ իմաստով նշանակում է պետական համակարգում ստեղծել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, որը հիմնած կլինի ամբողջ երկրի մասշտաբով կառավարական բոլոր գործընթացների ավտոմատացման վրա, որի նպատակը կլինի պետական կառավարման արդյու-

<sup>60</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 439.

նավետության բարձրացումը և սոցիալական կոմունիկացիաների ծախքերի կրճատումը հասարակության յուրաքանչյուր անդամի համար<sup>61</sup>:

Ելեկտրոնային կառավարման պատմության արմատները հասնում են մինչև 1970-ականները, սակայն իրական ուրվագծեր այն ստացել է միայն 2000-ականների սկզբերին: Դրա իրականացման համար անհրաժեշտ նախապայմանները ստեղծվել են 1990-ականների առաջին կեսերին համացանցի բուռն զարգացման և 1990-ականների երկրորդ կեսերին անհատ ձեռնարկատիրության նոր ոլորտների՝ էլեկտրոնային առևտորի և էլեկտրոնային բիզնեսի ստեղծման շնորհիվ: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը պետական կառավարման համակարգերում մի շարք երկրներում իր սահուն ընթացքն ունեցել է արդեն 1990-ականներին, սակայն շուտով պարզվեց, որ էլեկտրոնային կառավարությունը ոչ թե նոր տեխնոլոգիա է, այլ մի անբողջ հայեցակարգ, որը պահանջում է համակարգային վերափոխումներ և պետական կառավարման համակարգում նոր մոդելների ներդրում<sup>62</sup>:

Էլեկտրոնային կառավարության ծրագրերի մշակողները հիմնականում հետապնդում էին նմանատիպ նպատակներ: Դրանք են.

1. պետական ծառայությունների կողմնորոշում դեպի քաղաքացիների պահանջմունքները,
2. պետության և դրա ծառայությունների հասանելիության ապահովում,
3. պետական ծառայությունների հասանելիության մասով սոցիալական հավասարության իրագործում,
4. տեղեկատվության ավելի արդյունավետ օգտագործում,
5. էլեկտրոնային բիզնեսի զարգացում և շուկայական սկզբունքների հիման վրա նորարարությունների խթանում<sup>63</sup>:

Էլեկտրոնային կառավարությունը տեղեկատվական հասարակության կարևորագույն բաղադրիչներից է, անցումը որին սկսվեց տնտեսապես ավելի զարգացած երկրներում: Սակայն միջազգային հասարակությունում չկա համընդհանուր ընդուն-

<sup>61</sup>Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие / М.А. Абросимова. – М.: КНОРУС, 2011. с. 38.

<sup>62</sup>Мэннинг Н., Парисон Н. Реформа государственного управления: международный опыт. М., 2003. с. 79.

<sup>63</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 459.

ված ռազմավարական նպատակ: Առանձին երկրների քաղաքական էլիտաները տարբեր կերպ են պատկերացնում այն, ինչն էլ իր արտացոլումն է գտնում տարբեր նախագծերի մշակման մեջ:

Օրինակ, ԱՄՆ-ի համար հասարակությունը գլոբալացման գործընթացներն ավարտող մեխանիզմներն են, որի արդյունքը կլինի երկրագնդի մասշտաբով տնտեսական և քաղաքական իշխանությունների օրինականացումը, որը հիմնված կլինի ԱՄՆ-ի վերագգային կորպորացիաների վրա: Սրա հետ կապված ամերիկյան ծրագրերում ավելի շատ ուշադրություն է դարձվում էլեկտրոնային առևտուրի զարգացմանը, ինչպես այլ երկրների և տարածաշրջանների, այնպես էլ պետական և մասնավոր հատվածներում ամերիկյան նորարարությունների առաջխաղացմանը:

Եվրոպական Միության համար տեղեկատվական հասարակությունն առաջին հերթին Եվրոպայի բազմազգ հարստության պահպանման միջոց է: Այդ իսկ պատճառով էլ էլեկտրոնային կառավարությունների Եվրոպական ծրագրերն ուղղված են անհատի խնդիրների լուծմանը և պետական ծառայությունների հասանելիության ապահովմանը բոլոր քաղաքացիների համար:

ճապոնիայում էլեկտրոնային կառավարության կառուցումը նպատակ ունի ամրապնդել հասարակության տարբեր շերտերի միջև կապերը, որն ընկալվում է որպես միասնական կորպորացիա: Այդ իսկ պատճառով ճապոնական նախագծերը ենթադրում են պետության, հասարակության և բիզնեսի միջև հավասարակշռության հաստատում, ինչպես նաև միջազգային ասպարեզում երկրի մրցունակության բարձրացում:

Էլեկտրոնային կառավարության ընդհանուր հայեցակարգը, ինչպես նաև հիմնական սկզբունքները, ստացել են էլեկտրոնային կառավարման ճարտարապետություն անվանումը: Այն երկրներում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը պետական կառավարման մեջ ընթացել է ավելի ակտիվորեն, ստեղծվել են հատուկ ստորաբաժանումներ, որոնք պատասխանատու են եղել համապետական մակարդակում էլեկտրոնային կառավարման ճարտարապետության մշակման համար (Դաշնային ճարտարապետության մշակման նախագծի կառավարման գրասենյակը ԱՄՆ-ում՝ Federal Enterprise Architecture Project Management Office):

Այս մարմինների կողմից մշակված նախագծերն, իհարկե, ունեն տարբերություններ, սակայն, որպես կանոն, ունեն հետևյալ ընդհանուր բաղադրիչները:

❖ Պետական գործառությների ճարտարապետություն: Այս բաղադրիչը հարկավոր չէ ստեղծել Օ-ից: Սակայն դրա ինտեգրումը «Էլեկտրոնային կառավարման» ճարտարապետության մեջ պահանջում է էլեկտրոնային վերակառուցում, ինչն իր արտացոլումն է ստացել պետական նոր կառավարման ոճով արված վարչական միշտք բարեփոխումներում:

❖ Ծառայությունների ճարտարապետություն: Սա իր մեջ ներառում է գործառութային մեխանիզմներ, որոնց օգնությամբ տեղի է ունենում պետական գործառությների էլեկտրոնայնացումը՝ պորտալներ, սերվերներ, կիոսկներ և այլն:

❖ Տվյալների ճարտարապետություն: Սա իր մեջ ներառում է էլեկտրոնային փաստաթղթերի, բազաների կառավարման համակարգերի և այլ ստանդարտների մշակում:

❖ Տեխնոլոգիական ճարտարապետություն: Սրա տակ հասկացվում է տեխնոլոգիական տարբեր ստանդարտների և արձանագրությունների, օրինակ, ծրագրային ապահովում, կոմունիկացիաներ և այլն: Այն երկրներում, որոնք առաջատար են նկարագրված հայեցակարգի իրագործման գործընթացում, արդեն մշակվել են ստանդարտների համակարգեր՝ տեղեկատվական մոդելների տեսքով (SAGA՝ Գերմանիայում, e-GIF՝ Մեծ Բրիտանիայում, TRM՝ ԱՄՆ-ում)<sup>64</sup>:

Մեծ Բրիտանիայում մշակվել է էլեկտրոնային կառավարության ճարտարապետության հետաքրքիր մեթոդ, որի հիմնական բաղադրիչներն են.

1. Կառավարական պաշտպանված ինստիտուտներ, որը թույլ է տալիս պետական տարբեր մարմինների միջև իրականացնել փոխգործողություններ անվտանգ ռեժիմով:

2. Կառավարական կենտրոնական ukonline.gov.com կայքը, որը քաղաքացիներին ապահովում է մուտք դեպի պետական տեղեկատվություն և ծառայություններ: Պորտալի կառուցվածքը չի կրկնում պետական ապարատի կառուցվածքը՝ տեղեկատվությունն այնտեղ տեղակայված է փնտրման հարմարավետության սկզբունքով:

<sup>64</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 351.

3. Կառավարական gateway.gov.com կայքը, որն իրենից ներկայացնում է թլուկ, որն իր մեջ միավորում է տեղեկատվական տարբեր համակարգեր և իրականացնում է փոխադրակցություն համակարգի մյուս երկու բաղատրատարերի միջև: Մուտքն ունի հնարավորություն աստիճանաբար ավելացնել մատուցվող ծառայությունները և ապահովում է օգտվողների և պետական մարմինների միջև գործարքների անվտանգ իրականացում:

Պետական ապարատի աշխատակիցների աշխատանքը հեշտացնելու և օգնելու նպատակով թողարկվում են հատուկ ուղեցույցեր:

Ելեկտրոնային կառավարության մոդելը, որի վրա սկսել են հիմնվել երկրների մեծամասնությունում դրա մշակողները, վերցված է մենեջմենթից և ենթադրում է սոցիալական տարբեր շերտերի ներկայացումը «սթեյքհոլդերների» խմբերի տեսքով, որոնց միջև փոխհարաբերությունները ներկայացվում են բիզնեսում արդեն փորձարկված սխեմայով.

Ա. «Պետությունից պետություն» (government to government) կամ «օ-վարչարություն»: Այս սխեման նկարագրում է ներքին պետական-վարչական համակարգերի հատվածը: Երբեմն այն հասկացվում է ավելի լայն իմաստով, և այդ դեպքում սխեման բաղկացած է 2 մասից՝ ինքնին պետությունից պետություն հասկացությունը նկարագում է միջկառավարական, միջպետական և միջշրջանային կապերը, մինչդեռ «պետությունից աշխատակիցն» (government to employee) իրենից ներկայացնում է պետական հատվածի ներքին գործընթացների հեշտացում և արդյունավետության բարձրացում:

Բ. «Պետությունից բիզնես» (government to business) կամ «օ-հասարակություն»: Այս սխեման նկարագրում է ծառայությունների այն հատվածը, որոնք մատուցում է պետությունը բիզնեսին: Պետական նոր կառավարման բարեփոխողներն այս հատվածը տեսել են ոչ միայն միակողմանի (government to business, բայց ոչ business to government), այլ նաև նախատեսել են տարատեսակ գործընթացների արագացում, էժանացում և հեշտացում, որոնք ավելի անհրաժեշտ են պետությանը՝ ձեռնարկատիրական գործունեությունը վերահսկելու համար: Պետության և բիզնեսի

փոխգործակցության ևս մեկ ձև դարձավ համացանցի միջոցով կատարվող գնում-ները:

Գ. «Պետությունից քաղաքացիներ» (government to citizen) կամ «օ-քաղաքացիներ» և «օ-ծառայություններ», որը նկարագրում է պետության և քաղաքացիների միջև փոխհարաբերությունները: Էլեկտրոնային կառավարառության հայեցակարգը ենթադրում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների ոչ միայն արագացում և հեշտացում (նախորդ սխեմայի նման), այլև ժողովրդավարական գործընթացներում քաղաքացիների մասնակցության ընդլայնում<sup>65</sup>:

Էլեկտրոնային կառավարության իրագործումը սովորաբար բաժանում են երեք փուլի:

1. Պետական վարչական կառուցվածքներում գործընթացների ներքին ինտենսիվացում և տեղեկատվայնացում: Այս փուլում համացանցում ստեղծվում են տարբեր նախարարությունների և գերատեսչությունների կայքեր, որոնք քաղաքացիներին տեղեկացնում են իրենց գործունեության մասին:

2. Քաղաքացիներին և բիզնեսին էլեկտրոնային ծառայությունների մատուցում: Գերատեսչական կայքերը դառնում են ինտերակտիվ, ձևավորվում են կենտրոնական կառավարչական պորտալներ, որոնք կոորդինացնում են քաղաքացիների և պետական ապարատի միջև էլեկտրոնային գործարքները:

3. Էլեկտրոնային կառավարության վերափոխումը տնտեսության զարգացման կարևոր մեխանիզմի:

Էլեկտրոնային կառավարության ծնավորման հետ կապվում են ինչպես լավատեսական սպասումներ, այնպես էլ որոշակի վախեր: Թե՛ քաղաքացիները, թե՛ բիզնեսը, թե՛ պետական կառույցները հույսով սպասում են բյուրոկրատական գործընթացների խոստացված հեշտացմանը և էժանացմանը: Ընթացող փոփոխությունների ամենաակնառու փոխակերպումը շատ երկրներում դարձել է «մեկ պատուհանի» սպասարկման մոդելը (one stop shop): Պետական տարբեր կառույցների միջև կապերի սպասվելիք ամրապնդումը պետք է իր հետ բերի պետական մարմինների ավելի կոորդինացված աշխատանքի: Նշվածի անխուսափելի հետևանքը կլինի պե-

<sup>65</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие /С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3 -е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 462.

տական կառուցվածքների և մեխանիզմների վերակառուցումը դեպի լավը: Ելեկտրոնային կառավարությունն իր հերթին պետք է նոր խթան հանդիսանա էլեկտրոնային առևտուի և բիզնեսի համար և, վերջին հաշվով, հանդիսանա կարևոր լծակ տնտեսական զարգացման համար: Այս նպատակով մի շարք երկրներում (Հոնկ Կոնգ, Սինգապուր, Չունաստան) արդեն իսկ գործի են դրվել վարչական կառուցների և մասնավոր բիզնեսի միջև համագործակցության նախագծեր (առևտորսինգ և այլն): Արդեն 1998թ. Ավստրալիայի Վիկտորիա նահանգում Բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պաշտպանության նախարարությունը փորձարկեց առանց թղթաբանության գնումների գործընթացը միջգերատեսչական ցանցի միջոցով: Ելեկտրոնային գնումների տեխնոլոգիան ակտիվորեն օգտագործվում է ԱՄՆ-ի Ընդհանուր ծառայությունների դեպարտամենտի կողմից, որում մեծ դեր է խաղում օն-line աճուրդների մեխանիզմը:

Գործընթացների և գործարքների սպասելի թափանցիկությունը թույլ կտա ավելի արդյունավետ պայքար մղել կաշառակերության դեմ: Մեծ հաջողությունների են հասել այս առումով Հնդկաստանի որոշ նահանգներում: Հարավային Կորեայում Սեուլ քաղաքի մակարդակով արդյունավետորեն գործում է քաղաքացիների դիմումների ընդունման մշտադիտարկման գործընթացը:

Պետական վարչարարության փոփոխությունները բիզնեսի և քաղաքացիների հետ կկրեն ցանցային բնույթ՝ կազմելով ընդհանուր համակարգ: Ելեկտրոնային կառավարության մշակողները ենթադրում են կառուցել այն «հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման» բիզնեսում արդեն փորձված սկզբունքների հիման վրա (Customer Relationship Management):

Լավատեսների կարծիքով էլեկտրոնային կառավարությունը հասարակությանը տալիս է իրական հնարավորություն ժողովրդավարության վերածննդի համար: Առաջին հերթին, քաղաքացիները վարչական գործընթացների նկատմամբ կստանան վերահսկողության համար իրական լծակներ: Երկրորդ, քաղաքացիները կկարողանան ազդել քաղաքական որոշումների ընդունման վրա ցանցային ֆորումներին մասնակցության միջոցով, ինչպես նաև իշխանության ներկայացուցիչների հետ ուղղակի կապերի միջոցով, որոնք իրականացվում են հատուկ պորտալների մի-

ջոցով: Օրինակ, որոշ երկրներում հատուկ կայքում կարելի է հարց տալ վարչապետին (սա սակայն դեռ չի նշանակում պատասխանի պարտադիր առկայություն): Վերջապես, էլեկտրոնային կառավարության կարևոր առավելությունը տեսնում են նրանում, որ դրա տեխնոլոգիաները հեշտությամբ արտահանվում են: Մասնագետների լուրջ մտահոգությունները կապված են «թվային անհավասարության» խնդրի հետ: Քանի որ պետական կառավարման համակարգի էլեկտրոնային ազգային համակարգում է համակարգչային ցանցերի միջոցով, հետևաբար քաղաքացին կկարողանա դիմել պետական մարմիններին միայն այն դեպքում, եթե ունի ցանցին միացված համակարգիչ և եթե ունի համապատասխան հմտություններ դրանից օգտվելու համար: Այս պայմաններում երիտասարդությունն ստանում է նկատելի առավելությունների նկատմամբ, հարուստները՝ աղքատների, քաղաքի բնակիչները՝ գյուղի բնակիչների, Արևոտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի զարգացած երկրները՝ երրորդ աշխարհի երկրների նկատմամբ: Որոշ երկրների կառավարություններ ձեռնարկել են որոշ միջոցառումներ «էլեկտրոնային անհավասարության» հաղթահարման համար: Օրինակ, Թայլանդում շեշտը դրված է հեռահար կրթության ծրագրերի զարգացման վրա, որի շրջանակներում գյուղական համայնքներին զինում են ժամանակակից համակարգչային տեխնիկայով: Նմանատիպ ծրագրեր իրագործվում են նաև Լիտվայում. ձեռնարկատերերի կողմից ֆինանսավորվող «Պատուհան դեպի ապագա» նախաձեռնությունը գյուղական համայնքներում բացում է անվճար ելք դեպի համացանց: Լիտվայի սոցիալական ապահովագրության կազմակերպությունները անվճար հիմունքներով թոշակառուներին սովորեցնում են օգտվել համակարգչից: Թայվանում հաջողությամբ իրականացվում է «էլեկտրոնային գյուղ» ծրագիրը, որը մեկ միասնական ցանցով իրար է կապում գյուղերի և գյուղական շրջանների 6500 բնակչի և ապահովում է ելք դեպի համացանց: Որոշ երկրներում (Մեծ Բրիտանիա, Սինգապուր, Հարավային Կորեա) քաղաքացիների հասանելիությունը դեպի պետական պորտալներ ապահովելու համար պատրաստում են համապատասխան հասարակական վայրերում հատուկ համակարգչային կետեր: Չնայած այս միջոցառումներին, կանխատեսումները հուսադրող չեն. էլեկտրոնային կառա-

վարման ծրագրերի ներդրմանը զուգահեռ նկատվում է «թվային անհավասարության» միտում, և դեռևս փոփոխություններ ակնկալելու հիմքեր չկան:

Ցանցային ալիքներով գաղտնի տեղեկատվության փոխանցման անհրաժեշտությունը, ինչպես նաև վարչական գործընթացներուն տվյալների համակարգչային բազայի օգտագործումը օրակարգային հարց է առաջ բերում՝ կապված թվայնացված տեղեկատվության անվտանգ փոխանցման և պահպանման հետ: Անվտանգության խնդիրն ունի երկու կողմ՝ իրավական և տեխնիկական: Մի շարք երկրներում արագորեն ձևավորվում է էլեկտրոնային կառավարության նորմատիվ իրավական բազան, ընդունվում են թվային ստորագրության մասին օրենքներ (Լիտվա՝ 2000թ., ԱՄՆ՝ 2002թ., Իտալիա՝ 2005թ.), գաղտնի տեղեկատվության փոխանցման կարգի և այլնիմասին օրենքներ: Տեխնիկական կողմն իր մեջ ներառում է տեղեկատվության ապարատային, ծրագրային և գաղտնագրային պաշտպանման միջոցներ: Սակայն վերջինս դեռևս չի բավարարում քաղաքացիներին և բիզնեսին: Անվտանգության խնդիրը մնում է որպես հիմնական արգելակ՝ ցանցային կառույցների զարգացման համար բիզնեսի և քաղաքացիների փոխհարաբերություններում պետության հետ:

Քանի որ էլեկտրոնային կառավարության գործարկման համար անհրաժեշտ սարքավորումների տրամադրումը, ծրագրային ապահովման մշակումը և արտադրությունը, ինչպես նաև համակարգչային ցանցերի ներդրումը և ծառայությունների մատուցումը դեպքերի մեծամասնությունում իրականացնում են անհատ կազմակերպությունները, վտանգ է առաջանում, որ պետական և վարչական ոլորտը կախվածության մեջ կընկնեն մասնավոր բիզնեսից, իսկ այն երկրները, որոնք սարքավորումները և տեխնոլոգիաները կզնեն արտասահմանյան երկրներից, կախվածության մեջ կընկնեն օտարերկրյա և վերազգային կորպորացիաներից:

Ներկայացնենք ստացված արդյունքները: Այնուամենայնիվ, շատ երկրներ արդեն սկսել են պետական կառավարման տեղեկատվայնացման ծրագրերի իրականացումը, դրանցից որոշներում այդ ծրագրերը ավարտի փուլում են: 2004թ. տվյալներով այս գծով առաջատարը Կանադան է եղել, որտեղ, համաձայն փորձագետների գնահատականների, էլեկտրոնային կառավարությունը կառուցվել է 80%-ով,

Երկրորդ տեղում ԱՄՆ և Սինգապուրն են (67%), երրորդ տեղում՝ Ավստրալիան Դանիան, Ֆինլանդիան և Շվեյցարիան (58%):

ԱՄՆ-ում պետական իշխանության տեղեկատվայնացումը սկսվել է Բ.Քլինթոնի հրամաններին համապատասխան (1996թ.): Պետական կառույցներում ստեղծվել են տեղեկատվության գծով գլխավոր տնօրենների պաշտոնները, ովքեր պատասխանատու են իրենց գերատեսչություններում տեղեկատվական համակարգերի մշակման և իրագործման համար: Կառավարական տեղեկատվության հասանելիության կենտրոնը դարձավ firstgov.gov պորտալը, որն ապահովում է դաշնային, նահանգային և տեղային մակարդակներում ազատ հասանելիություն էջերին, էլեկտրոնային ձևերին և ծառայություններին: Արդեն 2001թ. կառավարչական վեբ կայքում հասանելի են եղել պետական փաստաթղթերի և ծառայությունների մեծ մասը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ոլորտում առաջատարներից մեկը դարձավ Կանադան: «Կապակցված կանադացիներ» (Connecting Canadians) ընդհանուր անվանումը կրող ծրագրերի համալիրը հիմնաքար դարձավ ոչ միայն դաշնային մակարդակում էլեկտրոնային կառավարության ստեղծման համար, այլ նաև պրովինցիաների մակարդակում: Հատկապես արագ տեմպերով են ընթացել Օնտարիո պրովինցիայում իրականացվող տեղեկատվայնացման ծրագիրը:

*Մեծ Բրիտանիայում պետական իշխանության էլեկտրոնայնացումը դարձել է Թ. Բլերի կառավարության 1999թ. ընդունած «Պետական իշխանության արդիականացում» բարեփոխական ծրագրի 5 հիմնական ուղղություններից մեկը: Դրա իրագործման համար կառավարական բոլոր գերատեսչություններում նշանակվել են հատուկ պաշտոնատար անձինք: Հենց այդ ժամանակ էլ դրվել է նպատակ տրամադրել համացանց բոլոր ցանկացողներին: Նշանակված ծրագրի իրագործման հիմնական մեխանիզմը UK On-line պորտալն էր, որի կառուցվածքի ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունեցել սպառողին միտված լինելու մոտեցումը: Արդյունքում ծառայությունների մատուցման սկզբունքը կառուցվում է այսպես կոչված «կենսական էպիզոդների» վրա: Կենտրոնական կառավարչական պորտալի հիմնական բաժինը կրում է «Զեր կյանքը» անվանումը: Այն քաղաքացիներին տալիս է հնարավորություն պետությունից էլեկտրոնային կարգով ստանալ*

ծառայություններ, որոնք անհրաժեշտ են կյանքի տարբեր իրավիճակներում: Առաջին հերթին իրականացվել են այնպիսի «կենսական էպիզոդներ», ինչպիսիք են երեխայի ծնունդը, մտերիմի մահը, նոր տուն տեղափոխվելը և այլն: Հետագայում ավելացվեցին այլ դպրոց տեղափոխվելու, թոշակի անցնելու, բիզնեսի բացման և այլ ծառայություններ:

2000թ. մայիսին *Նոր Զելանդիայում ընդունվել* է պետական կառավարման համակարգայնացման ծրագիրը: Նույն ժամանակահատվածում *Ավստրալիայում ընդունվել* է «On-line-ային ռազմավարություն», որն իր մեջ ներառել է էլեկտրոնային գնումների ռազմավարությունը: Նույն տարում էլեկտրոնային կառավարություն ստեղծելու ծրագրեր են ընդունվել Իտալիայում, Նորվեգիայում, Շվեդիայում:

2000թ. էլեկտրոնային կառավարության ծրագրի իրագործմանն է անցել Գերմանիայի Դաշնային կառավարությունը: Bund On-line-2005 նախաձեռնությունը կառավարության կողմից դիտարկվել է որպես տեղեկատվական հասարակության կառուցման հիմնական տարր և պետական կառավարման համակարգի ընդհանուր արդականացման կարևոր բաղադրիչ: Պլանավորված է եղել նախաձեռնությունն ավարտել մինչև 2005թ., որը նախատեսել է կառավարական պորտալի, էլեկտրոնային վճարումների պլատֆորմայի, փաստաթղթերի էլեկտրոնային ձևերի, ստվերի և քաղաքացիների դիմումների կենտրոնի ստեղծում: 2003թ. ծրագրում ուղղումներ կատարվեցին: Նոր նախագիծը ստացավ «Տեղեկատվական հասարակություն-2006» անվանումը: Ֆրանսիայում Ադել (ADELE-Administration Electronique) ծրագիրն ընդունվել է 1998թ., իսկ 2004թ. զգալիորեն վերանայվել է: Ծրագրի շրջանակներում բացի կառավարչական պորտալից ստեղծվել է նաև նաև Սեզամ-Վիթալ (SESAM-Vitale) համակարգը, որը զգալիորեն հեշտացրել է քաղաքացիներին դեղորայքով ապահովումը, աշխատանքի տեղափորման էլեկտրոնային գրասենյակը (բյուրոն), սկսվեց հարկերի վճարման Կոպերնիկ (COPERNIC) համակարգի ներդրումը, ինչպես նաև անձի էլեկտրոնային հաստատման նշակումը:

Էլեկտրոնային կառավարության սկզբունքի իրականացումը պահանջում է նյութատեխնիկական որոշակի բազա, նախապատրաստված օգտագործողներ և զգալի ներդրումներ՝ նախագծերի իրականացման համար: Այսպիսով, 2003թ. ՄԱԿ-ի

18 անդամ-երկրներ դեռևս չունեին իրենց կայքերը համացանցում: Սա նշանակում է, որ այս հարյուրամյակի սկզբում միայն զարգացած երկրներն են կարողացել իրենց թույլ տալ էլեկտրոնային կառավարության մեխանիզմների ներդրում: Մի շարք երկրներում այս գործընթացն սկսվել է ավելի ուշ: Օրինակ, Լիտվայում «Եշխանության դարբասներ» նախագիծը գործի է դրվել միայն 2004թ.:

**«Էլեկտրոնային Եվրոպա»:** 1993թ. ԵՄ հանձնաժողովի կողմից հրատարակվել է «Սպիտակ գիրքը», որն իր մեջ ներառում է Եվրոպայում միասնական տեղեկատվական հասարակության զարգացման ծրագիրը: Այս ծրագիրը նախատեսում էր հեռահաղորդակցական կապերի կոորդինացված զարգացում և ծառայությունների այս ոլորտի ազատականացում: Այս ծրագրերի իրականացումը 1990-ականների երկրորդ կեսերին թույլ է տվել պետական հատվածի տեղեկատվայնացման ոլորտում հասնել որոշակի արդյունքների: Սակայն դրա արդյունքները ճանաչվել են անբավարար: Այդ պատճառով 2000թ. ԵՄ նախարարների խորհրդակցության ժամանակ, որը կազմակերպված է եղել ԵՄ հանձնաժողովի կողմից, ընդունվել է «Էլեկտրոնային Եվրոպա (e-Europe) -2002: Տեղեկատվական հասարակություն բոլորի համար» ծրագիրը, որի հիմնական նպատակը եվրոպացիների՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցությունների դարաշրջանին անցման արագացումն է եղել: Առաջնային ուղղություններից էին էլեկտրոնային կառավարությունն ու էլեկտրոնային առողջապահությունը: Այս ուղղություններում կարևորագույն միջոցառումները ենթադրում էին համացանցում նշանակալի տեղեկատվության հրապարակում, քաղաքացիների համար էլեկտրոնային ելքի ապահովում դեպի պետական հիմնական ծառայություններ, տեխնոլոգիաների զարգացում բաց ծածկագրով (կոդով), պետական հատվածում էլեկտրոնային ստորագրության օգտագործում, առողջապահական կազմակերպությունների կայքերի համար որակի ստանդարտների սահմանում:

Ծրագիրը սահմանում է համակարգչի հետ աշխատանքի հմտությունների և գիտելիքների գնահատման ստանդարտներ՝ իրականացված ուսումնական հատուկ ECDL (European Computer Driving License–Համակարգիչ վարելու եվրոպական լիզենցիա) համակարգում, որը նախատեսում է հատուկ վկայականի տրամադրում՝ օրինական ԵՄ բոլոր երկրներում: Շատ երկրներում արդեն ներդրվել է պետական

աշխատակիցների թեսթավորումը ECDL համակարգով, իսկ որոշ երկրներում էլ (Հունգարիա) ECDL վկայականի առկայությունը պարտադիր պայման է պետական աշխատանքի անցնելու համար:

Միասնական Եվրոպական Էլեկտրոնային կառավարության ստեղծման գործընթացը շտկվում և ուղղություն է վերցնում Benchmarking e-Europe-ի կողմից կանոնավոր կերպով կատարվող հարցումների արդյունքների հիման վրա, որն ընդգրկում է ԵՄ, ինչպես նաև Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեցարիայի ծառայությունների 10.000 մատակարարների: Օրինակ, 2001-2002թթ. անցկացվող հարցումն ի հայտ է բերել մի շարք ծառայությունների մատուցման ոլորտում ապարատային վերակազմավորման անհրաժեշտություն<sup>66</sup>:

**Ներկայացնենք Էլեկտրոնային կառավարության ձևավորման հիմանական ռազմավարությունները:** Տեղեկատվական հասարակության և տնտեսության սուբյեկտների հարաբերությունների կարգավորման նպատակով անհրաժեշտ է օբյեկտիվորեն գործող ինստիտուտ, որը կապահովի տեղեկատվական տնտեսության գոյատևման պայմանները: Այս ինստիտուտի՝ տեղեկատվական տնտեսության հարաբերություններում ի հայտ գալուն պես նրա սուբյեկտների կազմում կատարվել են փոփոխություններ: Այդ փոփոխությունները կապված են ինչպես նոր սուբյեկտների, այնպես էլ էլեկտրոնային բիզնեսի նոր սխեմաների երևան գալու հետ: Շատ երկրներում (հատկապես ԱՄՆ, Սինգապուր) ներկայումս փորձեր են արվում ձևավորել էլեկտրոնային կառավարություն: Այդ երկրներում էլեկտրոնային կառավարության սկզբունքների իրականացման աշխատանքներում շատ հետաքրքրված են վերին իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ էլեկտրոնային կառավարության ստեղծման աշխատանքները կատարվում են բաց և կառավարության՝ քաղաքացիների հանդեպ հաշվետվության կարգախոսի տակ: Պետական հաստատության աշխատանքի օբյեկտիվ ցուցանիշների առկայության դեպքում, որի կյանքի գործունեության ընթացքում, ինչպես և ցանկացած առևտրային կազմակերպության դեպքում կարելի է առանձնացնել իր բիզնես գործընթացների հիմնական և օժանդակ շղթան, ինարավորություն է ընձեռվում գնահատել այդ գործընթացների

<sup>66</sup>Пронкин С.В., Петрунина О.Е., Государственное управление зарубежных стран: учебное пособие/С.В. Пронкин, О.Е. Петрунина. – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007, с. 462.

ընդհանուր կազմակերպումը և յուրաքանչյուրինն առանձին: Դա հնարավորություն կտա կատարել ներքին բիզնես-գործընթացների ռեխմեներին՝ կիրառելով արդեն մշակված և լայնորեն օգտագործվող առևտրային կազմակերպությունների կողմից մեթոդներն ու գործիքները, ինչպես նաև ներդնել բիզնես-գործընթացների կիրառման և դրանց փորձարկման առաջավոր փորձը:

*Սինգապուրի Էլեկտրոնային կառավարության մոդելը:* Սինգապուրի կառավարությունը գիտակցում է, որ երկարաժամկետ առաջընթացում երկիրը չի կարող մրցակցել ավելի խոշոր երկրների հետ, որոնք տնօրինում են մեծ քանակությամբ բնական ռեսուրսների, և որ արտադրության արժեքն ավելի ցածր է: Այդ պատճառով էլ երկարաժամկետ ժամանակահատվածում Սինգապուրը ձգտում է ստեղծել գիտատար տնտեսություն: 1999թ. իոկտեմբերին վարչապետ Գո Չոկ Տոնգը, խոսելով գիտատար տնտեսության ստեղծման նախաձեռնության մասին, նշեց, որ անհրաժեշտ է ակտիվորեն ներգրավել այն ընկերություններին, որոնք իրենց գործունեությունը կառուցում են գիտելիքների և ստեղծագործական մոտեցման հիման վրա: Նորարարությունը խթանելու նպատակով Սինգապուրի կառավարությունը ստեղծում է ազգային գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական ենթակառուցվածք, պաշտպանում է ինտելեկտուալ սեփականությունը և ստեղծում է բարենպաստ պայմաններ էլեկտրոնային կոմերցիայի զարգացման համար՝ ուղղելով միջոցները նորարարության խթանմանը և վերացնելով բյուրոկրատական խոչընդոտմերը: Բացի այդ, Սինգապուրի կառավարությունը մասնավորեցրեց կառավարական բաժինները: Դրա նպատակն էր այդ բաժինների ճկունության և շուկայում կատարվող գործընթացներին արձագանքելու արագության բարձրացումը: Կառավարությունն արդեն ստեղծել էր էլեկտրոնային առևտրի ներդրման համար անհրաժեշտ իրավական համակարգ և կարգավորող մեխանիզմներ՝ ինքնության հաստատման գործընթացներ, մտավոր սեփականության պաշտպանում, պայմանագրերի հիմնական դրույթների մշակում, վեճերի լուծում և գաղտնիության ապահովում:

Սինգապուրում կառավարական ծառայությունների զգալի մասը այսօր հասանելի է On-line համակարգերի միջոցով: Կառավարությունը խթանում է քաղաքացիների մուտքը էլեկտրոնային կառավարության ծառայություններին տնային և աշ-

խատանքային համակարգիչներից քաղաքացիների համար հարմար ցանկացած ժամանակ: Էլեկտրոնային կառավարության գլխավոր ծրագրերից մեկն է «Էլեկտրոնային քաղաքացին» (e-Citizen), որը տրամադրում է ծառայությունների ինտեգրացված փաթեթ, որոնք ժամանակին տրամադրել են կառավարության տարբեր տեսչությունները: Սինգապուրի հիմնական առավելությունն այն է, որ տարբեր նախարարությունների և կառավարության տարբեր տեսչությունների կողմից մատուցվող ծառայությունները ներկայումս հասանելի են մեկ ծրագրի՝ էլեկտրոնային կառավարության շրջանակներում, մեկ ընդհանուր կայքի միջոցով՝ [www.egov.gov.sg](http://www.egov.gov.sg):

Սինգապուրի էլեկտրոնային կառավարության զարգացման ռազմավարական հիմնական նպատակներից կարելի է առանձնացնել հետևյալ հիմքը.

1. Վերակառուցել կառավարությունը թվային տնտեսությունում,
2. տրամադրել ինտեգրված էլեկտրոնային ծառայություններ,
3. լինել հետևողական կառավարություն,
4. նոր հնարավորություններ բացահայտելու համար կիրառել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀ),
5. լինել նորարար ՏՀ-ի միջոցով:

Սինգապուրի էլեկտրոնային կառավարության զարգացման նպատակների իրականացման համար մշակվել է «Կառավարության գործողությունների պլան»՝ պետական կառավարման տարբեր մակարդակներում բազմաթիվ խորհրդակցություններից և բանակցություններից հետո: Այդ պլանն իր մեջ ներառում է ռազմավարական ծրագրերը: Ներկայումս սահմանված են այդ նպատակներին հասնելու ռազմավարական 6 ծրագիր.

1. Աշխատանքային միջավայր՝ հիմնված գիտելիքի վրա: Պետական բոլոր մակարդակներում աշխատողները պետք է լինեն կիրք և օգտագործեն ՏՀ-ի բոլոր առավելությունները աշխատանքային գործնթացները, ծառայությունների մատուցումը և խմբում աշխատանքները բարելավելու համար:

2. Ծառայությունների էլեկտրոնային մատուցում: Կառավարության բոլոր ծառայությունները, որոնք տեխնիկապես կարող են տրամադրվել էլեկտրոնային ալիքներով, պետք է տրամադրվեն:

3. Տեխնոլոգիական փորձարկումներ, որոնք կնպաստեն պետական մարմինների արագ ընտելացմանը տեխնիկական պայմանների փոփոխությանը և կնվազեցնեն մեծ ներդրումներում սխալ որոշումների հավանականությունը:

4. Օպերատիվ արդյունավետության բարելավում: Դամակարգչային սարքավորումները պետք է լինեն ժամանակակից:

5. Ադապտացվող, բայց վստահելի տեղեկատվական տեխնոլոգիաներով ենթակառուցվածք: Լավ մտածված, մշակված, վստահելի և ընդլայնվող ենթակառուցվածքը անհրաժեշտ տարր է էլեկտրոնային կառավարության նախաձեռնություններին սատարելու համար:

6. ՏՀ ոլորտում կրթություն: ՏՀ ոլորտում կրթական ծրագրերը տալիս են ոչ միայն համակարգչային գիտելիքներ, այլ նաև աշխատանքային գործընթացները և կառավարական ծառայությունների մատուցումը բարելավելու գիտելիքներ:

**ԱՄՆ-ի էլեկտրոնային կառավարության մոդելը:** ԱՄՆ նախագահի որոշման համաձայն դաշնային կառավարությունն է մշակում ու ներկայացնում փաստաթուղթ՝ էլեկտրոնային կառավարության ռազմավարությունը (e-Government Strategy): ԱՄՆ կառավարության ռազմավարության սկզբունքների ընդհանուր վերլուծությունը ՏՀ ոլորտում թույլ է տալիս հաստատել, որ կառավարությունը, որը հետաքրքրված է քաղաքացիներին հարմարավետության ապահովման մեջ պետական հաստատությունների հետ փոխհարաբերություններում, իր վրա է վերցնում տնտեսության էլեկտրոնացման գործում առաջնորդի դերը, այդ թվում՝ էլեկտրոնային առևտրի զարգացման խթանումը:

Ներկայումս ԱՄՆ դաշնային կառավարությունը հատուկ ուշադրություն է դարձնում պետական կազմակերպությունների և նախարարությունների միջև էլեկտրոնային առևտրին, պետական կարիքների համար ապրանքների և ծառայությունների մատակարարման էլեկտրոնային մրցութային աճուրդներին, քաղաքացիների մուտքի տրամադրմանը պետական և վարչական տեղեկատվությանը, սմարթ-քար-

տերի օգտագործմանը, նաև դաշնային կառավարությունում տարբեր տեսակի խնդիրների լուծմանը, մասնավորապես, պաշտոնական փաստաթղթերի շրջանառությունը կառավարական կայքերի միջոցով, հարկերի վճարմանը, բնակչության՝ պետական ապարատի վիճակագրական տեղեկատվության տրամադրմանը, ԻԿՏ կիրառմանը բժշկությունում և առողջապահությունում:

Կառավարության կողմից մշակվող ռազմավարությունը ենթադրում է էլեկտրոնային ծառայությունների բոլոր տեսակների օգտագործում և զարգացում: Դա նշանակում է, որ ծառայությունները կարող են տրամադրվել համացանցի միջոցով, բջջային հեռախոսով, թվային հեռուստատեսությամբ, զանգերի սպասարկման միջոցով: Միաժամանակ էլեկտրոնային ծառայությունը չի ենթադրում անձնական շփման բացառում: Որոշակի մտահոգություն է առաջացնում մարդկանց յուրահատուկ և անհատական պահանջմունքների բավարարումը, որի համար էլենթադրվում է ստեղծել փոքր և միջին կազմակերպությունների համար բիզնես-պորտալներ և առանձին քաղաքացիների համար անհատականացված տնային էջեր (домашние страницы):

Բիզնեսի վարման նոր հնարավորությունները կփոխեն կառավարության և քաղաքացիների փոխհարաբերությունները: Միաժամանակ պետք է երաշխավորել անձնական տվյալների և տեղեկատվական համակարգի պաշտպանվածությունը:

ԱՄՆ-ում էլեկտրոնային կառավարության (e-government) ռազմավարության զարգացումը նպատակառուղյած է դաշնային կառավարության աշխատանքի արդյունավետության բարձրացնան այնպես, որ բացառվի մինյանց կրկնող պետական կառավարման մակարդակները, հեշտացվի տեղեկատվության որոնումը և քաղաքացիների համար դաշնային կառավարությունից ծառայությունների ստացումը, կառավարական ենթակառուցվածքների նպատակառուղյածությունը քաղաքացիների պահանջների արագ բավարարմանը: Մշակված ռազմավարության համաձայն էլեկտրոնային կառավարության(e-government-ի) զարգացման հիմնական նպատակներից է մասշտաբների փոքրացումը, տարբեր կառավարական գործակալություններում նույն գործառույթների բացառումն ամբողջովին, որպեսզի

հեշտացվի քաղաքացիների մուտքը և կրծատվեն ավելորդ ծառայությունների և գերատեսչությունների պահպանման ծախսերը:

Էլեկտրոնային կառավարության ձևավորման ներկայացված հիմնական մեթոդիկան, մոտեցումները և նշված երկրների փորձը հաստատում են, որ էլեկտրոնային կառավարության ստեղծման հաջողությունը հնարավոր է պետական իշխանության բոլոր մակարդակների աջակցության և էլեկտրոնային բիզնեսի սուբյեկտների այդ ժրագրերում հետաքրքրվածության պայմաններում<sup>67</sup>:

---

<sup>67</sup>Мэннинг Н., Парисон Н. Реформа государственного управления: международный опыт. М., 2003.

**ԳԼՈՒԽ 2. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԴՐԱ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԵՍՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

**2.1. ՀՀ Գործադիր իշխանության գործունեության առանձնահատկությունները և  
հարաբերություններն իշխանության մյուս թևերի հետ**

Իրավական վերափոխումների հաճախականությամբ Հայաստանը նախկին ԽՍՀՄ երկրների շարքում միջին տեղում է գտնվում: 1995թ. ընդունվել է նոր Սահմանադրությունը, իսկ 1998թ. մայիսի 5-ին՝ քաղաքացիական օրենսգիրքը, որը գործողության մեջ է դրվել 1999թ. հունվարի 1-ից:

Գործող Սահմանադրությունը ՀՀ-ն հոչակում է ինքնիշխան, սոցիալական, ժողովրդավարական, իրավական, պետություն: Կառավարման ձևը Հայաստանի Հանրապետությունում կիսանախազահական է (խառը), իսկ քաղաքական վարչակարգը՝ ժողովրդավարական, որը, կարծում ենք, կայացման ընթացքում է:

ՀՀ-ն պատկանում է ռոմանոգերմանական իրավական ընտանիքին, որին հատուկ է իրավունքի առկայությունը: Ռոմանոգերմանական իրավական ընտանիքի իրավական համակարգերն ունեն լավ մշակված օրենսդրություն: Հայաստանի Հանրապետությունը, ճիշտ է, նույնպես ունի մշակված օրենսդրություն, սակայն դա չի նշանակում, որ ՀՀ օրենսդրական դաշտն անթերի է: Հատկապես 2005թ. սահմանադրական բարեփոխումները մեծածավալ դրական տեղաշարժերի առիթ են դարձել:

Այս իրավական ընտանիքին պատկանող երկրներում հիմնական օրենքը Սահմանադրությունն է, առկա է օրենսդրական դաշտ և իրականացվում է դրա համակարգում: ՀՀ առաջին սահմանադրությունն ընդունվել է 1995թ., իսկ փոփոխված տարբերակը՝ 2005թ-ին, որն ավելի հստակորեն է սահմանել ՀՀ պետական կառավարման խառը հանրապետական ձևը: Այս իրավական ընտանիքում, որպես իրավունքի աղբյուր, ներկայումս սահմանափակ դեր ունեն ավանդույթները, ինչը նախկինում ռոմանոգերմանական իրավական ընտանիքի ձևավորման ժամանակ մեծ դեր է ունեցել:

Ոոնանոգերմանական իրավական ընտանիքին հատկանշական է զարգացած դատական համակարգը, որոշակի շրջանակներում ընդունվում է նաև դատական փորձը՝ որպես իրավունքի աղբյուր: Մեզ մոտ նույնպես արդեն իսկ սկսել է գործածվել դատական նախադեպերը, սակայն շատ նեղ շրջանակներում:

Իրավունքի հիմնական աղբյուրներն են օրենքները և այլ նորմատիվ ակտերը: Դրանց բրգածնությունը ներառում է Սահմանադրությունը, խորհրդարանի կողմից ընդունվող օրենքները, հանրապետության նախագահի իրամանագրերը, կառավարության և վարչապետի որոշումները, նախարարությունների և գերատեսչությունների, ՏԻՄ-երի ենթաօրենսդրական ակտերը:

Սահմանադրության համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը իրավական համակարգի բաղադրիչ մասն են կազմում:

Իրավունքի աղբյուրների համակարգում ուրույն տեղ են գրադեցնում ՀՀ ՍԴ-ի որոշումները, որոնցով կարող է չեղյալ համարվել ցանկացած օրենք կամ ենթաօրենսդրական ակտ:

Հայաստանի Հանրապետությունում ընդունված է պետական կառավարման «խառը» ձևը: Նախկինում կարելի է ասել, որ այն նախագահապալամենտական էր, ինչը չի կարելի ասել ներկայիս համակարգի մասին, որը սահմանադրական բարեփոխումների արդյունքում վերափոխվեց պառլամենտական-նախագահականի: Սոցիալիզմի փլուզումից հետո պետական կառավարման այս ձևը լայն տարածում գտավ հետսոցիալիստական որոշ երկրներում: ՀՀ պետական կառավարման ձևի համար հիմք է հանդիսացել ֆրանսիական օրինակը:

Ներկայացնենք ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի և կառավարատիրան լիազորությունները՝ պետական կառավարման «խառը» հանրապետական ձևն ավելի հստակ պատկերացնելու համար:

ՀՀ Նախագահի իրավասությունների մեջ է մտնում ուղերձով Ազգային ժողովին և ժողովրդին դիմելը: Նախագահն Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո՝ քանմեկօրյա ժամկետում, ստորագրում և իրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքն առարկություններով, առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով

նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը: Նա Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով արձակում է Ազգային ժողովը և նշանակում արտահերթ ընտրություն: Նախագահի լիազորություններից է նաև Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետի նշանակումը պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին: Հանրապետության նախագահը վարչապետ է նշանակում կառավարության հրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում: Հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին:

Հանրապետության նախագահն ընդունում է կառավարության հրաժարականը նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի, Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնն ստանձնելու, կառավարությանն անվստահություն հայտնելու, կառավարության ծրագրին հավանություն չտալու, վարչապետի կողմից հրաժարական ներկայացնելու կամ վարչապետի պաշտոնը թափուր մնալու օրը: Հանրապետության նախագահի կողմից կառավարության հրաժարականի ընդունումից հետո կառավարության անդամները շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև նոր կառավարության կազմավորումը:

Օրենքով նախատեսված դեպքերում նախագահը նշանակումներ է կատարում պետական պաշտոններում, կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդ և նախագահում այն, կարող է կազմավորել խորհրդակցական այլ մարմիններ: Նա ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգա-

յին պայմանագրերը: Նախագահը նաև նշանակում և ետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչներին, ընդունում է օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանշագրերը:

Հանրապետության Նախագահը Ազգային ժողովին է առաջարկում գլխավոր դատախազի, կենտրոնական բանկի նախագահի և վերահսկիչ պալատի նախագահի թեկնածությունները: Գլխավոր դատախազի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազի տեղակալներին, ինչպես նաև նշանակում է սահմանադրական դատարանի չորս անդամ, իսկ Ազգային ժողովի կողմից Սահմանադրության 83-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետում սահմանադրական դատարանի նախագահ չնշանակելու դեպքում՝ սահմանադրական դատարանի կազմից սահմանադրական դատարանի նախագահ: Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները կամ համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Նախագահը արդարադատության խորհրդի առաջարկությամբ նշանակում է վճռաբեկ դատարանի և նրա պալատների նախագահներին և դատավորներին, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահներին, դադարեցնում է նրանց լիազորությունները, համաձայնություն է տալիս նրանց՝ որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրանց նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ, արդարադատության խորհրդի եզրակացությամբ նշանակում է վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների դատավորներին (նշանակում է արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական անդամներին):

Հանրապետության Նախագահը զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է, համակարգում է պետական նարմինների գործունեությունը պաշտպա-

նության բնագավառում, նշանակում և ազատում է գինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը:

Հանրապետության վրա գինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Նախագահը հայտարարում է ռազմական դրություն և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում գինված ուժերի օգտագործման մասին:

Պատերազմի ժամանակ Հանրապետության Նախագահը կարող է նշանակել և ազատել գինված ուժերի գլխավոր հրամանատարին: Զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրություն հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Ռազմական դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով:

Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, Նախագահը հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովուրդին:

Նախագահը նաև օրենքով սահմանված կարգով լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության և քաղաքական ապաստան տալու հետ կապված հարցերը, ինչպես նաև պարգևատրում է Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով, շնորհում բարձրագույն գինվորական և պատվավոր կոչումներ, բարձրագույն դիվանագիտական և այլ դասային աստիճաններ, ներում է շնորհում դատապարտյալներին:

Այժմ ներկայացնենք ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների այն մասը, որոնք իրականացվում են Հանրապետության Նախագահի առաջարկությամբ.

1. հայտարարում է համաներում.
2. Վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում ՀՀ միջազգային պայմանագրերը,
3. որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը:

Ազգային ժողովը կառավարության առաջարկությամբ սահմանում է Հանրապետության վարչատարածքային բաժանումը:

Ներկայացնենք ՀՀ Ազգային ժողովի լիազորությունները ամփոփ ձևով: Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ նշանակում է սահմանադրական դատարանի հիմք անդամներին: Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ սահմանադրական դատարանի կազմից նշանակում է սահմանադրական դատարանի նախագահ: Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամի լիազորությունները, համաձայնություն տալ նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Ազգային ժողովն է ընտրում արդարադատության խորհրդի երկու իրավաբանգիտնականներին:

ՀՀ կառավարությունը Սահմանադրությամբ նախատեսված կարգով Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը, ինչպես նաև Ազգային ժողովի հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը, ապահովում բյուջեի կատարումը, որի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Ազգային ժողով:

ՀՀ կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը, իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականությունը, տարածքային զարգացման պետական քաղաքականությունը, ինչպես նաև պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում:

ՀՀ կառավարությունն ապահովում է Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացումը, ապահովում է նաև հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ է ձեռնարկում օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատություն-

ների ապահովման ուղղությամբ, իրականացնում է Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված այլ գործառույթներ և լիազորություններ<sup>68</sup>:

Կառավարման «խառը» հանրապետական ձևին հատկանշական են և պառամենտական, և նախագահական հանրապետության տարրեր: Նախագահականից վերցված է, որպես կանոն, նախարարների նշանակովի լինելը նախագահի կողմից՝ առանց պառամենտի համաձայնության: ՀՀ-ում նույնպես այդպես էր նախքան սահմանադրական բարեփոխումները, սակայն 2005թ. նոր խմբագրությամբ Սահմանադրությունը սահմանում է, որ ՀՀ նախագահը նշանակում է վարչապետին, իսկ նախարարները նշանակվում են վարչապետի առաջարկությամբ նախագահի կողմից՝ հաշվի առնելով պառամենտում ներկա իրավիճակը: Սահմանադրության բարեփոխված տարբերակը, մնալով կառավարման կիսանախագահական համակարգի շրջանակներում, հստակեցրել է Հանրապետության նախագահի դերը պետական իշխանության մարմինների համակարգում: Նոր տեքստը լուծում է սահմանադրական բարեփոխումների արմատական խնդիրներից մեկը՝ հանրապետության նախագահի ձեռքում կենտրոնացված իշխանությունից անցում դեպի իշխանությունների այնպիսի բաժանում, որը, մի կողմից, կայուն է ու արդյունավետ, իսկ մյուս կողմից՝ կոլեգիալ:

Պառամենտականից, որպես կանոն, վերցված է անվստահության քվե հայտնելու հնարավորությունը, սակայն վերջնական որոշումը կայացնում է նախագահը (նա կարող է պաշտոնանկ անել կառավարությունը, կարող է նաև ցրել պառամենտը (եթե այն երկպալատ է, ապա դրա ստորին պալատը՝ նոր ընտրություններ նշանակելով: ՀՀ-ում Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո, Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, կարող է կրծատել գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը և նշանակել արտահերթ ընտրություններ: Իսկ հանրապետության նախագահն իր հերթին կարող է պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Հանրապետության նախագահի պաշտոնանկ անելու հարցի մասին եզրա-

<sup>68</sup>ՀՀ Սահմանադրություն 2005թ., գլուխ 5, հոդված 89:

կացություն ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ դիմում է սահմանադրական դատարան: Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին որոշումը սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա կայացնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ անվտահություն է հայտնում կառավարությանը:

ՀՀ 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ՀՀ-ը հոչակում է ժողովրդավարական: Ժողովրդավարական վարչակարգը կառավարման ոլորտում բնութագրվում է հետևյալ չափանիշներով.

1. քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչում այնպիսի շրջանակներում, որպեսզի նա կարողանա ինքնուրույնաբար և ակտիվորեն մասնակցել պետական քաղաքականության որոշմանը, այդ թվում նաև հասարակական կարծիքի հետ հաշվի նստելը և ժողովրդավարության ինստիտուտների առկայությունը (հանրաքվեներ և այլն),

2. օրենքով ընդունված պյուրալիզմ, որը թույլ է տալիս գործել ոչ միայն իշխող կուսակցություններին, այլ նաև ընդդիմության կուսակցություններին, որոնք պահանջում են այլ քաղաքականություն,

3. երկրի բարձրաստիճան պաշտոնատար մարմինների (պառլամենտ, երկրի ղեկավար և այլն) ձևավորումը քաղաքացիների կողմից կամ ժողովրդի կամքով ձևավորված այլ մարմինների (մեծամասամբ վերաբերում է պառլամենտի վերին պալատին և նախագահին) կողմից ժողովրդավարական ընտրությունների միջոցով,

4. իշխանության թերի տարանջատում (օրենսդիր, գործադիր, դատական),

5. համապետական ներկայացուցչական մարմնի պարտադիր և իրական մասնակցությունը պետական իշխանության իրագործմանը. միայն այդ մարմինն իրավունք ունի օրենքներ ընդունել, պետության ներքին և արտաքին քաղաքականություն սահմանել, բյուջե հաստատել. որոշումներն ընդունվում են մեծամասնական կարգով՝ փոքրամասնության իրավունքները և քաղաքական ընդդիմության իրավունքներն առանց ոտնահարելու,

6. ցանկացած քաղաքական գաղափարախոսության քարոզչության ազատություն, եթե դրա հետևորդները չեն դրդում բռնություն գործադրել, չեն հակասում բարոյական, հասարակական կարգի կանոններին, չեն ոտնահարում մյուս քաղաքացիների իրավունքները և ազատությունները<sup>69</sup>:

Կախված տվյալ պետության տնտեսական հնարավորություններից՝ այդ իրավունքներն առանձին երկրներում երաշխավորվում և սուբյեկտիվ իրավունքի են վերածվում տարբեր չափերով: Այդ իսկ պատճառով էլ խստորեն տարանջատվել է մի կողմից այն սոցիալական իրավունքները, որոնք ենթակա են անմիջական դատական պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ այն դրույթները, որոնք արտահայտում են պետության խնդիրները սոցիալական բնագավառում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 48): Բացի դրանից, գործող Սահմանադրություն իիմք ընդունելով նաև միջազգային իրավունքի նորմերը՝ բազմաթիվ սոցիալական-տնտեսական իրավունքներ արդեն վերապահված են յուրաքանչյուր մարդու, այլ ոչ թե միայն ՀՀ քաղաքացիներին:

Ժողովրդավարության երկրորդ հատկանիշը պյուրալիզմն է, այսինքն՝ ոչ միայն իշխող կուսակցությունների օրինական գործունեությունն է թույլատրվում, այլ նաև ընդդիմադիր, այլ գաղափարախոսություն ունեցող կուսակցություններինը: Այս դրույթը ՀՀ-ում այժմ վառ արտահայտված է: Գործում են բազմաթիվ կուսակցություններ, բացի այդ՝ ներկայիս կառավարությունն իրենից ներկայացնում է կոալիցիոն կոլեգիալ մարմին:

Յաջորդ հատկանիշը պետության բարձրաստիճան պաշտոնատար մարմինների՝ ժողովրդի կամ հատուկ դրա համար ձևավորված մարմնի կողմից ընտրությունն է: ՀՀ-ում և պառլամենտը, և երկրի նախագահը ընտրվում են ուղղակի ընտրությունների միջոցով ՀՀ քաղաքացիների կողմից:

Իշխանության թևերի տարանջատումը ժողովրդավարության հաջորդ ցուցանիշն է: ՀՀ-ում սահմանադրական բարեփոխումներից հետո իշխանության թևերի տարանջատումն ավելի հստակորեն սահմանվեց: Նախկինում գործադիր իշխանությունը գրեթե ամբողջությամբ նախագահի ձեռքում էր, իսկ այժմ դրա դեկավարը վարչապետն է: Նախագահը չի մտնում իշխանության թևերից և ոչ մեկի մեջ: Ազ-

<sup>69</sup>Сухорев Я., Батлер У.Э., “Правовые системы стран современного мира” энциклопедия-справочник. М. НОРМА. 2003. с. 556.

գային ժողովը և նախագահն ընտրվում են ժողովրդի կողմից, ինչը որոշ չափով ապահովում է գործադիր և օրենսդիր իշխանությունների անկախությունը միմյանցից: Սակայն գործնականում դրանք չեն կարող լիարժեքորեն կապված չլինել: Ինչ վերաբերում է դատական իշխանությանը, ապա հանրապետության բոլոր դատավորներին նշանակում է Հանրապետության Նախագահը: Դատական իշխանությունը համարվում է իշխանության անկախ, ինքնուրույն և ապաքաղաքականացված թե:

ՀՀ-ում օրենքներ ընդունելու իրավասություն ունի միայն Ազգային ժողովը: Իսկ քաղաքական գաղափարախոսության քարոզության ազատությունը երաշխավորվում է Սահմանադրության 2-րդ գլխով, որը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել իրաժարվելու իր կարծիքից կամ փոխել այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի ծառայողների և պետական ծառայողների առանձին խմբերի նկատմամբ: Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ կուսակցության կամ միավորման: Միավորումների՝ այդ թվում կուսակցությունների գործունեությունը կարող է կասեցվել և արգելվել օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով: Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրաքվեներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք: Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրնենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը: Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական,

կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով<sup>70</sup>:

Թիշտ է, ՀՀ-ում պետական և քաղաքական վարչակարգը ժողովրդավարականն է, սակայն այն գտնվում է կայացման փուլում, և 2005թ.-ի սահմանադրական բարեփոխումները կարևոր քայլ են եղել դրա կայացման ճանապարհին:

## 2.2. Սահմանադրական բարեփոխումների համեմատական վերլուծությունը և սահմանադրականության մակարդակի գնահատումը

**ՀՀ սահմանադրական բարեփոխումները պետական կառավարման համակարգում:** Համեմատական վերլուծության հիման վրա փորձ է արվել համառոտ ներկայացնել սահմանադրական բարեփոխումների ընդհանուր պատկերը, այն հիմնական փոփոխությունները, որոնք կատարվել են 1995թ. ընդունված Սահմանադրության մեջ 2005թ. հանրաքենով ընդունված Սահմանադրության արդյունքում: 2005թ. Սահմանադրության բարեփոխված տեքստը տարբերակված մոտեցում է ցուցաբերում մի կողմից մարդու քաղաքացիական և քաղաքական, իսկ մյուս կողմից՝ սոցիալական իրավունքների միջև: Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների բնորոշ առանձնահատկությունն այն է, որ դրանք բոլորն էլ կրում են սուբյեկտիվ բնույթ և երաշխավորված են համապարփակ և լիակատար դատական պաշտպանությամբ: Մինչդեռ շատ սոցիալական իրավունքներ օրգանապես կապված են պետության իրական տնտեսական հնարավորությունների հետ և, հետևաբար, չունեն վառարտահայտված սուբյեկտիվ բնույթ: Կախված տվյալ պետության տնտեսական հնարավորություններից՝ այդ իրավունքներն առանձին երկրներում երաշխավորվում և սուբյեկտիվ իրավունքի են վերածվում տարբեր չափերով: Այդ իսկ պատճառով էլ խստորեն տարանջատվել են, մի կողմից, այն սոցիալական իրավունքները, որոնք ենթակա են անմիջական դատական պաշտպանության, իսկ մյուս կողմից՝ այն

<sup>70</sup>ՀՀ Սահմանադրություն 2005թ.

դրույթները, որոնք արտահայտում են պետության խնդիրները սոցիալական բնագավառում: Բացի դրանից, Սահմանադրության ներկա տարբերակում հիմք ընդունելով նաև միջազգային իրավունքի նորմերը՝ բազմաթիվ սոցիալական-տնտեսական իրավունքներ արդեն վերապահված են յուրաքանչյուր մարդու, այլ ոչ թե միայն ՀՀ քաղաքացիներին:

**Պետության մեխանիզմի զարգացման միտումները սահմանադրական բարեփոխումների գործընթացում:** Անդրադառնալով պետության մեխանիզմում կատարված փոփոխություններին՝ փորձ է արվել դրանք ներկայացնել իշխանությունների տարանջատման, զապումների և հակակշիռների, կառավարման ձևի համատեքստում:

Սահմանադրության նախորդ տարբերակում Հայաստանում ընդունված մոդելն ուղղակիորեն վերացնում էր փոխադարձ զապումների և հակակշիռների մեխանիզմները և հարցականի տակ դնում իշխանության թևերի բաժանման սկզբունքը: Գործադիր իշխանության իրականացումը վերապահելով կառավարությանը՝ 1995թ. խնբագրությամբ Սահմանադրությունը ՀՀ Նախագահին տալիս էր այնպիսի լիազորություններ (վարչապետի ազատում, կառավարության նիստերի նախագահում, կառավարության որոշումների վավերացում, կառավարության կառուցվածքի և գործունեության կարգի որոշում և այլն), որոնք Նախագահին հնարավորություն էին տալիս դաշնակության կառավարության փաստացի ռեկավարը՝ թուլացնելով վարչապետի ինստիտուտը<sup>71</sup>:

Սահմանադրության 2005թ. բարեփոխված տարբերակը, մնալով կառավարման կիսանախագահական համակարգի շրջանակներում, հստակեցրել է Հանրապետության Նախագահի դերը պետական իշխանության մարմինների համակարգում: 2005թ. ՀՀ Սահմանադրությունը լուծում է սահմանադրական բարեփոխումների արմատական խնդիրներից մեկը՝ Հանրապետության Նախագահի ձեռքում կենտրոնացված իշխանությունից անցում դեպի իշխանությունների անյափի բաժանում, որը, մի կողմից, կայուն է ու արդյունավետ, իսկ մյուս կողմից՝ կոլեգիալ:

<sup>71</sup>Պողոսյան Վարդան, Թովմասյան Յրայր, Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005թ., էջ 37.

Փոխադարձ զապումների և հակակշիռների մեխանիզմը բացակայում էր նաև նախագահ-խորհրդարան փոխհարաբերություններում: Նախագահը փաստացի միանձնյա էր որոշում Խորհրդարանը լուծարելու հարցը, Նախագահը կարող էր արձակել Խորհրդարանն այն դեպքում, եթե Խորհրդարանն անվստահություն հայտներ կառավարությանը: Բացի դրանից, կառավարությանն անվստահություն հայտնելուց հետո Նախագահը կարող էր նորից նշանակել նույն վարչապետին՝ սպառնալով Խորհրդարանի լուծարմամբ:

Ներկայումս ընդունվել է կիսանախագահական կառավարման ձևի պառլամենտական-նախագահական մոդելը, որն ամենահետևողականն է արտահայտում կառավարման այս ձևի էությունը: Հանրապետության Նախագահի գործառույթներն էական փոփոխությունների չեն ենթարկվել, սակայն, վերոհիշյալ առումով, փոխվել են նրան վերապահված լիազորությունները: Հանրապետության Նախագահին վերապահված առաջին գործառույթը պահպանվել է՝ նա հետևում է Սահմանադրության պահպանմանը: Հանրապետության Նախագահը շարունակում է պատասխանատու մնալ երկրի համար կենսական կարևորություն ունեցող հարցերի՝ արտաքին քաղաքականության, պաշտպանության և անվտանգության բնագավառների համար: Սակայն ի տարբերություն Սահմանադրության նախորդ տեքստի՝ այստեղ նա իր լիազորությունները պարտավոր է իրականացնել Ազգային ժողովի մեծամասնության վստահությունը վայելող վարչապետի և կառավարության հետ միասին: Մասնավորապես, 2005թ. Սահմանադրության 55 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահը ... Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձը: Հանրապետության Նախագահը վարչապետ է նշանակում կառավարության իրաժարականի ընդունումից հետո՝ տասնօրյա ժամկետում: Կառավարությունը կազմավորվում է վարչապետի նշանակումից հետո՝ քսանօրյա ժամկետում»: Գործող Սահմանադրության 74 հոդվածի համաձայն՝ «Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է

ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ և քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Ի տարբերություն 1995թ. խմբագրության Սահմանադրության՝ Սահմանադրության բարեփոխված տարբերակը, ինչպես երևում է կառավարության ծրագրի հաստատման համար պահանջում է Ազգային ժողովի պատգամավորների քվեարկություն: Սահմանադրության 74.1. կետի համաձայն, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա Հանրապետության Նախագահը պարտավոր է արձակել Ազգային ժողովը: Գործող Սահմանադրության մեջ կառավարման համակարգին վերաբերող դրույթներում տեղ գտած ամենակարևոր բարեփոխումներից մեկն այն է, որ կառավարությունն այլևս երկակի պատասխանատվություն չի կրում ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի առջև: Նախագահը կարող է միայն վարչապետին պաշտոնանկ անելու առաջարկություն ներկայացնել, իսկ հարցի վերջնական լուծումը թողնված է Ազգային ժողովին (հոդված 84)<sup>72</sup>:

Այսպիսով, վարչապետին ազատելու՝ Հանրապետության Նախագահի միանձնյա իրավունքի վերացումը կառավարությանը հնարավորություն է տալիս իրականում կատարել գործադիր իշխանության բարձրագույն մարմնի դերը: Հաշվի առնելով, որ Հանրապետության Նախագահը, ինչպես Ազգային ժողովը, ընտրվում է ժողովրդի կողմից և որոշակի ազդեցություն ունի նաև գործադիր իշխանության իրականացման վրա՝ Հանրապետության Նախագահի համար սահմանվել է վարչապետին ազատելու վերաբերյալ նոր կարգ: Վարչապետը դարձել է առավել ինքնուրույն, քանի որ ներկայումս կառավարության նիստերը նախագահում է ինքը, այլ ոչ թե Հանրապետության Նախագահը, ինչպես նախկինում էր:

Կարևորագույն հարցերից է նաև Խորհրդարանի լուծարման հարցը: Նախկինում ՀՀ նախագահն այս իմաստով ուներ գրեթե անսահմանափակ լիազորություններ: 2005թ. Սահմանադրության համաձայն այդ լիազորությունների իրա-

<sup>72</sup>Պողոսյան Վարդան, Թովմասյան Յրայր, Յայաստանի Հանրապետությունում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005թ.:

կանացումը որոշակիորեն սահմանափակված է: Ինչպես արդեն նշվել է, Սահմանադրության 74.1. հոդվածը սահմանում է Խորհրդարանի լուծարման մեկ պարտադիր դեպք: Ինչ վերաբերում է մյուս դեպքերին, ապա դրանք երեքն են, որոնք սահմանված են Սահմանադրության 74.1. հոդվածի երկրորդ մասով: Սահմանադրության այդ մասի համաձայն՝ «Հանրապետության Նախագահն Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է արձակել Ազգային ժողովը եթե.

1. Ազգային ժողովը հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ,

2. հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովի նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում,

3. հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում»:

Այս երեք դեպքերում էլ Խորհրդարանը կարող է հեշտությամբ խուսափել լուծարումից՝ որևէ որոշում կայացնելով կամ նիստ գումարելով: Օրինակ, բավարար է մերժել կառավարության կողմից ներկայացված որևէ օրինագիծ և դրանով խուսափել լուծարումից:

Ատենախոսության շրջանակներում փորձ է արվել նաև համենատական վերլուծություն իրականացնել 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության և 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների (նախագծի) միջև: Նպատակ է դրվել վերը նշված Սահմանադրությունների շրջանակներում պետության կառավարման համակարգի փոփոխության, ինչպես նաև իրավունքների ու պարտականությունների հավասարակշռման մեխանիզմների վերլուծությունը: Վերլուծությունն իրականացվել է ըստ Սահմանադրությունների համապատասխան գլուխների (տե՛ս Աղյուսակ 1):

2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության և  
2015թ. դեկտմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության  
փոփոխությունների (նախագիծի) համեմատական վերլուծություն ըստ առանձին  
գլուխներում ներառված հոդվածների<sup>73</sup>

<b>Գործող սահմանադրություն</b>	<b>Նոր սահմանադրության նախագիծ</b>
Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները - հոդված 1-13	Գլուխ 1. Սահմանադրական կարգի հիմունքները - հոդված 1-22
Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հոդված 14-48	Գլուխ 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հոդված 23-81
Գլուխ 3. Հանրապետության նախագահը հոդված 49-61	Գլուխ 3. Սոցիալական, տնտեսական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները հոդված 82-87
Գործող սահմանադրություն	Նոր սահմանադրության նախագիծ
Գլուխ 4. Ազգային ժողովը հոդված 62-84	Գլուխ 4. Ազգային ժողովը հոդված 88-122
Գլուխ 5. Կառավարությունը հոդված 85-90	Գլուխ 5. Հանրապետության նախագահը հոդված 123-145
Գլուխ 6. Դատական իշխանությունը հոդված 91-103	Գլուխ 6. Կառավարությունը հոդված 146-161
Գլուխ 7. Տեղական ինքնակառավարումը հոդված 104-110	Գլուխ 7. Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը - հոդված 162-175
Գլուխ 8. Սահմանադրության ընդունումը, փոփոխումը և հանրաքվեն հոդված 111-114	Գլուխ 8. Դատախազությունը և քննչական մարմինները - հոդված 176-178
Գլուխ 9. Եզրակակիչ և անցումային դրույթներ - հոդված 115-117	Գլուխ 9. Տեղական ինքնակառավարումը հոդված 179-190
	Գլուխ 10. Մարդու իրավունքների պաշտպանը - հոդված 191-193
	Գլուխ 11. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը - հոդված 194-195

<sup>73</sup>Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ (նախագիծ), Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր. Հատուկ թողարկում, Եր., «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, 2015:

	Գլուխ 12. Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հոդված 196-197
	Գլուխ 13. Հաշվեքննիչ պալատը հոդված 198-199
	Գլուխ 14. Կենտրոնական բանկը Հոդված 200-201
	Գլուխ 15. Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանարքեն հոդված 202-208
	Գլուխ 16. Եզրափակիչ և անցումային դրույթներ - հոդված 209-220

Վերլուծությունն իրականացվել է ըստ սահմանադրության համապատասխան գլուխների: 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը բաղկացած է 13 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլուխը բաղկացած է 22 հոդվածից:

Յարկ է նկատել, որ սահմանադրության բարեփոխումների նոր տարբերակում պետություն բառը փոխվել է հանրային իշխանություն հասկացությամբ, որը պարզաբանված չէ: Սահմանադրական բարեփոխումների 4-րդ հոդվածում արդեն սահմանվում է պետական իշխանության հիմնական մարմինները՝ օրենսդիր, գործադիր, դատական իշխանություն: Յաճադրելով սահմանադրության 3-րդ և 4-րդ հոդվածները անհասկանալի է դառնում հանրային իշխանության և պետական իշխանության տարբերությունը:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ի տարբերություն 2005թ. ընդունված սահմանադրության ուղղակի գաղտնի քվեարկությամբ այլևս հնարավոր չի լինի ընտրել ՀՀ նախագահին:

Սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում ընդերքը և ջրային ռեսուրսները համարվում են պետության բացառիկ սեփականությունը:

2005թ. ընդունված սահմանադրության 8.1 հոդվածում նշված է, որ Եկեղեցին անջատ է պետությունից, իսկ արդեն սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում հոդված 17-ի 2-րդ կետում՝ կրոնական կազմակերպություններն են անջատ պետությունից: Այլ կերպ ասած սահմանադրության նոր տարբերակում չի նշված, որ առաքելական Եկեղեցին անջատ է պետությունից:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 2-րդ՝ «Մարդու և քաղաքացու իիմնական իրավունքները և ազատությունները» գլուխը բաղկացած է 34 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Մարդու և քաղաքացու իիմնական իրավունքները և ազատությունները» գլուխը բաղկացած է 58 հոդվածից:

Սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում ավելացված է ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը, երեխայի իրավունքը, մարդու ազատ գործելու իրավունքը, պատշաճ վարչարարության իրավունքը, տեղեկություններ ստանալու իրավունքը, հանրագիր ներկայացնելու իրավունքը, քաղաքական ապաստանի իրավունքը, արտաքսման կամ հանձնման արգելքը, արդար դատաքննության իրավունքը, մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը, հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը, համաչափության սկզբունքը, որոշակիության սկզբունքը:

2005թ. ընդունված սահմանադրության 23 հոդվածում նշված է, որ յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ: Սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում Հոդված 33-ի 3-րդ կետում նշված է, որ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ, եթե դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով: Այլ կերպ ասած պետական անվտանգության պաշտպանության հիմնավորմամբ նոր սահմա-

նադրության պայմաններում առանց դատարանի որոշման կարող են գաղտնալսվել խոսակցություններ:

2005թ. ընդունված սահմանադրության 39-րդ հոդվածում նշվում է, որ հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում Հոդված 38-ի 1-ին կետում նշված է, որ պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Այլ կերպ ասած գործող սահմանդրության մեջ հստակ սահմանված է հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու հանգամանքը, որը փոփոխման ենթակա չէ, իսկ առաջարկվող բարեփոխումներով այդ ժամանակահատվածը կարող է փոփոխվել օրենքի ուժով ցանկացած հնարավոր պարբերականությամբ՝ ազդելով կրթական որակի և արդյունավետության վրա:

2005թ. ընդունված սահմանադրության 29-րդ հոդվածում չկա որևէ սահմանափակող դրույթ կարծիքի ազատ արտահայտման իրավունքի իրացման վերաբերյալ: Սակայն սահմանադրական բարեփոխումների նոր տարբերակում Հոդված 42-ի 3-րդ կետում նշված է, որ կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Այլ կերպ ասած կարծիքի ազատ արտահայտման իրավունքի սահմանափակումները այնքան լայն են, որ դժվար է խոսել խոսքի ազատության պաշտպանվածության մասին:

Դարձ է նկատել, որ հավաքների ազատությունը սահմանափակող որևէ դրույթ առկա չէ գործող սահմանադրության մեջ, իսկ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ այդ սահմանափակումներն այնքան լայն են, որ դժվար է խոսել հավաքների ազատության իրավունքի իրացման պետական իշխանության շահագրգռվածության մասին:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի 46-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ օրենքով սահմանված դեպքերում կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել Սահմանադրական դատարանի որոշմամբ: Այն կուսակցությունները, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի

տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով, հակասահմանադրական են և ենթակա են արգելման Սահմանադրական դատարանի որոշմամբ: Նման դրույթը բավականին վտանգավոր է, քանի որ սահմանադրական կարգը բռնի տապալելու փորձ անողներին պետք է ներկայացնել պատժի իրենց կատարած արարքի շրջանակներում, ոչ թե կուսակցությունը ամբողջությամբ փակել: Այն դեպքում երբ ուղղակի հայտարարվում է սահմանադրական կարգի բռնի տապալելու վերաբերյալ, նման դեպքում ևս չի կարելի փակել կուսակցությունը, քանի որ դա հստակ կարող է դիտվել ուղղակի ազատ կամարտահայտման իրավունքի սահմանափակում:

Գործող սահմանադրության մեջ և առաջարկվող բարեփոխումների փաթեթի մեջ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի 60-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ կետերով սահմանվել են նոր դրույթներ, որոնք չկան գործող սահմանադրության 31-րդ հոդվածում: Խոսքը սեփականության իրավունքի դրույթների մասին է: Մասնավորապես, առաջարկվող բարեփոխումների փաթեթում ավելացվել են հետևյալ դրույթները.

- սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով,

- յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Այլ կերպ ասած սեփականության օգտագործման արդյունքում վճարման անհրաժեշտ հարկերն ու դրան հավասարեցված վճարները ոչ թե օրենքի պահանջ են մնում, այլ դառնում են սահմանադրական նորմ:

Տարընթերցման հնարավորություն է տալիս սեփականության իրավունքի սահմանափակումը այլոց իրավունքների պաշտպանության նպատակով: Անհասկանալի է մնում այլոց ասելով ում ի նկատի ունեն և ինչու պետք է այլոց իրավունքները

ավելի բարձր լինեն քան սեփականատիրոջ իրավունքները, երբ սահմանադրության մեջ նշվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև:

Յարկ է նկատել, որ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների շրջանակում արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանփակումները տարածվում են սահմանադրության 2-րդ գլխի 38 հոդվածների վրա: Գործող սահմանադրության դեպքում սահմանափակումները տարածվում են ընդամենը 17 հոդվածների վրա:

Ընդհանուր առմամբ սահմանադրական բարեփոխումները մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների իմաստով նախատեսում են ավելի շատ իրավունքներ, քան գործող սահմանադրությունը: Հիմնախնդիրը կայանում է նրանում, որ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների շրջանակում մարդու հիմնարար իրավունքների իրացումն ավելի խիստ է սահմանափակված, քան գործող սահմանադրության դեպքում, երբ սահմանափակող գործոններ գրեթե չկան: Մարդու հիմնարար իրավունքների ու ազատության քանակով չի որոշվում ժողովրդավարական կարգը, այլ դրանց իրացման ազատությամբ: Առաջարկվող բարեփոխումները բավականին լայն ֆորմատով սահմանափակում են այդ իրավունքների իրացումը: Գործող սահմանադրության 2-րդ գլխի 48-րդ հոդվածը սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթում վերածվել է առանձին գլխի՝ «Տնտեսական, սոցիալական մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները» վերնագրով: Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի 82-85-րդ հոդվածները սահմանում են աշխատանքի պայմանները, սոցիալական ապահովությունը, արժանապատիվ գոյությունը և նվազագույն աշխատավարձը, առողջության պահպանությունը:

Յարկ է նկատել, որ 82-85-րդ հոդվածներում նշվում է.

- յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք,

• յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմագավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք,

• յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք,

• յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք,

• նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:

Այժմ համեմատենք պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնք բերված են սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ: Հարկ է նկատել, որ գործող սահմանադրությամբ որպես պետության քաղաքականության հիմնական նպատակներ սահմանված են 12 նպատակներ, իսկ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների փաթեթով՝ 16:

Գործող սահմանադրությամբ պետական քաղաքականության նպատակն է ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանությունը և հովանավորումը, իսկ առաջարկվող բարեփոխումների փաթեթով՝ ծնելիության և բազմազավակության խթանումը: Այլ կերպ ասած սահմանադրական բարեփոխումների փաթեթում ընտանիքը չի համարվում պետական քաղաքականության նպատակ:

Գործող սահմանադրությամբ պետական քաղաքականության նպատակ է խթանել բնակարանային շինարարությունը, նպաստել յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը, իսկ առաջարկվող բարեփոխումների փաթեթով՝ բնակարանային շինարարության խթանումը: Այլ կերպ ասած սահմանադրական բարեփոխումների փաթեթում քաղաքացու բնակարանային պայմանների բարելավումը չի համարվում պետական քաղաքականության նպատակ:

Սահմանադրական բարեփոխումների փաթեթում պետական քաղաքականության նպատակներում գործող սահմանադրության մեջ ամրագրված նպատակներից ներառված չէ.

- իրականացմել ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն,

**Փոխարենը ներառված են.**

- գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը,
- կանաց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը,
- երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը,
- սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը,
- տարածքային համաչափ զարգացումը,
- բարեգործության խթանում՝ մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Տնտեսական առումով նոր սահմանադրական բարեփոխումների փաթեթը ներառում է ավելի շատ տնտեսական նպատակներ քան գործող սահմանդրությունը: Մասնավորապես սահմանադրական բարեփոխումների փաթեթով պետական քաղաքականության նպատակների մեջ մտնելու են՝ սպառողների շահերի պաշտպանությունը, գործարար միջավայրի պաշտպանությունը և ձեռնարկատիրության խթանումը, տարածքային համաչափ զարգացումը: Զեռնարկատիրության խթանման նպատակադրմանը քայլ է արվուն անցնելու առաջարկի տնտեսությանը, այն պարագայում, եթե գործող սահմանադրությամբ տնտեսական քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես պահանջարկի տնտեսություն:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 4-րդ՝ «Ազգային ժողովը» գլուխը բաղկացած է 22 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Ազգային ժողովը» գլուխը բաղկացած է 34 հոդվածից:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ազգային ժողովը հանդիսանում է ժողովրդի ներկայացուցչական մարմինը, համարվում է օրենսդիր իշխա-

նություն և վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է սահմանադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ազգային ժողովը բաղկացած պետք է լինի 101 պատգամավորից գործող 131-ի փոխարեն: Կարևորվում է նաև կայուն խորհրդարանական մեծամասնության գաղափարը, որը, եթե չի ձևավորվում ընտրության միջոցով, ապա անցկացվում է ընտրությունների երկրորդ փուլ:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ազգային ժողովի նիստերը փակ լինելու դեպքում քվեարկություն չի անցկացվում: Նույն փաթեթի շրջանակներում ազգային ժողովը որոշումները կայացնում է մեծամասնությամբ կամ ծայների 3/5-ով:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ազգային ժողովը վարչապետին անվստահություն կարող է ներկայացնել նրա պաշտոնավարումից 1 տարի հետո պատգամավորների թվի 1/3-ի կողմից, եթե միաժամանակ առաջարկվում է վարչապետի նոր թեկնածություն: Որոշումը կայացվում է քվեարկող պատգամավորների ծայների մեծամասնությամբ:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ազգային ժողովը, կառավարության առաջարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ կարող է ընդունել պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին որոշում:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով ռազմական հարձակման ժամանակ կառավարությունը կարող է հայտարարել ռազմական կամ արտակարգ դրություն, ուղերձով դիմել ժողովրդին և իրականացնել համապատասխան միջոցառումներ: Ազգային ժողովն անհապաղ հրավիրում է նիստ ու կարող է չեղալ համարել կառավարության որոշումը:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 3-րդ՝ «Հանրապետության նախագահը» գլուխը բաղկացած է 12 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական

բարեփոխումների փաթեթում «Հանրապետության նախագահը» գլուխը բաղկացած է 22 հոդվածից:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով հանրապետության նախագահը հանդիսանում է պետության գլուխը և հետևում է սահմանադրության պահպանմանը: Գործող սահմանադրությամբ հանրապետության նախագահը ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը, ինչպես նաև հանդիսանում է Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը:

Հարկ է նշել, որ սահմանադրական բարեփոխումների փաթեթով պետական իշխանության ոչ մի մարմին չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավոր:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով հանրապետության նախագահը ընտրվում է 7 տարի ժամկետով և կարող է զբաղեցնել այդ պաշտոնը միայն մեկ անգամ: Հանրապետության նախագահ կարող է ընտրվել 40 տարին լրացած և վերջին վեց տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անկուսակցական անձը:

Գործող սահմանադրությամբ հանրապետության նախագահը ընտրվում է 5 տարի ժամկետով և կարող է զբաղեցնել այդ պաշտոնը առավելագույնը 2 անգամ: Հանրապետության նախագահ կարող է ընտրվել 35 տարին լրացած և վերջին 10 տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող անձը:

Գործող սահմանադրությամբ հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակի ընտրությունների միջոցով և ընտրվում է այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով հանրապետության նախագահն ընտրվում է ազգային ժողովի կողմից: Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք քառորդը:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով հանրապետության նախագահը վարչապետի առաջարկությամբ փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում, ինտ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային

կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին, նշանակում և ազատում է զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն իրամանատարական կազմը:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 5-րդ՝ «Կառավարությունը» գլուխը բաղկացած է 5 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Կառավարությունը» գլուխը բաղկացած է 15 հոդվածից:

Գործող սահմանադրության համաձայն Կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Համաձայն սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի կառավարությունը կազմված պետք է լինի վարչապետից, առավելագույնը երեք փոխվարչապետերից և առավելագույնը 18 նախարարներից:

Համաձայն սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի կառավարության կազմի անդամ կարող են լինել առնվազն 25 տարեկան և վերջին 4 տարին ՀՀ քաղաքացի հանդիսացող անձինք: Գործող սահմանադրությամբ կառավարության անդամ կարող են լինել միայն ՀՀ քաղաքացիները առանց տարիքային սահմանափակման:

Համաձայն սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի վարչապետն ընտրվո՞ւմ է ազգային ժողովի մեծամասնության կողմից՝ ներկայացված թեկնածուին տրված ձայների մեծամասնությամբ: ՀՀ նախագահն անհապաղ նշանակում է ազգային ժողովի կողմից ընտրված վարչապետի թեկնածուին: Կառավարության կազմը նշանակվում է հանրապետության նախագահի կողմից վարչապետի

ներկայացմամբ: Կառավարության ծրագիրը հաստատվում է Ազգային ժողովի կողմից:

Ի տարբերություն գործող սահմանադրության, սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթում անվտանգության խորհուրդը ղեկավարում է վարչապետը՝ գործող Սահմանադրությամբ նախատեսված հանրապետության նախագահի փոխարեն:

Գործող և առաջարկվող սահմանադրական բարեփոխումների մեջ անփոփոխ է թողնվել հետևյալ դրույթը՝ Կառավարությունն իրականացնում է ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականություն:

Գործող սահմանադրությամբ գերագույն իրամանատարը հանրապետության նախագահն է, իսկ առաջարկվող բարեփոխումների փաթեթով՝ պատերազմի ժամանակ՝ վարչապետը:

Ըստ սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի Հանրային խորհուրդը Կառավարության խորհրդակցական մարմին է:

Գործող սահմանադրության և առաջարկվող սահմանադրական բարեփոխումների փաթեթի համեմատական վերլուծության շրջանակներում չի քննարկվել դատական իշխանություններին վերաբերող դրույթները: Մեր կողմից անդրադարձ է կատարվել տեղական ինքնակառավարմանը և Կենտրոնական բանկին:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 7-րդ «Տեղական ինքնակառավարումը» գլուխը բաղկացած է 6 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Տեղական ինքնակառավարումը» գլուխը բաղկացած է 11 հոդվածից:

Ըստ սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով, սակայն ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Գործող սահմանադրությամբ ընտրությունները լինում են ուղղակի և համայնքի ղեկավարներն ընտրվում են 4 տարի ժամկետով:

Հարկ է նկատել, որ սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթի համաձայն պետությունն իր հնարավորությունների շրջանակներում միջոցներ է հատկացնում համայնքների համաչափ զարգացումն ապահովելու համար:

2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ հանրաքվեով ընդունված սահմանադրության 4-րդ՝ «Ազգային ժողովը» գլխի 83.3 հոդվածը վերաբերում է Կենտրոնական բանկին և բաղկացած է 1 հոդվածից, իսկ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ հանրաքվեի դրված Սահմանադրական բարեփոխումների փաթեթի մեջ «Կենտրոնական բանկը» գլուխը բաղկացած է 2 հոդվածից:

Սահմանադրական բարեփոխումների նոր փաթեթով Կենտրոնական բանկի հիմնական նպատակներն ավելանում են: Գործող սահմանադրության շրջանակում ԿԲ-ի հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է: Առաջարկվող բարեփոխումներով ԿԲ-ի հիմնական նպատակին ավելանում է նաև ֆինանսական կայունության ապահովումը:

Հիմնական էական փոփոխությունը կայանում է այս նոր նպատակի ավելացումը, ինչը հակասության մեջ է մտնում գների կայունության ապահովման դրույթի իրականացման հետ:

ՀՀ-ում ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար շատ ժամանակ անհրաժեշտ է փողի գինը էժանացնել կամ ավելացնել փողի բազան: Այս քայլերը վկայում են խթանող դրամավարկային քաղաքականության մասին: Խթանող դրամավարկային քաղաքականության դեպքում տեղի է ունենում ՀՆԱ-ի աճ, ինչը ուղեկցվում է գնաճով պայմանավորված փողի բազայի ավելացման կամ տոկոսադրույթների նվազմամբ: Նման իրավիճակը հակասում է գնաճի նպատակադրման ռազմավարությանը, որի նպատակն է գների կայունության ապահովումը: Հետևաբար ԿԲ-ի համար բավականին դժվար է լինելու համակարգել այս երկու նպատակները:

Ընդհանուր առմանը առաջարկվող սահմանադրական բարեփոխումները բավականին նոր հոդվածներ են պարունակում, որոնք միտված են տնտեսության մեջ աշխատացում մտցնելու և առաջարկի տնտեսություն ստեղծելու: Մյուս կողմից հարկ է նկատել, որ որքան էլ մանրամասն սահմանված են մարդու հիմնարար ազատու-

թյունների և իրավունքների դրույթները, նույնքան էլ հստակ սահմանված են դրանք սահմանափակող բավականին լայն ու ընդգրկուն հասկացություններ պարունակող սահմանափակումներ: Պետք է նշել, նաև որ առաջարկվող սահմանադրության բարեփոխումների փաթեթում բացակայում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության ապահովման երաշխավորի ինստիտուտը:

Սահմանադրության մեջ տնտեսական մասը բարելավելով, միևնույն ժամանակ մարդու իրավունքների իրացման ինստիտուտի նկատմամբ բազմաթիվ սահմանափակումներ դնելով՝ միջնաժամկետ հեռանկարում չեն կարող հանգեցնել տնտեսական զարգացման:

Գործող սահմանդրության մեջ եթե ավելացվեր առաջարկվող բարեփոխումների տնտեսական հատվածը, ապա տնտեսական զարգացումը միջնաժամկետ հեռանկարում ավելի իրատեսական կլիներ:

Սահմանադրականության մակարդակի հետազոտման պայմանական օրինակ<sup>74</sup>: Խնդիրը վերաբերելու է հասարակական կյանքի մեր ժամանակներում առավել սևեռուն քննության առարկա հանդիսացող այնպիսի երևույթի լուսաբանմանը, ինչպիսին սահմանադրականության մակարդակի (ՍՍ) որոշման հիմնախնդիրն է երկրների համեմատություններում:

Այստեղ բնավ նպատակ չենք ունեցել անդրադառնալ ՍՍ տարրողունակ և բազմապլան՝ իրավական, ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական և այլ հատույթներով պարփակված հասկացության պարզորոշմանը, իրականացնելու բովանդակային լուրջ համեմատական վերլուծություններ: Դա պարզունակ կլիներ առնվազն այն պատճառով, որ ՍՍ բնութագրող ինդիկատորները (հայտանիշները), հաշվարկվող ցուցիչները զերծ չեն պայմանականություններից, դրանց գնահատման մեթոդաբանությունը ինտենսիվ գիտական մշակումների փուլում է:

Տարբեր գիտնականների կողմից առաջ են քաշվում սահմանադրականության մակարդակի գնահատման տարբեր չափանիշներ, տարբեր եզրեր: Իհարկե, եզրերից յուրաքանչյուրի անկատարությունը հանգեցնում է ամբողջական համակարգի թերարժեքության:

Սահմանադրականության համաթվի տվյալների աղբյուրները բազմաթիվ են (տե՛ս հավելված 1): Ամենատարբեր բազմաչափ երևույթները բնութագրող համար-

<sup>74</sup>Աղբյուրը. Յ.Սարգսյան, Գ.Տոնոյան, Ն.Քոչինյան, «Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում», Եր., Զանգակ, 2015թ., էջ 36-52:

վերը (մրցունակություն, տնտեսական ազատություն և այլն՝ տնտեսության ոլորտում) տարեցտարի աճում են, ներկայում հասնում շուրջ 200-ի, որոնց մասին ամփոփ տեղեկատվություն կարելի է գտնել գրականությունում<sup>75</sup>: Երկրների սահմանադրականության մակարդակի փոփոխություններն ու միտումները բացահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ցուցանիշների ժամանակային շարքերը, որոնց տվյալները շատ դեպքերում հասանելի են: Իրավիճակի գնահատման ռազմական համարժեք հետազոտությունները պահանջում են բազմաչափ վիճակագրական վերլուծություններ պանելային տվյալների հիման վրա:

Այդուհանդերձ, որպես դիսկրետ մոդելավորման կիրառություններից մեկը՝ զուտ ցուցադրական նպատակով բերել ենք այնպիսի ցուցանիշի քանակական գնահատմանն ու երկրների համեմատություններում դրա դիտարկմանը, ինչպիսին սահմանադրականության կայունության ցուցանիշն է, որը որոշակի հնդիկատորների (հայտանիշների) համակարգով հաշվարկվող ինտեգրալային ցուցանիշ է.

$$U_i = \sum_{j=1}^m \left[ \frac{(x_{ij} - x_j^{(\text{avg})})}{\sigma(x_j)} \prod_{\beta=1, \beta \neq j}^m (1 - \gamma_{\beta j}) \right]$$

### որտեղ

Այս իրող երկրի սահմանադրականության կայունության ինտեգրալային մակարդակն է,

$x_{ij}$ -ն իրող երկրի  $j$ -րդ հնդիկատորի արժեքն է,

$x_j$  (էտ) - ն էտալոնային երկրի  $j$ -րդ հնդիկատորի արժեքն է,

$\gamma_{\beta j}$  - ն զույգային կոռելյացիայի արժեքն է,

$\sigma(x_j)$  - ն  $j$ -րդ հնդիկատորի միջին քառակուսային շեղումն է


( $i = 1, 2, \dots n; j = 1, 2, \dots m$ ):

<sup>75</sup> Bandura R., “A Survey of Composite indices Measuring Country Performance: 2008 Update”, Handbook on Constructing Composite Indicators, “Methodology and user guide”, Corrigenda to OECD publication may be found on line at: [www.oecd.org/publishing/corrigenda](http://www.oecd.org/publishing/corrigenda). OECD 2008.

Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշը որոշ հեղինակների կողմից հաշվարկվում է իրավական պետության, դեմոկրատական զարգացման և սոցիալ-տնտեսական բնութագրիչների համախմբով։ Մեր պայմանական օրինակում ներառվել են ցուցանիշներ առաջին երկու խմբերից։ Որպես Էտալոնային երկրի ցուցանիշ՝ պայմանականորեն դիտարկվել է Երկրների համախմբի միջին արժեքը, որն այստեղ ունի սույն հաշվարկային բնույթ։ Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշը հաշվարկվել է Ֆրիդմ Հաուսի (Freedom House) տվյալների հիման վրա՝ 2014թ. անցումային տնտեսությանը երկրների կտրվածքով։ Այդ տվյալները ներկայացված են հավելված 2-ում՝ հետևյալ հապավումներով։

1. EP (Electoral Process)—ընտրական գործընթաց,
- 2.CS (Civil Society)—քաղաքացիական հասարակություն,
- 3.IM (Independent Media)—անկախ մեդիա,
- 4.NDG (National Democratic Governance)—ազգային դեմոկրատական կառավարում,
5. LDG (Local Democratic Governance)—տեղական դեմոկրատական կառավարում,
- 6.JFI (Judicial Framework and Independence)—անկախ դատական համակարգ,
- 7.CO (Corruption)—կոռուպցիա,
8. DS (Democracy score)—դեմոկրատիայի աստիճան։ Հաշվարկների արդյունքում երկրները դասակարգվել են սահմանադրականության կայունության նվազման կարգով [–110; 87] միջակայքում հետևյալ կերպ։

## Գծապատկեր 1. Սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշներ



Օգտվելով անցումային տնտեսությամբ 29 երկրների ութ հայտանիշներով ներկայացված ցուցանիշների առյուսակից (տե՛ս հավելված 2)՝ կատարենք նշված երկրների որոշակի խմբերի թեստային հետազոտություններ:

Առանձնացվել են այն երկրները, որոնք սահմանադրականության կայունության ինտեգրալային ցուցանիշով զրոյին մոտ են (տե՛ս գծապատկեր 1) և միմյանցից քիչ են տարրերվում (տե՛ս հավելված 2): Երկրների այդ խումբը հետևյալն է.

1. Չեռնոգորիա (60),
2. Մակեդոնիա (67),
3. Ալբանիա (80),
4. Բոսնիա և Հերցեգովինա (77),
5. Ուկրաինա (90),
6. Վրաստան (98):

Յուրաքանչյուր երկրի համար փակագծերում նշված է աշխարհի երկրների շարքում տվյալ երկրի տեղը՝ ըստ գնողունակության համարժեքով արտահայտված համախառն ազգային եկամտի ցուցիչի, որը բերված է 2012 թ. համար (աղբյուր՝ ՀԲ կայքի տվյալները):

Վերլուծությունները ցույց են տալիս, որ անցումային երկրների համար էապես փոխվում է հայտանիշների առաջնայնության, կարևորության պատկերը: Օրինակ, ինչպես տեսնում ենք, կոռուպցիան, որը դոմինանտ էր սահմանադրականության ինտեգրալային մակարդակով 0–ի շրջակայքում գտնվող երկրների դասի համար, իր

տեղը գիշում է «ընտրական գործընթաց», «անկախ մեղիա» և «դեմոկրատիայի աստիճան» հայտանիշներին: Կոռուպցիան կարևոր հայտանիշ չէ երկրների այս խմբի համար, որովհետև դիտարկվող խմբի բոլոր երկրների համար էլ կոռուպցիայի մակարդակը գրեթե նույնն է:

Որակական ուսումնասիրությունը, որը պայմանավորելու է խնդրո առարկա վերլուծության հետագա ընթացքը, կարող է ընթանալ հետևյալ սխեմայով: Տարաբնույթ չափանիշներով որոշված դասերի համար.

- Վերջանվում է դիտարկվող հայտանիշների կարևորության չափը,
- Դասակարգվում են դիտարկվող երկրները,
- Որոշվում է յուրաքանչյուր դասում ընդգրկված ամենատիպական երկիրը,
- Տեղեկատվությունն օգտագործվում է երկրների մի դասից մյուսը «տեղափոխման» գործընթացով բնութագրվող կառավարման խնդիրներում:

Կառավարման խնդիրները ինքնուրույն հետազոտության առարկա են, որոնց ֆորմալ ձևակերպման վերաբերյալ մեր մոտեցումները մշակման փուլում են: Յուրաքանչյուր «բազմաչափ դիտարկում» (տվյալ դեպքում՝ երկիր) որոշակի պատահական մեծության «իրացում» է: Այս ճանապարհով ստացվող բազմաչափ պատահական մեծության կառուցվածքի բացահայտումը, վիճակագրական վերլուծությունների բնույթից ելնելով, պահանջում է մեծ թվով դիտարկումներ, որոնց հետազոտման ընթացքում ուսումնասիրվում են տվյալ օբյեկտը կամ երևույթը բնութագրող հայտանիշների միջև կախվածությունները:

Խնդիրն այլ է ոչ մեծ թվով դիտարկումների դեպքում, երբ առաջացող դժվարությունները բնավ չեն սահմանափակվում տեխնիկական հնարավորություններով, ինչպիսիք են ընտրանքների վիճակագրական համասեռությունը և այլն: Այս իրավիճակում բախվում ենք դժվարությունների հետ, որոնք պայմանավորված են ոչ միայն ելակետային տվյալների համախմբերի փոքր թվով, այլև ուսումնասիրվող գործընթացի բարդությամբ, դիտարկվող միավորների անհամասեռությամբ և փոփոխականությամբ, որակական հայտանիշների էական դերով: Այդ պատճառով օբյեկտը բնութագրող հայտանիշների (բնականաբար, ընտրված համախմբի շրջանակներում) միջև կապերը բացահայտելու համար դրանցից յուրաքանչյուրի ազդեցության չափի որոշումը (ուսումնասիրվող երևույթի առումով) և հետագա կառավարումը, այն է՝ միջօբյեկտային (միջերկրային) հայտանիշային համամասնությունների կառավարչական ազդեցությունների արդյունավետ գործիքակազմի ընտրությունը, պահանջում են ճանաչողության և դասակարգման մեթոդների կիրառում:

## 2.3. ՀՀ գործադիր իշխանության կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքային մոդելը

Կառավարության և ոլորտային նախարարությունների միջև, ինչպես նաև նախարարությունների ու կառավարությանն առընթեր մարմինների միջև առկա են գործառույթների էական կրկնություններ և անհստակություններ, ինչը գործնականում հանգեցնում է կառավարման արդյունավետության ցածր մակարդակի, արդյունքների համար հաշվետվելիության պակասի, համակարգման հիմնախնդիրների և առկա միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման: Պետական կառավարման մարմինների մեծամասնությունը հստակ չի սահմանում իր գործունեության խնդիրներն ու ռազմավարական նպատակները: Ծատ հաճախ դրանց կազմակերպական կառուցվածքը, հիմնական գործառույթներն ու կանոնակարգերը ենթարկվում են չիհմնավորված փոփոխության, ինչը հանգեցնում է լուրջ խառնաշփոթի և անարդյունավետության: Կառավարության, նախարարությունների, կառավարությանն առընթեր մարմինների, տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև շատ բնագավառներում պարտականությունների բաժանումը նույնպես հստակ չէ: Ոլորտային քաղաքականություն մշակող նախարարությունների գործունեության համակարգման գործում շարունակում են սահմանափակ մնալ կառավարության կարողությունները: Նախ, զարգացած չեն լավագույն քաղաքականության խրախուսման կանոններն ու փորձը (ինչպիսիք են, օրինակ, կառավարական հանձնաժողովները, քաղաքականության հարցերի բազմափուլ ու ազատ քննարկումները), քաղաքականության կիրառման բյուջետային ծախսի հաշվարկի մոտավորությունը, քաղաքականության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև աղքատությունը և կոռուպցիան: Անբավարար վիճակում են նաև կառավարությանը ենթակա կազմակերպությունների կողմից քաղաքականության կիրառման, մշտադիտարկման և ազդեցության գնահատման համակարգերը: Քաղաքականության մշակման վրա ազդում է համապատասխան գիտելիքներով օժտված պետական ծառայողների բացակայությունը, քաղաքականության վերլուծությունների համար պահանջվող համապատասխան տեղեկատվության անմատչելիությունը, կառավարման հաստատու-

թյունների միջև անբավարար համակարգման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ քննարկումների բացակայությունը։ Որպես արդյունք, քաղաքականությունը մշակվում ու փոփոխվում է չհամակարգված եղանակով, և դրա հիմնավորումը հաճախ պարզ չէ ինչպես այդ քաղաքականությունն իրականացնող պատասխանատու պաշտոնյաների համար, այնպես էլ այդ քաղաքականության ազդեցության կամ ներգործության տակ գտնվող անձանց համար։

Այսպիսով, քաղաքականության գործառույթը հաճախ չի իրականացվում արդյունավետորեն կամ իրականացվում է կամայականորեն և առանց որևէ համակարգման, ինչը հանգեցնում է դրա նկատմամբ վստահության անկմանն ու կոռուպցիայի համար նախադրյալների առաջացմանը։

Պետական կառավարման համակարգի կառավարման արդյունավետության ցածր մակարդակի հիմնական պատճառների շաղքին կարելի է դասել.

- ❖ հանրապետական և տարածքային կառավարման մարմինների միջև լիազորությունների և գործառույթների անհամաչափ բաշխումը,
- ❖ գործառույթների կրկնությունները տարբեր մարմիններում, կառավարման խնդիրների ոչ հստակ ձևավորումը,
- ❖ օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի անկատարությունը,
- ❖ կառավարման ոչ ռացիոնալ կառուցվածքների առկայությունը,
- ❖ աշխատողների մասնագիտական ցածր մակարդակը, կարբերի ընտրության, նրանց պաշտոնական առաջխաղացման մեխանիզմների անկատարությունը, կադրերի բարձր հոսունությունը, նրանց անպաշտպանվածությունը և ցածր վարձատրությունը։

ՀՀ պետական կառավարման մարմիններում գործառությային վերլուծության արդյունքներով 2000-2014թթ. հանրապետական գործադիր իշխանության մարմիններին (նախարարություններ, կառավարության առընթեր մարմիններ, տեսչություններ և այլ գերատեսչություններ) հատուկ է եղել նաև կանոնադրությունների կառուցվածքների նկատմամբ խիստ տարբերակված մոտեցումների առկայությունը։ Նախարարությունների՝ այդ ժամանակ գործող կառուցվածքներում տարբերակվում էին կազմակերպական և իրավական կարգավիճակի առումով տարբեր, հաճախ

բնույթով միանման գործառույթներ իրականացնող, բայց տարբեր անվանումներով ու կարգավիճակներով գործող 17-ից ավելի տիպի կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես օրինակ՝ խուրհուրդ, կոլեգիա, հանձնաժողով, ֆոնդ, գործերի տնօրինություն, գործերի կառավարչություն, դեպարտամենտ, տեսչություն, գործակալություն, գլխավոր վարչություն, Վարչություն, բաժին, ենթաբաժին, խումբ, ծառայություն, նախարարի աշխատակազմ, նախարարության աշխատակազմ և այլն: Այսպիսի մոտեցումն իրականության մեջ առաջ էր բերում խառնաշփոթ, անարդյունավետ կառավարում, աշխատակազմների կառուցվածքային ստորաբաժանումներում հաստիքների արհեստական ուռնացում: Նման իրավիճակի պատճառը կառուցվածքային ստորաբաժանումների, գործառույթների և խնդիրների ոչ ճիշտ ձևակերպումն էր, կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերի խախտումը, կառավարման մակարդակների քանակի ու կառուցվածքային ստորաբաժանումների սահմանման միասնական չափորոշիչների բացակայությունը<sup>76</sup>:

ՀՅ պետական կառավարման մարմինների գործառության վերլուծության շրջանակով սահմանված սկզբունքներին համապատասխան գործառույթների դասակարգումը, ինչպես նաև դասակարգված ու խմբավորված գործառույթներին համապատասխան կառավարման կառուցվածքային միավորների վերակազմավորումը պայմանավորեց **քաղաքականության մշակման գործառույթների** (ռազմավարության մշակում, ռազմավարական պլանավորում, իրավական փաստաթղթերի նախագծերի կազմում, մշակում, պայմանագրերի ու ստանդարտների, նվազագույն չափորոշիչների, նորմերի մշակում, քաղաքականության վերլուծություն ու գնահատում, կանխատեսում) վերապահումը հանրապետական գործադիր մարմինների աշխատակազմների ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումներին, մասնավորապես, վարչություններին, բաժիններին:

**Ծառայությունների մատուցման գործառույթների** (տարբեր բնույթի ծառայությունների մատուցում ներքին՝ պետական այլ մարմիններին և արտաքին՝ քաղաքացիներին և իրավաբանական-կազմակերպական կառույցներին, ֆերմերներին, անտառապահներին, ձկնորսներին և այլ հաճախորդներին ապրանքների և ծառայություն-

<sup>76</sup>Խուղավերդյան Ա.Վ., Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ, էջ 153:

ների մատուցում) իրականացումը վերապահվեց գործակալություններին, պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

Կանոնակարգող (վերահսկողական կարգավորիչ) գործառույթները (արտոնագրում, լիցենզավորում, քվոտավորում, հավատարմագրում, որոնք առանձնացվում են գործունեության կանոնները սահմանող քաղաքականության մշակման գործառույթներից) վերապահվեց գործակալություններին, իսկ վերահսկող գործառույթների մասով՝ տեսչություններին:

Համակարգող (կատարողականների մշտադիտարկման) գործառույթները (դրված խնդիրների լուծման ուղղությամբ տարվող աշխատանքների ընթացքի վերլուծությունը և տարբեր արդյունքների համադրումն ու սահմանված ժամկետներում և աշխատանքների որակով կատարման ընթացքի վերահսկումը) վերապահվեցին աշխատակազմի կառուցվածքային ինքնուրույն միավորներին:

*Օժանդակող (սպասարկող) գործառույթները* (անձնակազմի, նյութական և ֆինանսական ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգերի, ենթակառույցների և քարտուղարական ծառայությունների արդյունավետ գործունեությանն ուղղված գործառույթները) վերապահվեցին աշխատակազմի ինքնուրույն կառուցվածքային միավորներին, այդ թվում՝ քարտուղարությանը<sup>77</sup>:

Այս չափորոշիչների պայմաններում ՀՀ հանրապետական գործադիր մարմնի կառավարման կազմակերպական կառուցվածքը միասնականացվեց (տե՛ս, Հավելված 3): Քիմք ընդունելով հանրապետական գործադիր մարմինների կառավարման կազմակերպական կառուցվածքի առաջարկված մոդելը՝ ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» իրամանագրում սահմանվեցին հանրապետական գործադիր մարմինները՝ նախարարությունները, գործակալությունները, տեսչությունները: Այս իրամանագրով գործակալություններն ու տեսչությունները ճանաչվեցին որպես պետական մարմիններ: Իսկ ինչպես սահմանում է ՀՀ պետական կառավարչական հիմնարկների մասին օրենքը. «Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվում է Հանրապետության Նա-

<sup>77</sup>Խուլավերոյան Ա.Վ., Հանրային ոլորտի քարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ, էջ 129:

խագահին, օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններին, դատախազությանը, ինչպես նաև օրենքի հիման վրա ստեղծված՝ պետական կառավարչական գործառույթների իրականացնող այլ պետական մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով<sup>78</sup>: Այսպիսով, գործակալություններն ու տեսչությունները պետական կառավարչական հիմնարկի կարգավիճակ կարող էին ստանալ, եթե դրանք ստեղծվել էին օրենքով: Մինչդեռ, այդ տարիներին որպես պետական մարմիններ օրենքով ստեղծվել էին միայն առանձին հանձնաժողովներ և խորհուրդներ:

Գործակալություններին և տեսչություններին պետական կարգավիճակի սահմանման գաղափարի հիմքում ընկած էր այն, որ պետական կառավարման համակարգի հետագա բարեփոխումների ընթացքում, կառավարության կառուցվածքի վերանայման պայմաններում հանրապետական գործադիր մարմինները պետք է խոշորացվեին մի կողմից, կառավարությանն առընթեր մարմինների, մյուս կողմից, նոր ստեղծվող պետական մարմինների հաշվին: Դա էր վկայում նաև ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» հրամանագրի 2-րդ մասում տրված ձևակերպումը, ըստ որի՝ ՀՀ կառավարությանն առընթեր սահմանված պետական կառավարման մարմինները գործում են մինչև պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացի ավարտը: Դրա հետ մեկտեղ, կառավարման բարեփոխումների հետագա քայլերում արդեն նշնարվում էր գործակալությունների և տեսչությունների լիազորություններն օրենքով սահմանելու անհրաժեշտությունը, որը նաև հնարավորություն և առիթ էր հենց համանուն օրենքներով էլ ստեղծելու տեսչություններ և գործակալություններ՝ պետական մարմնի կարգավիճակով: Վերջինս ենթադրում է ոչ միայն գործառութային, այլև մարդկային, նյութական և ֆինանսական միջոցների կառավարման ինքնուրույնություն: Այդ տարիներին նոր ձևավորված կամ վերակազմավորված գործակալությունների և տեսչությունների փոքր չափերը, գործառութային ոչ լիարժեք ինքնուրույնությունը, ծառայությունների մատուցման չափորոշիչների, ինչպես նաև

<sup>78</sup>«Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք, հոդված 1 կետ 1:

ընթացակարգերի բացակայությունը հնարավորություն չէին տալիս գործակալություններն ու տեսչությունները ձևավորել որպես լիարժեք, ինքնուրույն պետական մարմիններ: Դրա հետ մեկտեղ, նախարարություններում, քաղաքականության, ռազմավարական պլանավորման, կանոնակարգման և կարգավորման գործառույթների թերզարգացվածությունը նույնպես պահանջում ու ստիպում էին դեռևս միասնական մեկ աշխատակազմում տեսնելու գործակալություններին ու տեսչություններին: Կարծես թե, ընտրված էր լավագույն կոնսենսուսը, փոխհամաձայնեցումն այդ մարմինների հետագա զարգացման գործում: Կյանքը ցույց տվեց այս թեզի գոյությունը, և որպես օրինակ այսօր արդեն մի շաբթ տեսչություններ ունեն սեփական գործունեությունը կանոնակարգող օրենքներ: Զեավորված բոլոր գործակալություններն ու տեսչությունները նախանշված ձևաչափով կայացան և այսօր գտնվում են ծառայությունների մատուցման որակի ու մատչելիության բարձրացման խնդրի իրականացման փուլում: Այս 2 ուղղություններն ել օրենսդրորեն ամրագրվեցին ինչպես ՀՀ 2005թ. Սահմանադրությամբ, այնպես էլ ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-174-Ն հրամանագրով:

Համաձայն ՀՀ Նախագահի 2008թ. հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի, կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները: ՀՀ նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները հանրապետական գործադիր մարմիններ են: ՀՀ նախարարությունն իր համակարգի մեջ մտնող պետական մարմինների և կազմակերպությունների նկատմամբ վերադաս մարմին է: Նախարարության համակարգը կազմված է նախարարից, նախարարի տեղակալներից, խորհրդականներից, մամուլի քարտուղարից, օգնականներից և ռեֆերենտներից, նախարարության աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններից, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ներից:

Նախարարություններում կառավարման արդյունավետության բարձրացման, ռազմավարական պլանավորման, քաղաքական մակարդակում որոշումների կայաց-

ման գործընթացում քաղաքականության տարբերակների, ռազմավարական ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման, համաձայնեցման նպատակով սոցիալական ոլորտի նախարարություններում հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ ստեղծվեցին նախարարներին կից քաղաքականության հարցերով խորհուրդներ<sup>79</sup>:

Նախարարության քաղաքականության հարցերով խորհրդի նպատակը նախարարության կառավարչական որոշումների համակարգված կայացմանն օժանդակելն է: Խորհրդի հիմնական խնդիրներն են՝ նախարարության համար մշակել կառավարության գործունեության ծրագրերից բխող ընդհանուր քաղաքականություն, սահմանել ծրագրերի և քաղաքականության առաջնայնությունները, կատարել նախարարության աշխատանքների տարեկան կտրվածքով պլանավորում, իրականացնել բյուջեի վերանայումն ու հաստատման ներկայացումը, սահմանել քաղաքականության ծրագրերի նպատակներն ու մշտադիտարկման ցուցանիշները, կատարել ծրագրերի և ծառայությունների որակի գնահատում, սահմանել նախարարության հաղորդակցային ռազմավարությունը և այլն:

Խորհրդում քննարկվող հարցերի շրջանակն ընդգրկում է.

1. Նախարարության համակարգի բարեփոխումների ընդհանուր քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև ոլորտային ռազմավարությունների առաջնահերթությունների սահմանումը,

2. ՀՅ կառավարության գործունեության ծրագրի, ազգային ռազմավարական ծրագրերի (Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր (ԱՀՈԾ), հակակոռուպցիոն, միջնաժամկետ ծախսերի և այլն) հիման վրա նախարարության գործունեության տարեկան ծրագրի ձևավորումը և գերակա ուղղությունների սահմանումը,

3. ՀՅ ազգային ռազմավարական ծրագրերի (ԱՀՈԾ, հակակոռուպցիոն, միջնաժամկետ ծախսերի և այլն), նախարարության համապատասխան ոլորտների մշակումը և պլանավորումը,

<sup>79</sup>«Առաջարկություններ նախարարին կից քաղաքականության հարցերով խորհրդի հետագա գործունեության վերաբերյալ» աշխատանքային փաստաթուղթ, հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր, 2007:

4. նախարարության տարեկան բյուջետային ծրագրերի պլանավորումը,
5. նախարարության քաղաքականության, ծրագրերի ոլորտում իրականացվող բարեփոխումների և դրանց գործնական ազդեցության գնահատման և մշտադիտարկման ցուցանիշները կամ դրանց վերանայումը,
6. նախարարության համակարգի կազմակերպությունների կողմից մատուցվող հանրային ծառայությունների մատուցման որակի և մատչելիության գնահատումը և վերանայումը,
7. նախարարության համակարգում և համակարգից դուրս տեղեկատվության տրամադրման ռազմավարությունը,
8. նախարարի նախաձեռնությամբ՝ ռազմավարությանը և քաղաքականության առնչվող այլ հարցեր:

Խորհրդի մասնակիցների շարքին են դասվում խորհրդի նախարարը, նախարարի տեղակալը, աշխատակազմի ղեկավարը, հրավիրված անձինք:

Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրով առաջարկվել է ՀՀ ՀԳՄ-ների, մասնավորապես նախարարությունների աշխատակազմներում ստեղծել ծրագրերի կառավարման վարչություն՝ առաջացած խնդիրները լուծելու և բացքողումները լրացնելու նպատակով<sup>80</sup>:

Առավել մեծ ուշադրություն է դարձվել օժանդակող և սպասարկող ծառայությունների վերլուծությանը: Դիտարկումները ցույց են տվել, որ նախարարությունների աշխատակազմների գործունեության կարևորագույն մասը կազմող կորպորատիվ կառավարչական գործառույթները կոնկրետացված ու նկարագրված չեն: Այս բացը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ այս գործառույթները նախ պետք է տարանջատվեն, այսպես կոչված, քաղաքականություն որոշող կամ սահմանող գործառույթներից: Մյուս կողմից, այս տեսակ գործառույթները դեռևս միասնականացված չեն բոլոր նախարարությունների համար: Դրա հետ մեկտեղ առանձին նախարարություններում այս գործառույթները՝ կառավարման կազմակերպական կառուցվածքների վերափոխումն իրականացվել է նախարարության հայեցողությանը համապա-

<sup>80</sup>«Առաջարկություններ ԱՀՈԾ և ծրագրային բյուջետավորման առումներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի գործառույթների զարգացման վերաբերյալ», Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի աշխատանքային փաստաթուղթ թիվ 49:

տասխան: Եթե որևէ նախարարությունում կարևորվել է իրավաբանական ծառայության գործառույթը, ապա ստեղծվել է համապատասխան մեկ կառուցվածքային ստորաբաժանում, իսկ մյուսում՝ ընդհանրապես իրավաբանի հաստիքներն ամրագրվել են կրթության կամ գիտության կամ էլ տեղեկատվական բազաների հավաքագրման ստորաբաժանման ներսում:Առավել անմիջիթար էին կարևորագույն երկու տեսակ գործառույթների՝ անձնակազմի կամ մարդկային ռեսուլսների կառավարման և հաղորդակցության կամ, այլ խոսքով, հանրության հետ կապերի ապահովման գործընթացները: Նախ, քաղաքացիական ծառայության մասին օրենսդրության ներդրմամբ անձնակազմի կառավարման հարցերն առաջին պլան մղվեցին, սակայն այդ գործառույթները չմիասնականացվեցին ու չհստակեցվեցին: Հասարակայնության հետ կապերի գործառույթները տեղաբաշխված էին զանազան տարբերակներով՝ մի տեղում դա իր վրա էր վերցրել մամուլի խոսնակը, մեկ այլ դեպքում՝ հաստիքներ կային քարտուղարության կազմում, երրորդ դեպքում՝ ընդհանրապես դրա անհրաժեշտությունը չէին զգում: Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի վերլուծության արդյունքներով մշակվեցին առաջարկություններ հատկապես անձնակազմի կառավարման և հասարակայնության հետ կապերի ձևավորման վերաբերյալ, վերջինիս ենթատեքստում՝ քաղաքացիների հետ աշխատանքի ու հաղորդակցության բարելավման գործում<sup>81</sup>:

Ոեռևս 2004թ. մայիսին ՀՀ կառավարությունը թիվ 17 արձանագրային որոշմամբ հավանություն տվեց հանրապետական գործադիր մարմնի հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման օրինակելի կանոնադրությանը, հանրապետական գործադիր մարմնի դեկավարի մամուլի քարտուղարի գործառույթներին և հանրապետական գործադիր մարմիններում հասարակայնության հետ կապերի իրականացման համար անհրաժեշտ նվազագույն տեխնիկական միջոցների ցանկին: Միաժամանակ հանձնարարվեց հանրապետական գործադիր մարմինների դեկավարներին՝ հասարակայնության հետ կապերի ստորաբաժանման և մամուլի քարտուղարի

<sup>81</sup>Խուդավերդյան Ա., Սաֆարյան Լ., ՀՀ պետական կառավարման մարմիններում մամուլի քարտուղարների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների առկա կարողությունների և իրավիճակի զնահատման գեկույց, Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի: ՀՀ կառավարության հասարակայնության հետ կապերի վարչություն, Երևան, 2006թ., էջ 96.

իրավասությունները սահմանող իրավական ակտերը համապատասխանեցնել որոշ-  
ման պահանջներին:

Հանրապետական գործադիր մարմնի հասարկայնության հետ կապերի ստո-  
րաբաժանումը հանրապետական գործադիր մարմնի աշխատակազմի կառուց-  
վածքային ստորաբաժանում է (բաժին, վարչություն), որը ղեկավարում է ստորաբա-  
ժանման ղեկավարը: Վերջինս պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օ-  
րենսդրությամբ սահմանված կարգով: Ստորաբաժանման լիազորությունները սահ-  
մանվում են ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով, կարգադրություննե-  
րով, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, հանրապետական գոր-  
ծադիր մարմնի ղեկավարի հրամաններով, այլ իրավական ակտերով և հասարա-  
կայնության հետ կապերի ստորաբաժանման կանոնադրությամբ: Ստորաբաժանման  
հիմնական խնդիրներն ու նպատակներն են՝ հանրապետական գործադիր մարմնի  
տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը և իրականացումը, դրա ա-  
ռանձին ստորաբաժանումների, հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի,  
այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակության իրազե-  
կումը, հանրապետական գործադիր մարմնի ղեկավարի, այլ պաշտոնատար ան-  
ձանց ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության ապա-  
հովումը, հանրապետական գործադիր մարմնի աշխատանքների մասին տեղեկա-  
տվության տրամադրումը, հասարակական միավորումների և այլ կազմակերպու-  
թյունների հետ համագործակցության ապահովումը:

Քաղաքացիական ծառայության համակարգի ներդրմանբ էական փոփոխութ-  
յունների ենթարկվեցին պետական կառավարման մարմիններում մարդկային ռե-  
սուրսների կառավարման գործընթացի կանոնակարգումը, ամրագրվեցին նոր գոր-  
ծառույթներ, դրանցով պայմանավորված ինստիտուտներ: Մասնավորապես, քաղա-  
քացիական ծառայության մասին օրենքով ամրագրվեցին մարդկային ռեսուրսների  
կառավարման հետ կապված այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են՝ քաղաքացի-  
ական ծառայության պաշտոնների անվանացանկի, միասնական գրանցամատյանի  
և անձնական գործերի վարումը, անձնագրերի հաստատումը, մրցութային և արտա-  
մրցութային կարգով թափուր պաշտոնների համալրումը, դասային աստիճանների

շնորհումը, քաղաքացիական ծառայողների ատեստավորումը, վերապատրաստումը, կադրերի ռեզերվի վարումը, թափուր պաշտոնների համալրումը:

Վերը թվարկված գործառույթների իրականացման համար, ինչպես քաղաքացիական ծառայության խորհրդում, այնպես էլ պետական կառավարման բոլոր մարմիններում, պահանջվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ: Մինչդեռ, ՀՀ պետական կառավարման 40 մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման հարցերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ միայն 3-ի կանոնադրություններում են ամրագրված մարդկային ռոսուրսների կառավարման գործընթացների ապահովման մեխանիզմներ, լուծումներ, իսկ կազմակերպական կառուցվածքներում արձանագրված է տարատեսակ կարգավիճակով անվանմամբ, գործառույթների համախմբմամբ անձնակազմի կառավարման ստորաբաժանումների առկայություն: Այսպես, պետական կառավարման թվով 40 մարմիններից 26-ում գործում են մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումներ, իսկ 14-ում մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթներն իրականացնում են այլ կառուցվածքային ստորաբաժանումներ<sup>82</sup>: Պետական կառավարման մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման թվով 20 ստորաբաժանումներ ունեն ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակ (վարչություն, բաժին)<sup>83</sup>:

<sup>82</sup>Ուսումնասիրություններ և առաջարկություններ ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման (կադրային) ստորաբաժանումների մասով: Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ ու աջակցությամբ:

<sup>83</sup>Խորհավերդյան Արմեն Վագգենի, Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվար հրատ., 2008թ., 300 էջ:

**ԳԼՈՒԽ 3. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԱՅԻՆ  
ԱՌԱՋԱՋԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**3.1. Էլեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրները**

**ՀՀ-ում**

«Էլեկտրոնային կառավարությունը» իշխանությունների հիմնական խնդիրն է ցանցային միասնական տիրույթում, և այն 21-րդ դարի պետական կառավարման բոլոր մոդելների հիմքն է: Էլեկտրոնային կառավարությունների ձևավորումը, ինչպես արդեն գիտենք, սկսվել է դեռևս 20-րդ դարի վերջերին, և ներկայումս որոշակի փորձ է կուտակվել Հարավային Կորեայում, Սինգապուրում, Իտալիայում, Գերմանիայում, Էստոնիայում, ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում:

Էլեկտրոնային կառավարությունը ստեղծվում է մի քանի փուլով, որոնց մեջ հարկ է առանձնացնել հետևյալները.

- Տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների հետ շփման տեղեկատվական ուղիների ստեղծում: Հիմնական գործիքներից մեկը էլեկտրոնային կառավարության վեբ-պորտալների (Web portals) ստեղծումն է, որը տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին տրամադրում է մուտք դեպի կենտրոնական իշխանությունների գործունեության մասին տեղեկատվություն:

- Տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին երկխոսական (ինտերակտիվ) ծառայությունների տրամադրում: Հիմնական գործիքները բնակչությանը և բիզնեսին էլեկտրոնային ստորագրությունները հաստատող կենտրոններն են և տարածքային կառավարման բոլոր մակարդակների մարմինների և գերատեսչությունների տեղեկատվական համակարգերը, որոնք կբավարարեն տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների պահանջմունքները երկխոսական կարգով: Որպես օրինակ կարող են ծառայել պետական էլեկտրոնային գնումները, արտոնագրերի և թույլատվական փաստաթղթերի տրամադրումը, մաքսային արտոնագրերի հանձնումը, կոմունալ ծառայությունների վճարումը, էլեկտրոնային ուսուցումը և այլն:

- Գործարքային ծառայությունների տրամադրում տնտեսվարող սուբյեկտներին և քաղաքացիներին: Հիմնական գործիքը էլեկտրոնային վճարումների համակարգն է, որն ապահովում է դրամական գործարքները և կապված է բանկային համակարգերի, էլեկտրոնային կառավարության պորտալի և տարածքային կառավարման մարմինների և գերատեսչությունների տեղեկատվական համակարգերի հետ:

- Կառավարության գործումնեության մասշտաբային տեղափոխում տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների հարթություն:

«Էլեկտրոնային կառավարություն» նախագծի հիմնական խնդիրը կառավարության գործումնեության թափանցիկության ապահովումն է, պետության և հասարակության երկխոսության միջոցով շփման հաստատումն ու ապահովումն է: Այս հիմքի վրա հնարավոր է հասնել ավելի նշանակալի արդյունքի՝ դեպի կառավարություն հասարակական վստահության ամրապնդման, ինչը պետական արդյունավետ քաղաքականության իրացման անհրաժեշտ նախապայման է<sup>84</sup>:

ՀՀ էլեկտրոնային կառավարության կայքը՝ e-gov.am-ը, գործում է 2010 թ.-ից: Վերջինս հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին գրել նամակ կառավարությանը, հետևել այդ նամակի ընթացքին: Ի տարբերություն դիմումների, նամակները պաշտոնական ընթացակարգով քննության չեն առնվում: Կայքի շնորհիվ կարելի է տեղեկանալ, թե կառավարության որ պաշտոնյային է փոխանցված, առձեռն հանձնած կամ փոստով ուղարկված դիմումը վերահասցեագրվել: Պաշտոնական դիմումներն այսուհետ ունեն թափանցիկ ընթացակարգ: Սույն կայքի միջոցով կարելի է մի շարք պետական մարմինների կողմից տրամադրվող լիցենզիա ստանալու, վերաձևակերպելու, ուժը կորցրած ճանաչելու, կասեցնելու, լիցենզիայի և ներդիր(ներ)ի կրկնօրինակը ստանալու, լրացուցիչ ներդիրներ ստանալու և ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև արդեն իսկ ներկայացրած դիմումներին ի լրում փաստաթղթեր ներկայացնելու համար հայտ ներկայացնել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով:


---

<sup>84</sup>Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие / М.А. Абросимова.-М.: КНОРУС, 2011, с. 229.

Կայքում տրված է հնարավորություն դիտելու բյուջեի ինտերակտիվ տարբերակը 2010-2012 և 2015 թվականների համար, որոնք համապատասխանաբար կներկայացնենք ստորև՝ Գծապատկերներ 2, 3, 4 և 5-ի օգնությամբ։ Կայքի այս գործիքը հնարավորություն է տալիս ուսումնասիրել ՀՀ պետական բյուջեն, ինչպես նաև այնտեղ կատարվող ընթացիկ ֆինանսական փոփոխությունները՝ ըստ ոլորտների, բաժինների, խմբերի, դասերի և ծախսային տողերի։


## Գծապատկեր 2.

### Ինտերակտիվ բյուջե 2010թ.




### Գծապատկեր 3.

#### Ինտերակտիվ բյուջե 2011թ.




### Գծապատկեր 4.

#### Ինտերակտիվ բյուջե 2012թ.<sup>85</sup>



<sup>85</sup><http://www.e-gov.am>

Ինտերակտիվ բյուջե 2015թ.<sup>86</sup>

Կայքը հնարավորություն է տալիս նաև այս գծապատկերների միջոցով տեսնել, թե նշված գումարների որ մասն է ծախսվել, և որ մասը՝ մնացել:

Կայքում առանձին բաժին է հատկացված էլեկտրոնային ստորագրությանը: Էլեկտրոնային ստորագրությունը թվային պայմանանշանների եզակի հաջորդականություն է, որը կցված է էլեկտրոնային փաստաթղթին և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից պաշտպանելու համար:

Այստեղ կարելի է գտնել կառավարության որոշումները, ինչպես նաև ՀՀ կառավարության նիստում ընդունված արձանագրային որոշումները, վարչապետի որոշումները, կառավարության հերթական նիստի օրակարգում ընդգրկված հարցերի նախագծերը:

<sup>86</sup><http://www.e-gov.am>

Պետական վճարումների էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս ՀՀ օրենսդրությամբ պետական տուրքի/տեղական տուրքի կամ պետական և/կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ծառայությունների համար գանձվող վճարը կամ վարչական տուգանքները կատարել էլեկտրոնային եղանակով:

Կայքում տեղ է գտել նաև անշարժ գույքի կադաստրի էլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի նկատմամբ իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցման դիմումներ ներկայացնել առցանց համակարգի միջոցով, ինչպես նաև տրված է հնարավորություն հետևել տվյալ դիմումի ընթացակարգին:

Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման համակարգը հնարավորություն է տալիս մեկ պատուհանի սկզբունքի կիրառմամբ գրանցելու կազմակերպություն հաշված րոպեների ընթացքում: Միաժամանակ այս համակարգի միջոցով կարելի է ստանալ տեղեկատվություն արդեն գրանցված կազմակերպությունների մասին:

Դատական տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս գտնել համապատասխան դատական գործեր, որոնել ՀՀ օրենքներ, հետևել դատական նիստերի ժամանակացույցին և այլն:

Սույն կայքի միջոցով այսուհետ օրենքով սահմանված դեպքերում կարելի է ներկայացնել հրապարակային ծանուցումները:

Դայաստանի ազգային պատկերասրահի մշակութային արժեքները ներկայացված են էլեկտրոնային տարբերակով սույն կայքում, ինչն աննախադեպ հնարավորություն է ընձեռում կայքի այցելուներին տեսնել պատկերասրահի մշակութային բոլոր արժեքները, որոնց 80%-ը պահպանվում է պահոցներում և չի ցուցադրվում պատկերասրահում: Դամապատասխան գործերը ներկայացված են լուսանկարներով, ինչպես նաև նկարագրությամբ՝ հեղինակ, ժամանակաշրջան և այլ տվյալներ:

Դրապարակային և թափանցիկ կառավարման ապահովման նպատակով ստեղծվել է պետական գերատեսչությունների կողմից մեկ անձից կատարվող գնում-

ները ներկայացնող բաժինը: ՊուԱԿ-ներին տրվող ֆինանսավորումը, մասնավորապես, սուբսիդիաներն ու դրամաշնորհները, ինչպես նաև որոշ ծառայությունների պատվերները և դրանց պայմանագրերը կարելի է տեսնել այնտեղ:

Հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը նախատեսված է պարզեցնել դրանց հանձնման գործընթացը հարկատուների և հարկային աշխատողների համար՝ հաշվետվությունների լրացումն ու ստուգումը ավտոմատացնելու և համացանցով փոխանցելու շնորհիվ:

Էլեկտրոնային հայտերի ներկայացման համակարգը հնարավորություն է տալիս գյուտերը և օգտակար մոդելները, ինչպես նաև ապրանքային նշանները և արդյունաբերական նմուշներն էլեկտրոնային եղանակով ներկայացնել Մտավոր սեփականության գործակալություն: Վերջինիս տեղեկատվական որոնման համակարգը հնարավորություն է տալիս կատարել որոնում արդյունաբերական նմուշների, ֆիրմային անվանումների, գյուտերի և օգտակար մոդելների, ինչպես նաև ապրանքային նշանների հիմնապաշարներում:

Կայքը հնարավորություն է տալիս օգտվելու ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից պարտադիր օտարման ենթակա գույքի աճուրդով վաճառքի էլեկտրոնային համակարգից:

Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգը իրավական ակտերի միասնական էլեկտրոնային շտեմարան է, որը հնարավորություն է տալիս մեկ միասնական համակարգից ծանոթանալ ՀՀ օրենսդրությանը՝ սկսած միջազգային պայմանագրերից մինչև համայնքների ավագանու կողմից ընդունած որոշումներին:

Էլեկտրոնային վիզան գործիք է, որը հնարավորություն է տալիս պարզեցնել մուտքի արտոնագիր ստանալու գործընթացը, որպես կանոն, մուտքի արտոնագրի հաստատման դեպքում դրա տրամադրումն այս համակարգի միջոցով տևում է երկու օր: Կայքը հնարավորություն է տալիս նաև ծանոթանալ պետական կառավարման մարմինների կողմից վարվող որոշ ռեեստրներին և այլ տեղեկատվությանը՝ ցանկերի միջոցով:

Անդրադարձալով Հայաստանի Հանրապետություն էլեկտրոնային կառավարման նոր համակարգին, որն իրականացվում է Մալբերի (Mulberry) ծրագրով, պետք է

նշենք, որ այն կոչված է նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը, և երաշխիք է թափանցիկ կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար: Անցումն էլեկտրոնային կառավարման համակարգին ենթադրում է, որ պետական ծառայությունները կմատուցվեն համացանցի միջոցով: Դա նվազագույնի կիասցնի պետական ծառայողի և քաղաքացու շփումը և, ինչպես արդեն նշեցինք, էապես կը կրծատի կոռուպցիոն ռիսկերը:

Այս համակրգի ներդրման գործընթացն արդեն 6 տարի է ինչ սկսվել է, այդ ժամանակահատվածում պետական գերատեսչությունների 4000 աշխատակիցների վերապատրաստումը և տեխնիկական ապահովումը, ինչպես նաև համընդհանուր ցանցային համակարգի ստեղծման աշխատանքները միասին արժեցել են շուրջ 700000 դոլարին համարժեք դրամ, ֆինանսական աջակցությունն իրականացրել է Համաշխարհային Բանկը<sup>87</sup>:

Էլեկտրոնային կառավարման պետական համակարգի ներդրումը ՀՀ Կառավարության գերակա ուղղություններից է: Դեռ հինգ տարի առաջ երկրում համացանցի հասանելիությունը և արագությունը ցածր է եղել, գինը՝ բարձր: Երրորդ օպերատորի դաշտ մտնելուց հետո («ԱրմենՏել» ՓԲԸ, «FiberNet», այնուհետև՝ GNCAlpha) իրավիճակը կտրուկ փոխվեց. մրցակցությունը մեծացավ, բոլոր երեք օպերատորները երկրով մեկ սկսեցին մատչելի ծառայություններ առաջարկել: 2011թ. երկրորդ կեսի դրությամբ հանրապետության 30 քաղաք ծածկված է օպտիկամանրաթելային համացանցով, մինչ այդ այն հասանելի էր 3-4 քաղաքների համար: Միաժամանակ ավելացել է լայնաշերտ համացանց օգտագործողների թիվը (Աղյուսակ 2).

---

<sup>87</sup><http://www.mta.gov.am>

Ինտերնետ հասանելիությունը 2009-2013թթ.<sup>88</sup>

Ցուցանիշի անվանումը	2009	2010	2011	2012	2013
Ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը, 1000 մարդ	1 227.5	1 920.0	1 818.8	1 914.1	2 036.3
որից բջջային հեռախոսակապով	1 107.3	1 701.6	1 435.2	1 471.7	1 550.1

Կառավարության համար ստեղծվել է ներքին պաշտպանված ցանցի (VPN – Virtual Private Network) հիման վրա սեփական համակարգը, որը զարգանում է փուլ առ փուլ: Սկզբում միասնական համակարգին միացել էին միայն նախարարությունները, այնուհետև միացան 10 մարզպետարաններն ու մնացած գերատեսչությունները, պետության տարածքային բոլոր կետերը: Միացման փուլում են սոցիալական ծառայությունների և ՔԱԿԳ ստորաբաժանումները:

Ներկայումս ավելի քան 40 գերատեսչություն աշխատում է փաստաթղթաշրջանառության միասնական համակարգով: Մուտքագրված յուրաքանչյուր փաստաթուղթ թվայնացվում է ընդհանուր բաժնում և միանգամից ուղարկվում արխիվ:

Ոեռևս 2002թ.-ին ընդունվել է «Էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքը: 1996թ.-ից ֆինանսական փոխանցումների համար կիրառվող էլեկտրոնային ստորագրությունները, բանկերից բացի, ոչ մի տեղ կիրառելի չէին: 2008թ. ստեղծվեց կենտրոն, որն սկսեց էլեկտրոնային ստորագրություն տրամադրել և 2011թ. դրությամբ թողարկվել է ավելի քան 6500 ստորագրություն, որից 300-ը պատկանում է պետական պաշտոնյաներին, իսկ մնացածը՝ ձեռնարկությունների աշխատակիցներին, ովքեր հարկային հաշվետվություններ են ներկայացնում էլեկտրոնային տեսքով (e-filing): Էլեկտրոնային ստորագրության արժեքն առաջին տարվա համար 15 000 դրամ է, իսկ յուրաքանչյուր հաջորդ տարվա համար՝ 5 000 դրամ:

<sup>88</sup><http://www.armstat.am>

Այսօր բոլոր ընկերություններն ունեն հնարավորություն հարկային հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային տեսքով՝ առանց գրասենյակից դուրս գալու: Հարկային մարմինները ստեղծել են կայք, որն ընդունում է այդ հաշվետվությունները: 2014թ. տվյալներով 5 400 ընկերություն հարկային հաշվետվություններկայացնում է էլեկտրոնային ճանապարհով<sup>89</sup>:

ՀՀ կառավարությունը ներդրել է լիցենզավորման տարբեր տեսակների համար հայտերի ընդունման էլեկտրոնային համակարգ: Հայտատուն պետք է միայն մեկ անգամ այցելի գերատեսչություն և ստանա լիցենզիա, իսկ եթե նա ունի էլեկտրոնային ստորագրություն, ապա էլեկտրոնային լիցենզիան կարող է ստանալ անձնական էլեկտրոնային փոստով՝ պետական մարմին ֆիզիկապես չայցելելով. այդ ֆայլը, օրենսդրության համաձայն, ունի իրավաբանական ուժ: Այս ծեսափով լիցենզիաներ տրամադրում են պետական գործեր բոլոր կառույցները, բացառությամբ ՀՀ ԿԲ-ի և ևս մի քանի լիցենզիաներ, որոնք վերաբերում են ատոմային էներգետիկայի, գենքի առևտության ոլորտներին:

Կառավարության նախաձեռնությունների շարքում է Ազգային պատկերասրահի ֆոնդերի թվայնացումը, ինչպես նաև ոստիկանության հետ համատեղ ավտոտրամսպորտային միջոցների գրանցման և հաշվառումից հանելու համակարգի գործարկումը:

Պետք է նշել, որ Հայաստանն էլեկտրոնային կառավարման մակարդակով արդեն առաջ է անցել շատ երկրներից: Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային կառավարման ներդրման գործընթացը դեռ շարունակվում է: Ցանկանալով ՀՀ քաղաքացիներին տալ հնարավորություն ավելի մատչելի և արագ տեղեկատվություն ստանալ՝ առաջարկում ենք օգտվել միջազգային փորձից և ստեղծել մեկ միասնական պետական տեղեկատվական կայք՝ զարգացնելով e-gov.am կայքը (վերցնել Մեծ Բրիտանիայի օրինակը): Կայքում տեղակայել ինչպես ՀՀ օրենքները, իրավական նորմերը, այնպես էլ ստեղծել հատուկ բաժին, որտեղ քաղաքացիները կկարողանան on-line կարգով հղել իրենց հուզող հարցերը և որակավորված մասնագետների կողմից ստանալ պատասխան կարծ ժամկետներում (րոպեների ընթաց-

<sup>89</sup><http://www.gov.am>

քում): Կարծում ենք, որ մեր հասարակությունն ունի նման կայքի և ծառայության կարիք, և այն կապահովի հետադարձ կապ: Կայքի աշխատանքը կլինի թափանցիկ և իր լուման կունենա ժողովրդավարական հանրապետության կայացման գործընթացում:

Անդրադառնալով                  Էլեկտրոնային                  կառավարության                  Աերդրման  
հիմնախնդիրներին՝ կցանկանայինք վեր հանել մի շարք խնդիրներ, որոնք նկատել ենք որոշ նախարարությունների աշխատակիցների հետ հարցումների ժամանակ: Խնդիրները կապված են Մալբրի (Mulberry) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծրագրի հետ: Այսպիսով.

- Ուսուցում: Ծրագրի Աերդրման սկզբնական ժամանակահատվածում հատուկ մասնագետների կողմից կազմակերպվել է տվյալ ծրագրի համապատասխան ուսուցում, սակայն հարց է առաջանում, թե ինչպես պետք է ընտելանան սույն ծրագրին նոր կադրերը: Առաջարկում ենք տարվա կտրվածքով մեկ կամ երկու անգամ կազմակերպել հատուկ սեմինարներ՝ նոր աշխատակիցների ուսուցման նպատակով:

- Ընթացիկ աշխատանքներն ավելի ոյուրին և արագ կկազմակերպվեն, եթե սույն ծրագիրը հնարավորություն ընձեռեր կազմակերպել յուրաքանչյուր առանձին նախարարության Աերդին գործավարությունը: Ներկայումս ծրագրին ինքնին այս հնարավորությունը չունի: Խնդրի լուծումն արդեն պետք է թողնել ծրագրավորման մասնագետներին:

- Բալային գնահատման համակարգը Մալբրիում: Գնահատման այս համակարգը միտված է բացահայտելու, թե աշխատակիցներից յուրաքանչյուրն ինչ առաջադիմություն ունի, և հետագայում ամսվա կտրվածքով, կախված արդյունքներից, կիրառել համապատասխան խրախուսման կամ պատժի միջոցներ: Սակայն հարցումների միջոցով տեղեկացանք, որ գնահատման այս համակարգը կրում է խիստ ձևական բնույթ և չի ծառայում իր բուն նպատակին, և, նույնիսկ, աղավաղում է աշխատակազմում բարոյահոգեբանական մթնոլորտը, քանզի լինում են դեպքեր, երբ դեկավար մարմինն անհիմն իջեցնում է աշխատակցի կուտակած բալերը, իսկ նման դեպքերի համար վերահսկողություն չի իրականացվում և դժվար է պարզել, թե իրականում արդյոք արդար է կատարվել գնա-

հատումը: Ինչպես նաև գնահատման տվյալ համակարգում բացակայում է որակ/քանակ հարաբերակցությունը:

- Եվ, վերջապես, կարծում ենք՝ նպատակահարմար կլինիկ տալ հնարավորություն տեսնելու, թե տվյալ պաշտոնական գրությունը ուղարկելուց հետո եթե է ստացվել և հետևել դրա ընթացքին, ինչը ներկայումս հնարավոր է իրականացնել միայն տվյալ գերատեսչության շրջանակներում, կարծում ենք դրա սահմաններից դուրս էլ նպատակահարմար կլինիկ:

### **3.2. ՀՀ գործադիր իշխանության գործունեության բարելավման հիմնական ուղիները**

Յայաստանն ինքնիշխան, ժողովրդավարական պետություն է, որը ղեկավարվում է ուղղակիորեն ընտրված նախագահի կողմից: Գործադիր իշխանությունն իրականացվում է կառավարության կողմից, որը կազմված է վարչապետից և նախարարներից: Կառավարության գործունեությունն ապահովում է նրա աշխատակազմը, որը գործում է որպես կառավարության գրասենյակ: Կառավարության կառուցվածքում գործում է 18 նախարարություն, 7 պետական մարմին, որոնք առընթեր են կառավարությանը և տարբեր գործակալություններ, որոնք ենթարկվում են կամ փոխկապակցված ենտարբեր ոլորտային նախարարությունների հետ:

Յայաստանի Յանրապետության տարածքը բաժանված է 10 մարզի, որոնք ղեկավարվուն են կառավարության կողմից նշանակված մարզպետների կողմից: Մարզերը բաժանվում են համայնքների, որոնք կառավարվուն են համայնքի ղեկավարների ու համայնքի ընտրված ավագանիների կողմից: Երևան քաղաքն ունի հատուկ կարգավիճակ և համարվում է համայնք:

Օրենսդրական իշխանությունը ներկայացված է միապալատ Ազգային ժողովի կողմից, որն ունի 131 պատգամավոր, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը, վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանն ու առաջին ատյանի դատարանները կազմում են դատական իշխանությունը:

Հայաստանն ունի մոտավորապես 244 000 աշխատակից/ծառայող, որոնք աշխատում են գործադիր, օրենսդիր մարմիններում և արդարադատության կառույցներում: Քաղաքացիական ծառայող է շուրջ 7500 քաղաքացի, որոնք իրականացնում են պետական իշխանության գործառույթներ և կենտրոնական դեր խաղում քաղաքականության մշակման, իրականացման ու պետական ծառայությունների կառավարման հարցերում<sup>90</sup>:

Հաշվի առնելով կառավարման համակարգի ծրագրվող զարգացումները<sup>91</sup>, ինչպես նաև ՀՀ աղքատության հաղթահարման և հակակոռուպցիոն ռազմավարություններով սահմանված բարեփոխումները՝ ՀՀ կառավարությունը նպատակադրվել է կառավարման համակարգի զարգացումը բնութագրող նպատակային ցուցանիշներով արդեն իսկ 2012թ. գերազանցել Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան երկրների 2006թ. մակարդակը, իսկ 2021թ. հասնել Արևմտյան Եվրոպայի երկրների կառավարման մակարդակը բնութագրող 2006թ. ցուցանիշներին<sup>92</sup>: Ընդ որում, առաջնային նշանակություն կտրվի հատկապես կառավարման գործընթացի հետագա ժողովրդավարացմանը, օրենքի գերիշխանության ապահովմանը և հակակոռուպցիոն միջոցառումների: Անհրաժեշտ է նշել նաև, որ կառավարման համակարգի բարեփոխումների վերոնշյալ քաղաքականությունը լիովին համահունչ է ՀՀ Եվրոինտեգրման գործընթացի հիմնական սկզբունքներին:

Պետական կառավարման համակարգի գործունեության մեջ դեռևս առկա են լուրջ հիմնախնդիրներ: Օրակարգում գտնվող աղքատության նվազեցման, կոռուպցիայի հաղթահարման հարցերը ստիպում են ՀՀ կառավարությանը լուրջ պարտավորություններ ստանձնել պետական կառավարման համակարգը բարեփոխելու, միջոցները համախմբելու և նախանշված արդյունքներին հասնելու համար արդյունավետ քաղաքականություն իրականացնելու ուղղությամբ: Ավելին, տնտեսական շարունակական աճ ապահովելու համար պետական կառավարման համակարգը պետք է խրախուսի մասնավոր հատվածի գործունեությունը և նվազեցնի այն

<sup>90</sup><http://armstat.am/am/>

<sup>91</sup>ՀՀ կառավարության ծրագիր, Երևան 2008թ. էջ 28-32, ՀՀ կառավարության ծրագիր, Երևան 2014թ., էջ 31:

<sup>92</sup>ԱՐՈԾ-2մ նախագիծ, Երևան 2008թ., էջ 176:

խոչընդոտները, որոնք առաջանում են պետական կառավարման մարմինների գործելակերպից:

Պետական կառավարման բարեփոխումները, հակակոռուպցիոն և աղքատության դեմ պայքարի ծրագրերը կազմում են կառավարության ռազմավարական երեք ուղղությունները: Պետական հատվածի բարեփոխման մասով կառավարության հիմնական առաջնահերթություններն են պետական հաստատությունների կառուցվածքների օպտիմալացումը, պետական քաղաքականություն մշակելու և կիրառելու կարողությունների հզորացումը, քաղաքացիական ծառայության բարեփոխումները, պետական հատվածի գործունեության մեջ քաղաքացիական հասարակության մասնակցության ավելացումը և այդ գործունեության նկատմամբ վերահսկողությունը, գործարարությանը խոչընդոտող վարչական արգելքների նվազեցումը, պետական ծախսերի կառավարման բարելավումը և արդարադատության համակարգի բարեփոխումները:

Ուղղորդելով հիմնական ջանքերն աղքատության կրճատմանը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է պետական կառավարման համակարգի, այդ թվում՝ հանրային ոլորտի կառավարման կազմակերպական-կառուցվածքային բարեփոխումները, քաղաքացիական ծառայության զարգացումը, պետական կառավարման համակարգի համապատասխանեցումը ձեռքբերված տնտեսական, սոցիալական և քաղաքական առաջընթացին<sup>93</sup>:

ՀՀ անկախությունից հետո տեղի ունեցան համակարգային որոշ վերափոխումներ.

- հաստատվել է տնտեսական ինքնիշխանություն (շրջանառության մեջ է ազգային դրամը, գործառնում են սեփական հարկային և արտաքին առևտուրը կարգավորող համակարգերը),
- մասնավորեցվել և ապապետականացվել է պետական սեփականությունն ավելի քան 3/4 չափով,
- շարունակվում է անդամակցությունը միջազգային կառույցներին և խորացվում է տնտեսության ինտեգրումը միջազգային մասշտաբներով,

<sup>93</sup>Խուղավերդյան Ա. Վ., Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ., էջ 153:

- շարունակվում է տնտեսվարող սուբյեկտներում շուկայական կարգապահության հաստատումն այն հաշվով, որ արտադրողականության բարձրացումն ու մրցունակությունը աստիճանաբար վերաճեն առաջընթացի երաշխիքի<sup>94</sup>:

Ներկայիս խիստ անբարենպաստ կառուցածքով հանդերձ, վերջին տարիների (մինչև 2009թ.) աննախադեպ տնտեսական աճի տեմպերը թույլ են տվել ՀՀ-ին ունենալ ՀՆԱ-ի համեմատաբար բարձր ցուցանիշ: Սակայն ինչպես ցույց են տվել հետագա իրադարձությունները, մասնավորապես 1998-1999թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը, ՀՀ տնտեսությունը չափազանց զգայուն էր արտաքին ու ներքին ազդեցությունների հանդեպ. նման կառուցվածքով 14.1% անկնան խորությամբ անցունային երկրների շարքում երրորդ հորիզոնականում հայտնվելը՝ զիջելով միայն Լիտվային (-18.4%) և Լատվիային (-16.0%): 2008թ. վերջին եռամսյակից սկզբնավորված և մեկուկես տարի տևած ճգնաժամի հետևանքն էր, որ 2010թ. արդյունքներով երկիրը հետ մղվեց 2006-ի մակարդակին (Տե՛ս աղյուսակ 3):

---

<sup>94</sup> Յայկ Սարգսյան, Աշոտ Մարկոսյան, «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները», Երևան, 2014. էջ 194:

ՀՀ տնտեսության կառու վածքը 1990-2013թ.որոշ տնտեսական ցուցանիշները<sup>95</sup>

Աղյուսակ 3.

	1990	1991	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ներքին արդյունք (համախառն. շուկայական գներով), նլրդ. դրամ (1990-1993թթ. մլրդ. խորհրդային ռուբլի)	10.1	16	625	853.1	187	522	661	804	955	987	1031	1176	1362	1625	1908	2243	2656	3149	3568	3141	3460	3778	4001	4273
Բնակչության բնական աճը, 1000 մարդ	57.9	54.4	44.8	31.5	26.5	24.1	23.2	19.9	16.2	12.4	10.3	8.1	6.7	9.8	11.8	11.1	10.4	13.3	13.8	17	16.6	15.4	14.9	14.6
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ, 1000 մարդ	-	-	1.8	5.3	66	6.7	9.3	10.8	9.4	11.2	11.7	10.4	10.8	10.1	9.6	8.2	7.5	7	6.3	7	7	-	-	-
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	107.8	274.1	828.7	1923	5062	276	118.7	114	108.7	1006	992	103.1	101.1	104.7	107	1006	1029	104.4	109	1034	1082	107.7	1026	1058
Արդյունաբերական արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	7.3	129	63.9	481	933	172	230	254	261	283	301	309	341	426	535	652	645	717	739	669	824	998	1121	1242
Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	1.8	59	428	8404	1408	3329	3427	3558	4021	3117	2812	351	3776	410.1	504.1	493	555.9	633.9	628.1	552.1	636.7	795	841.5	919.1
Շինարարության ծավալը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	6	3.8	9	723	242	38.5	522	57	75.9	78.9	101	1104	166.6	237.8	276.4	435.1	643.8	671	858.7	579.7	588.8	504.8	4794	453.4
Մանրածախ առևտի շրջանառությունը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	7.9	16	37	267.7	54.5	220	279.7	3227	364.2	3938	4222	494.3	5722	688.5	788.9	853.9	8208	934.4	1059.6	1065.5	1165.8	13022	1379.5	1452.5
Ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, մլրդ. դրամ	0.7	1	3.5	40.8	258	53.7	872	1416	171	1693	1788	187.6	195.3	2304	287.7	3338	475	571.8	697.8	731.8	788.8	865.4	974.6	1023.8

<sup>95</sup> Աղյուսը՝ ՀՀ ԱՎԾ կայքի՝ <http://www.armstat.am>: Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Ցուցանիշների հավելածի տեմպերը տոկոսային արտահայտությամբ դիտարկենք ըստ որոշ վարչապետների ղեկավարման ժամանակահատվածների՝ 1993-1996թթ., 1998-1999թթ., 2000-2007թթ., 2007-2008թթ., 2008-2013թթ. (Այուսակ 4):

#### Այուսակ 4

Ցուցանիշների հավելածի տեմպերը վարչապետների

ղեկավարման տարիների ընթացքում, %<sup>96</sup>

	1993-1996	1998-1999	2000-2007	2007-2008	2008-2013
Ներքին արդյունք (համախառն շուկայական գմերով), մլրդ. դրամ (1990-1993թթ. մլրդ. խորհրդային ռուբլի)	-22.5	3.4	205.4	13.3	19.8
Բնակչության բնական աճը, 1000 մարդ	-26.3	-23.5	29.1	3.8	5.8
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ, 1000 մարդ	75.4	19.1	-40.2	-10	11.1 <sup>97</sup>
Սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	-57 <sup>98</sup>	-7.5	5.2	4.4	-2.9
Արդյունաբերական արտադրանքը, ընթացիկ գմերով, մլրդ. դրամ	33.7 <sup>98</sup>	8.4	138.2	3.1	68
Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, ընթացիկ գմերով, մլրդ. դրամ	2.9 <sup>98</sup>	-22.5	125.4	-0.9	46.3
Շինարարության ծավալը, ընթացիկ գմերով, մլրդ. դրամ	35.6 <sup>98</sup>	4	564.4	28	-42.2
Մանրածախ առևտորի շրջանառությունը, ընթացիկ գմերով, մլրդ. դրամ	27.1 <sup>98</sup>	8.1	121.3	13.4	37
Ծառայությունների ծավալը, ընթացիկ գմերով, մլրդ. դրամ	62.4 <sup>98</sup>	-1	219.8	22	46.7

<sup>96</sup>Այուսակը հաշվարկվել է հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա

<sup>97</sup>Սույն ցուցանիշը սկսած 2011թ.-ից չի հաշվարկվում և չի հրապարակվում, ուստի հաշվարկներում ընդգրկված են մինչև 2010թ. տվյալները ներառյալ:

<sup>98</sup>1993թ. նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ մտած ՀՀ դրամի և իհակի միջազգային պատճառով դիտարկվող ժամանակահատվածը է վերցվել 1995-1996թթ.-ները:

Արդյունավետ պետական կառավարման համակարգը պահանջում է երեք կառուցողական տարրերի ամբողջություն, որոնցից առաջինը քաղաքականության մշակման և համակարգման ասպարեզում ուժեղ կենտրոնական կառավարությունն է: Այն պետական կառավարման համակարգի ուղեղն է: Քաղաքական ուժերը ձևավորում են իրենց հայացքները, որոնք ռազմավարական առաջնահերթությունների տեսքով ներկայացվում են դրանց իրականացումն ապահովելու համար: Վերջինս պահանջում է մասնագիտական աշխատանք և պրոֆեսիոնալների կորիգ: Երկրորդը ծառայությունների մատուցման արդյունավետ համակարգն է: Ըստ Էության շուկայական տնտեսության պայմաններում այն բոլոր տեսակի ծառայությունները, որոնք ունեն մրցակցային հիմք, մատուցվում են շուկայի մասնակիցների կողմից: Պետության խնդիրը նրանց համար անհրաժեշտ բարենպաստ քաղաքական պայմաններ ստեղծելն է: Մինչդեռ ծառայությունների մի մասի համար չկան մրցակցային այլընտրանքներ, որոնց պայմաններում պետությունն է դրանց մատուցողը: Այսպիսի ծառայությունների մատուցման արդյունավետությունը մեծամասամբ կախված է պետական ծառայողներից և նրանց տրամադրության տակ եղած ծառայությունների մատուցման կանոնակարգված նորմերից: Երրորդ տարրն անձնակազմի գործունակությունը և շահագրգուվածությունն է: Անձնակազմը կառավարության արյունատար համակարգն է: Այստեղ շատ կարևոր է ունենալ արդյունավետ կառավարչական մեխանիզմներ ինչպես կադրերի ընտրության, նրանց կարիերայի, այնպես էլ խրախուսման կատարելագործման ուղղությամբ:

Պետական կառավարման համակարգի մի շարք երկրների փորձը<sup>99</sup> ցույց է տալիս, որ կառավարությունը ժամանակակից հասկացությամբ, իր առաքելության և իրականացվող գործառույթների առումով խիստ սահմանափակ է: Այդ բնագավառում միտումը կառավարման գործառույթների առավելագույնս ապակենտրոնացումն է՝ պատվիրակումն է առավել ստորին մակարդակներում գտնվող գործադիր մարմիններին: Կառավարության դերը հիմնականում հանգում է տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանն ու կարգավորմանը: Ծառայությունների մատուցման գործառույթների (վճարովի և անվճար) մեջ մասն իրակա-

<sup>99</sup>Տե՛ս, աշխատանքի առաջին գլխի Երկրորդ և Երրորդ հարցերը:

նացվում է գործակալությունների և տեսչությունների միջոցով, միաժամանակ չբացառելով, որ այդ դասին պատկանող որոշ գործառույթներ պետությունը կատարում է ինքնուրույն:

Պետական կառավարման համակարգի արդյունավետ գործունեության ապահովման համար գործում են համընդիանուր սկզբունքներ.

- միմյանց հետ օրգանապես շաղկապված և առնչվող ոլորտների համախմբում մեկ միասնական օղակում,
- միմյանց հետ չառնչվող ոլորտների կառավարման գործառույթների համախմբման բացառում կառավարման միևնույն մարմնում,
- բոլորի համար ընդիանուր խնդիր հանդիսացող բնագավառների կառավարման միասնական մարմնի ստեղծում,
- կառավարման մարմինների ներքին կառուցվածքների ձևավորման նկատմամբ միասնական մոտեցման ցուցաբերում,
- կառավարման մարմինների բոլոր գործառույթների իրականացման ընթացքում երկու կարևորագույն համընդիանուր սկզբունքների՝ թափանցիկության և հաշվետու լինելու պարտադիր ապահովում,
- առաքելության, նպատակների, խնդիրների և գործառույթների շրջանակների՝ միմյանցից հստակ սահմանագատում,
- գործառույթների՝ կազմակերպչական առումով ըստ դասերի հստակ սահմանագատում:

Համաձայն ՀՀ Սահմանադրության, կառավարությունը լիազորություններ է ստանում Սահմանադրությամբ և օրենքով<sup>100</sup>: Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի իրամանագրով: Կառավարությանը ՀՀ Սահմանադրությամբ տրված լիազորություններն են.

- պետական բյուջեի նախագծի մշակումը, նրա կատարման ապահովումը և այդ մասին հաշվետվությունների ներկայացումն Աժ,

<sup>100</sup>ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2005թ., հոդված 89:

- պետական սեփականության կառավարումը,
- ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացման ապահովումը,
- գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնապահպանության պետական քաղաքականության ապահովումը,
- Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումը,
- օրինականության ամրապնդումը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովումը, սեփականության և հասարակական կարգի պահպանումը:

ՀՀ Սահմանադրությամբ կառավարությանը վերապահված լիազորությունների իրականացման համար կառավարությունը ձևավորում է պետական կառավարման մարմիններ: Այդ մարմինները, որպես կանոն, մինչև 2008թ. սահմանվում էին ՀՀ Նախագահի հրամանագրով: Պետական կառավարման մի շարք մարմիններ ձևավորվում էին առանձին օրենքներով: Ելնելով տվյալ ժամանակահատվածում կառավարության առջև ծառացած հիմնական խնդիրների բնույթից, ինչպես նաև քաղաքականության ուղղություններից և գերակայություններից՝ ՀՀ կառավարությունը պետական կառավարման մարմինների կառուցվածքն ու գործունեությունը համապատասխանեցնում է տվյալ ժամանակահատվածում իրականացվող քաղաքականությանը, ռազմավարական ծրագրերի իրականացմանը: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը<sup>101</sup>, Հայաստանի Հանրապետությունը ԽՄՀՄ-ից ժառանգել է պետական կառավարման մարմինների լայն ցանց: Միայն կառավարության կառուցվածքում հաշվվում էր 44 նախարարություն: Սկսած 1991թ. դրանց թիվը գնալով կրծատվեց և կազմեց 31, 1995թ.՝ 26, 1996թ.՝ 23, 1998թ.՝ 21, 2002թ.՝ 16, իսկ 2008թ.՝ 18 (մինչ օրս): Ինչպես ցույց է տալիս նախարարությունների թվի դիմամիկան, անցած շուրջ 20 տարիների ընթացքում կատարվել է պետական կառավարման մարմինների, մասնավորապես նախարարությունների, թվաքանակի շուրջ 2.5 անգամ

<sup>101</sup>Օրդյան Է., «Պետական կառավարման համակարգը Հայաստանում», Երևան, 1998թ., էջ 43, նաև Сокращение роли государства. Государственное управление и устойчивое человеческое развитие. Региональное бюро для Европы и СНГ. Июль 1997. с. 18.

կրճատում: Այս կրճատումները, ավելի ճիշտ օպտիմալացումը, մի կողմից կատարվեց նոր կառավարման մարմինների ձևավորման, դրանց մի մասի ապակենտրոնացման և մի շարք մարմինների խոշորացման ճանապարհով: Պետական կառավարման մարմինների սկզբունքային, իիմնավորված վերակազմավորումներ իրականացվեցին 2000-2001թ., որոնց արդյունքում սահմանվեցին նախարարության, կառավարության առջնորդեր մարմինների, գործակալությունների ու տեսչությունների կարգավիճակները:

«Կառավարչական իիմնարկների մասին» ՀՀ օրենքով սահմանվեցին կառավարչական իիմնարկները: Այն հնարավորություն տվեց տարանջատելու կառավարչական գործառույթները պետական այլ գործառույթներից: Կառավարչական գործառույթների դասակարգումը քաղաքականության մշակման, կանոնակարգման, ծառայությունների մատուցման, համակարգման և մշտադիտարկման, ինչպես նաև օժանդակման խմբերի, հնարավորություն տվեց սահմանելու նախարարության, ինչպես նաև այլ պետական մարմինների կարգավիճակներն ու կառուցվածքները: «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանվեց այն ծառայությունների շրջանակը, որոնք կարող են մատուցել այդ կազմակերպությունները: Մասնավորապես, կրթության, առողջապահության, մշակույթի, բնապահպանության և այլ համանման ոլորտներում բազմաթիվ հանրակրթական դպրոցներ, թանգարաններ և այլ կազմակերպություններ հնարավորություն ստացան իրականացնել ինչպես պետական ծառայություններ, այնպես էլ, ըստ սահմանված բնագավառների և գործունեության տեսակների, գործել շուկայում:

ՀՀ օրենքներով ձևավորվեցին անկախ գործող տարբեր տեսակի հանձնաժողովներ և խորհուրդներ՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը: Նշված հանձնաժողովների ու խորհուրդների ստեղծումը նպատակ ուներ տվյալ ժամանակահատվածում կառավարությունից անկախ, ինքնուրույն գործող մարմինների միջոցով ապահովել անաչառ, անշահախնդիր, հանրության շահերից բխող կառավար-

ման իրականացում: Ներկայումս, Երբ ՀՀ կառավարությունն այլևս չի տնօրինում ու վերահսկում հանրային ծառայությունների մատուցման գործում տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը, Երբ նաև կառավարությունը գերիշխում է շուկայում, Երբ հանրային ծառայությունները, կարելի է ասել, ամբողջությամբ փոխանցված են մասնավորին կամ տրված են հավատարմագրային կառավարման, ապա այս պայմաններում վերը քաղաքացիական մարմինների գործունեությունը կառավարության շրջանակներից դուրս է մնում թերիիմնավորված:

Կառավարության գործունեության ապահովման պետական մարմինների մյուս խումբը կառավարությանն առընթեր մարմիններն են, որոնց կառուցվածքը սահմանվում է ՀՀ Նախագահի հրամանագրով<sup>102</sup>: Այսօր կառավարությանն առընթեր գործում են ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն, ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունը և ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը<sup>103</sup>: Այս պետական մարմինների մեջ մասն իր վրա է կրում սահմանադրորեն սահմանված պետության կարևորագույն գործառւյթներ, ինչպիսիք են ՀՀ ներքին և արտաքին անվտանգության ապահովման քաղաքականությունը՝ ի դեմս ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության ծառայությունների և այլն: Եթե հարկաբյուջետային քաղաքականության մասով ՀՀ ֆինանսների նախարարը հանդես է գալիս որպես կառավարության պատասխանատու, ապա ոստիկանության, ազգային անվտանգության, պետական գույքի կառավարման և անշարժ գույքի կադաստրի հարցերով տրվող քաղաքականության համար պատասխանատու կառավարության անդամ չունենք: Անհասկանալի է մնում քաղաքացիական ավիացիայի՝ կառավարությանն առընթեր լինելու հանգամանքը, երբ ունենք տրամսպորտի և կապի նախարար, որն ըստ էության պետք է ստանձնի կառավարությունում քաղաքական պատասխանատվություն: 2008թ. ՀՀ բնապահպանության նախարարության Միջուկային և ճառա-

<sup>102</sup> «ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի թիվ 1063 հրամանագիր:

<sup>103</sup> [www.gov.am](http://www.gov.am)

գայթային անվտանգության պետական կարգավորման տեսչությունը նույնպես վերակազմավորվեց կառավարությանն առընթեր մարմնի:

2005թ. ՀՀ Սահմանադրությունն ամրագրեց պետական կառավարման բոլոր տեսակի՝ օրենքով ստեղծված հանձնաժողովների խորհուրդների ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների գոյությունը: Ակսած 2008թ.-ից ՀՀ կառավարության կառուցվածքը սահմանվում է առանձին օրենքով: ՀՀ Սահմանադրությամբ կառավարության կառուցվածքն օրենքով սահմանելու մասին դրույթը մեկ քայլ առաջ է իշխանության ապակենտրոնացման ուղղությամբ: «ՀՀ Կառավարության կառուցվածքի մասին» ՀՀ օրենքը կառավարության կառուցվածքում սահմանում է միայն նախարարությունների անվանումները:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս ՀՀ գործադիր իշխանության կառուցվածքի վերլուծությունը, այն հիմնականում ապակենտրոնացված է հորիզոնական գործող մի շարք կառավարման մարմինների միջև: Այս պայմաններում կառավարության գործունեության հաշվետվողականության, տարվող քաղաքականության, ստանձնած պարտավորությունների համար պատասխանատվության շրջանակների հստակեցման իմաստով առկա են բացեր: Նախ, ՀՀ կառավարությունում դեռևս ամբողջականացված չեն գործադիր իշխանության բոլոր բնագավառներն ու գործառույթները: Դրա հետևանքով ՀՀ կառավարության անդամները՝ որպես քաղաքական իշխանության կրողներ, ամբողջությամբ չեն ստանձնում ողջ գործադիր իշխանության պատասխանատվությունը: Երկրորդ, ամբողջականացված չէ նաև կառավարության կառուցվածքը: ՀՀ կառավարության կառուցվածքի մասին օրենքով սահմանվում են միայն նախարարությունները, մինչդեռ կառավարությանն առընթեր մարմինների, նախարարությունների կազմում գործող մի շարք պետական մարմինների, ինչպես նաև գործակալությունների և տեսչությունների մասին ընդհանրապես չի խոսվում, չնայած վերջիններիս գործունեությունը նույնպես կանոնակարգվում է առանձին օրենքներով (օրինակ, «Կրթության պետական տեսչությունների» մասին ՀՀ օրենքով կարգավորվում է կրթության պետական տեսչության գործունեությունը): Երրորդ, օրենքով միասնական ձևաչափով չեն սահմանվում կառավարության գործու-

նեռլուրական ապահովող պետական կառավարման մարմինների կողմից տնօրինվեղ ոլորտներն ու բնագավառները:

Նկատի ունենալով, որ ըստ բնագավառների քաղաքականության մշակումն ու իրականացումը կամ համապատասխան լիազորությունները կառավարությանը ապահովում են առանձին օրենքներով, այնուհանդերձ, ամեն մի որոշակի օրենքի կիրառման պայմաններում, կախված լիազորության բնույթից, ՀՀ կառավարության համար խնդիր է առաջանում տվյալ օրենքով սահմանված լիազորությունները վերալիազորելու այս կամ այն նախարարությանը կամ կառավարությանն առընթեր մարմնին<sup>104</sup>:

Այս լրացումը հնարավորություն կտար կառավարությանն առանձին օրենքով անմիջապես վերաբաշխել սահմանված լիազորությունները, որը կհանգեցնի պետական կառավարման մարմինների գործունեության կայունությանը, առանձին պետական մարմինների միջև գործառույթների կրկնությունից խուսափելուն, պետական կառավարման և ենթակա մարմինների կանոնադրական ու ռազմավարական խնդիրների սահմանմանը, որոշումների կայացման գործում հստակեցմանը: Ըստ նախարարությունների կառավարման ոլորտների՝ հստակեցումն իր հերթին հնարավորություն կտա տվյալ մարմինների աշխատակազմներում զարգացնել ծառայողների մասնագիտական կարողությունները՝ կայունությունն ապահովելով նաև կառավարման մարմինների ունակությունների և հզորությունների զարգացման գործում: Ամեն անգամ, ըստ քաղաքական իրավիճակների փոփոխության, նախարարությունների կառավարման կառուցվածքների և կառավարման ոլորտների վերաբաշխումները հանգեցնում են ձևավորված անձնակազմների և կառուցների գործունեության խափանմանը՝ դրանով վտանգելով մատուցվող ծառայություններն ու տարվող քաղաքականության շարունակականությունը:

ՀՀ Կառավարության ներկա կառուցվածքի սկզբնական հիմնական շրջանակները ձևավորվել են դեռևս 2001-2002թթ. իրականացված կառավարության

<sup>104</sup>Խուղավերդյան Ա. Վ., Համբային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Համբայետությունում.-Եր.: Սարվարդ իրատ., 2008թ., էջ 128:

կազմակերպական կառուցվածքների վերանայման ժամանակ<sup>105</sup>: Որպես անցման առաջին փուլ 2000-2002թթ. ընթացքում փորձ կատարվեց, չփոփոխելով կառավարության և նախարարությունների հիմնական կազմը, կառավարությանը և հատկապես նախարարություններին առընթեր բոլոր գերատեսչություններում ներառել ըստ նախարարությունների կառավարման ոլորտներ՝ նրանց համակարգման գործառույթների ներքո: Այս քայլը հնարավորություն տվեց նախ նախարարություններին՝ հատկապես նախարարներին, որպես կառավարության անդամներ, կենտրոնանալ ռազմավարական խնդիրների լուծման վրա, ապահովել կառավարման ուղղահայցությունը, բարձրացնել հաշվետվողականությունը և հստակեցնել կառավարությունում ամեն մի անդամի պատասխանատվության շրջանակները: Երկրորդ, կառավարությանն առընթեր, ինչպես նաև առանձին ինքնուրույն կարգավիճակ չունեցող գերատեսչությունները, վերակազմավորվեցին գործակալությունների և տեսչությունների՝ տարանջատելով ծառայությունների մատուցման գործառույթները տեսչական աշխատանքից: Ըստ անհրաժեշտության հիմնվեցին նոր ինստիտուցիոնալ միավորներ՝ քաղաքականության մշակման գործառույթները կենտրոնացնելով նախարարությունների աշխատակազմերում: Երրորդ, դասակարգվեցին քաղաքական, հայեցողական և քաղաքացիական ծառայողների պաշտոնները, միաժամանակ առանձնացվեցին սպասարկման և օժանդակող գործառույթներ իրականացնողները: Նախարարի պաշտոնը դասվեց որպես քաղաքական, տեղակալներինը՝ հայեցողական, որը նշանակում է, որ վերջիններս իրենց լիազորությունների շրջանակում կարող են ընդունել որոշումներ և համակարգել որևէ բնագավառի քաղաքականության մշակման և իրականացման գործառույթները: Չորրորդ, պետական կառավարման բոլոր մարմիններում հիմնվեցին աշխատակազմեր և ներդրվեց աշխատակազմի ղեկավարի ինստիտուտը, որը, ըստ քաղաքացիական ծառայության մասին օրենքի, բարձրագույն խմբի ծառայող է:

ՀՅ կառավարության կառուցվածքի սահմանման ժամանակ, որպես կանոն, համապատասխան ռազմավարական խնդիրների լուծման գործում նախարարությունների թիվը պայմանավորված է եղել տվյալ պահին ձևավորված իշխանության

<sup>105</sup> ՀՅ Նախագահի «ՀՅ Կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» 2002թ. մարտի 16 թիվ ՆՀ 1063 հրամանագիր:

քաղաքական իրավիճակային որոշումներով, ինչպես նաև անցման փուլում գտնվելու, մասնավորապես, տվյալ բնագավառում բարեփոխումների իրականացման և շուկայական տնտեսությանը հարիր ինստիտուցիոնալ կառույցների զարգացման մակարդակով: Այս տեսանկյունից կառավարության ներկայիս կառուցվածքում նախարարությունների թիվը վերջնական չէ: Կառավարման բարեփոխումների նպատակն է՝ արդյունքում ունենալ ռազմավարական խնդիրներ լուծող, վերջնական արդյունքներ ապահովող, ճկուն պետական կառավարման մարմիններ:

Եթե կառավարության ներկա կառուցվածքը համադրենք նախորդ տարիներին գործող կառավարության կառուցվածքների հետ, ապա տարբերություններն էական ու արմատական չեն: Անցած տարիների կառավարության կառուցվածքում հիմնական փոփոխությունները պայմանավորված են եղել տարածքային կառավարման նախարարության ստեղծման, նախարարությունների կառուցվածքում նոր պետական մարմինների ձևավորմամբ: Նման օրինակներից են ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմում Զրային տնտեսության պետական կոմիտեի, ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում Գիտության պետական կոմիտեի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում Սոցիալական ապահովության պետական ծառայության ստեղծումը:

Այնուհանդերձ, վերը նկարագրված նախարարությունների կառավարման ոլորտները դեռևս անբողջականացված չեն և, ռազմավարական պլանավորման արդյունքների տեսանկյունից, կարիք ունեն վերանայման: Կառավարության կառուցվածքի «փոշիացված» կամ այլ խոսքերով՝ ապակենտրոնացված կազմակերպական կառուցվածքը, մասնավորապես, նախարարությունների կողմից ստանձնած կառավարման ոլորտները, կարիք ունեն խոշորացման: Վերջինիս հնարավորություն կտամեկ կենտրոնից տանելու արդյունք ապահովող քաղաքականություն: Մյուս կողմից, նախարարությունների կառավարման ոլորտների խոշորացումը հնարավորություն կտա կառավարության դեկավարին՝ ՀՀ վարչապետին, համակարգման գործառույթի կիրառման ժամանակ գործ ունենալ փոքր թվով գերատեսչությունների կամ պետա-

կան կառավարման պատասխանատու մարմինների ղեկավարների հետ, նրանցից պահանջել հստակ քայլեր ու վերջնական արդյունքներ:

Որպես կառավարության կառավարման ոլորտների խոշորացման առանձին օրինակ կարելի է դիտարկել ներքին գործերի նախարարության ստեղծումը: Նախարարության կառավարման ոլորտներում կարող են ընդգրկվել պետության ներքին անվտանգության երաշխավորումը և կարգուկանոնի պահպանումը, քաղաքացիների պաշտպանությունը, հասարակական կարգի ապահովումը, հրշեց և փրկարար աշխատանքների հետ կապված հարցերի կառավարումը, քաղաքացիության և միգրացիայի խնդիրների վերաբերյալ համապատասխան քաղաքականության իրականացումը:

Ներքին գործերի նախարարության կառավարման համակարգը կարող է ձևավորվել ներքոհիշյալ պետական կառավարման մարմինների կառավարման ոլորտների համախմբման արդյունքում՝ ընդգրկելով.

- Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության,
- Ոստիկանության,
- Միգրացիայի և փախստականների գործակալության,
- Հրշեց ծառայության,
- Փրկարար ծառայության,
- Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության կառավարման ոլորտները,
- Միգրացիոն գործակալություն:

ՀՀ ոստիկանության կազմից նպատակահարմար է դուրս բերել Վիզաների և անձնագրերի վարչությունը և ինքնուրույն ստորաբաժանման՝ գործակալության կարգավիճակով այն տեղակայել ներքին գործերի նախարարության աշխատակազմում: Այս ստորաբաժանման հիմնական խնդիրը քաղաքացիներին ծառայությունների մատուցումն է, ինչպես նաև բնակչության հաշվառման և գրանցման համակարգի գործունեության ապահովումը: Սերտորեն շաղկապված է միգրացիայի վարչության գործունեության հետ՝ հատկապես անձնագրային ռեժիմի և ելքի-մուտքի

ռեժիմի մասով: Աշխատակիցները պետք է դառնան քաղաքացիական ծառայողներ, այլ ոչ թե շարունակեն համարվել ոստիկաններ: Այսինքն, առաջարկվում է Միգրացիոն գործակալությունը դուրս բերել ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությունից և ներառել նոր ստեղծվելիք Ներքին գործերի նախարարության մեջ:

Ներքին գործերի նախարարության ներկայացված կառուցվածքը ընդամենը մի մոդել է, օրինակ, որը շատ բնորոշ է Արևելյան Եվրոպայի երկրներին, ինչպես նաև Մերձբալթյան հանրապետություններին: Ներքին գործերի նախարարության նշանակած մոդելի ներդրմամբ հնարավորություն է ստեղծվում ձերբազատվելու ոստիկանության՝ որպես ուժային կառույցի պատկերացումներից և անցում կատարել քաղաքացիական հասարակության նոր կառույցի, որտեղ կլուծվեն հասարակական կարգի պահպանման, քաղաքացիության, ընտանիքի, բնակչության միգրացիայի, ելքիմուտքի, հաշվառման, արխիվների պահպանման հարցերը:

Նախարարությունների նմանատիպ խոշորացումների հետ մեկտեղ, կառավարության կառուցվածքը նպատակահարմար է ամբողջականացնել նրա բաղկացուցիչ մաս կազմող ՀՀ կառավարությանն առընթեր մարմիններով, նախարարությունների կազմում գործող պետական մարմիններով, աշխատակազմի գործակալություններով և տեսչություններով: Նպատակահարմար է օրենքով ստեղծված առանձին հանձնաժողովներն ու խորհուրդները, բացի Սահմանադրությամբ սահմանվածներից, նույնպես ներառել կառավարության կառուցվածքում՝ դիտարկելով որպես ինքնուրույն հանձնաժողովներ: Առանձին դեպքերում հանձնաժողովների կամ խորհուրդների նախագահներին կարելի է վերապահել նախարարի պորտֆել՝ լիազորելով տվյալ բնագավառում քաղաքականության իրականացման գործառություններ: Համանման փորձ կիրառում են նաև Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ, որտեղ կառավարության կառուցվածքը և գործունեությունը կանոնակարգվում է կառավարության մասին առանձին օրենքով (օրինակ, Էստոնիայում)<sup>106</sup>:

Աշխատանքի կատարման ժամանակ հատուկ ուշադրություն ենք դարձրել ՀՀ Տարածքային կառավարման նախարարությանը: Նախարարությունը կառավարում է

<sup>106</sup>Խուղավերդյան Ա. Վ., Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ., էջ 231:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը (այսուհետ՝ նախարար), որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ: Նախարարն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը ստեղծվել է ՀՀ Նախագահի 2002թ. մարտի իրամանագրով: Այն գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը նշակում և իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:


Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան: Նախարարության լիազորությունները սահմանվում են օրենքներով, ՀՀ Նախագահի իրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության որոշումներով, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով: Այն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Սույն նախարարությունը 2009թ.-ի աշխատանքների արդյունքում ճանաչվել է տարվա լավագույն նախարարություն՝ շնորհիվ քափանցիկ և պատշաճ գործունեության: Համացանցային կայքում յուրաքանչյուր օր տրվում է տեղեկատվություն տվյալ օրվա աշխատանքների և իրադարձությունների վերաբերյալ:

Սույն աշխատանքի առաջարկությունների մեջ կցանկանայինք ներառել մեկ դրույթ՝ կապված ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ: ՀՀ ՏԿՆ կազմակերպական կառուցվածքի մեջ առկա էին թերություններ՝ կառուցվածքից անհասկանալի էր, թե որ վարչությունը, բաժինը, առանձնացված ստորաբաժանումը ուն է ենթարկվում և ով է իրականացնում տվյալ բաժնի աշխատանքների վերահսկողությունը: Նախարարության կայքում տեղադրված կառուցվածքում հստակ չէր երևում, թե նախարարի տեղակալներից յուրաքանչյուրը որ վարչության և բաժնի համար է պատասխանատու և դրանցից որին է վերահսկում, ինչպես նաև պարզ չէր,

թե առանձնացված ստորաբաժնումներն ում ենթակայության տակ էին: ՀՀ ՏԿՆԱԽՍԿԻՆ կայքից վերցված կառուցվածքը ներկայացված է Գծապատկեր 6.-ում, իսկ առաջարկվող կառուցվածքը՝ Գծապատկեր 7-ում: Իսկ գործնականում առկա է կրկնակի ենթակայություն, ինչը նույնպես, կարծում ենք, որ պարտադիր պետք է բացառվի 2009թ. լավագույն նախարարություն ճանաչված Տարածքային կառավարման նախարարությունում: Պետք է նշենք, որ ստորև բերված Գծապատկեր 5.-ը աշխատանքին կցվել է 2011 թվականին, սույն թեմայով տպագրել ենք հոդված, իսկ ներկայումս ՀՀ ՏԿՆ կայքում ուղղակիորեն բացակայում է կառուցվածքի գծապատկերը, ինչը կարծում ենք պետք է շտկել:


## ԳԺԱՊԱՏԼԵՐ 6.

### ՀՀ Տարածքային կառավարման նախարարության ներկայիս կառուցվածքը



Գծապատկեր 7.

ՀՀ Տարածքային կառավարման նախարարության առաջարկվող գծապատկեր



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործադիր իշխանության գործունեության կատարելագործման ուղիների բացահայտման մեջ կարևոր դեր ունի էլեկտրոնային կառավարության ներդրումը՝ հատկապես հաշվի առնելով համաշխարհային միտումները տվյալ բնագավառում։ Ինչպես նաև կարևոր նշանակություն ունի կառավարության կառավարման ոլորտների խոշորացման հիմնախնդիրը։ Այսպիսով, ուսումնասիրելով գործադիր իշխանության գործունեության և էլեկտրոնային կառավարման համաշխարհային և տեղի փորձը՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների։

- Գործադիր իշխանության մարմինների միջոցով է իրականացվում պետության գործառույթների գերակշիռ մասը։ Գործադիրն է իրականացնում պետության արտաքին և ներքին քաղաքականությունը, պաշտպանության և անվտանգության երաշխավորումը, սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը և այլն։

- Գործադիր իշխանությունը իրականացվում է գործադիրի լիազորություններով օժտված հատուկ մարմինների համակարգի միջոցով։ Պետական իշխանության գործունեության մեխանիզմում դրանք ներկայացվում են գործադիր կառավարման մարմինների միջոցով։ ՀՀ-ում այդ մարմինների համակարգն ունի հետևյալ տեսքը՝ կառավարություն, նախարարություններ, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններ, գործադիր իշխանության գործառույթները իրականացնող օրենքով կազմավորված մարմիններ։

- Կառավարման արևմտյան տեսության համապատասխան՝ յուրաքանչյուր նախարարության խնդիրն է իշխանության իրագործումը, դեկավարումը և միջամտումը, այսինքն՝ կառավարման օբյեկտների գործունեության ուղղվածության և կազմակերպման փոփոխությունը։ Այդ հարցերի լուծման համար նախարարությունը իր կազմում պետք է ունենա կառավարման կենտրոն, որակավորված կառավարչական անձնակազմ նախարարի գլխավորությամբ և ֆինանսական միջոցներ, որոնք նախատեսված են պետական բյուջեով։ Այս ամենը միասին թույլ են տալիս նախարարությանը արդյունավետ գործել և իրագործել իրավունքի ուժով իրեն վերապահված լիազորությունները։

- Պետական նոր կառավարման գաղափարախոսությունը մեծապես արտահայտվել է Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և այլ երկրների կառավարման բարեփոխումների ծրագրերում։ «Էլեկտրոնային կառավարությունը»

պետական իշխանության մարմինների գործունեության կազմակերպման նոր ձև է, որը տեղեկատվական-կոմունիկացիոն տեխնոլոգիաների շնորհիվ ապահովում է կազմակերպություններին և քաղաքացիներին մատուցվող պետական ծառայությունների օպերատիվության և հարմարավետության որակական նոր մակարդակ, ինչպես նաև ապահովում է տեղեկատվություն պետական մարմինների գործունեության արդյունքների մասին:

- 2005թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունը (փոփոխություններով) մնալով կառավարման կիսանախագահական համակարգի շրջանակներում, հստակեցրել է Հանրապետության նախագահի դերը պետական իշխանության մարմինների կառավարման համակարգում: Այն լուծում է իշխանությունների առանձին թևերի միջև իշխանության տարանջատման արմատական խնդիրներից մեկը՝ Հանրապետության նախագահի ձեռքում կենտրոնացված իշխանությունից անցում դեպի իրավունքների այնպիսի բաժանում, որը, մի կողմից, կայուն է ու արդյունավետ, իսկ մյուս կողմից՝ կոլեգիալ:

- Ընդհանուր առմամբ 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը մարդու և քաղաքացու իիմնական իրավունքների ու ազատությունների իմաստով նախորդ (1995թ.) Սահմանադրության համեմատությամբ նախատեսում է ավելի շատ իրավունքներ, քան 2005թ. ընդունված Սահմանադրությունը (փոփոխություններով): Հիմնախնդիրը կայանում է նրանում, որ առաջարկվող սահմանադրական բարեփոխումների շրջանակում մարդու իիմնարար իրավունքների իրացումը ավելի խիստ է սահմանափակված, քան գործող սահմանադրության դեպքում, եթե սահմանափակող գործոններ գրեթե չկան:

- Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում 2015թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեի դրված սահմանադրական բարեփոխումների փաթեթը ներառում է պետության քաղաքականության ավելի շատ իիմնական նպատակներ, քան 2005թ. ընդունված ՀՀ Սահմանադրությունը (փոփոխություններով): Մասնավորապես, սահմանադրական բարեփոխումների փաթեթով պետական քաղաքականության իիմնական նպատակների մեջ մտնելու են՝ սպառողների շահերի, գործարար միջավայրի պաշտպանությունը, ձեռնարկատիրության խթանումը և տարածքային համաշափ զարգացումը: Զեօնարկատիրության խթանման նպատակադրմամբ քայլ է արվում անցնելու առաջարկի տնտեսությանը:

- Ելեկտրոնային կառավարությունը տեղեկատվական հասարակության կարևորագույն բաղադրիչներից է, որինանցումը կավել է տնտեսապես ավելի զար-

գացած Երկրներում: Սակայն միջազգային հասարակությունում չկա համընդհանուր ընդունված ռազմավարական նպատակ: Առանձին Երկրների քաղաքական էլիտամերը տարբեր կերպ են պատկերացնում այն, ինչն էլ իր արտացոլումն է գտնում տարբեր նախագծերի մշակման մեջ:

- Ելեկտրոնային կառավարության սկզբունքի իրականացումը պահանջում է նյութատեխնիկական որոշակի բազա, նախապատրաստված օգտագործողներ և զգալի ներդրումներ՝ նախագծերի իրականացման համար: Այսպես, 2003թ. ՄԱԿ-ի 18 անդամ-Երկրներ դեռևս չեն ունեցել իրենց կայքերը համացանցում: Սա նշանակում է, որ այս հարյուրամյակի սկզբուն միայն զարգացած Երկրները կարողացել են իրենց թույլ տալ էլեկտրոնային կառավարության մեխանիզմների ներդրումը: Մի շարք Երկրներում այս գործընթացն սկսվեց ավելի ուշ:

- Հայաստանի Հանրապետությունում ընդունված է պետական կառավարման «խառը» ձևը: Նախկինում կարելի է ասել, որ այն նախագահա-խորհրդարանական էր, ինչը չի կարելի ասել ներկայիս համակարգի մասին, որը սահմանադրական բարեփոխմեների արդյունքում վերափոխվեց խորհրդարանական-նախագահականի: Սոցիալիզմի փլուզումից հետո պետական կառավարման այս ձևը լայն տարածում գտավ հետոցիալիստական շատ Երկրներում:

- Հաշվի առնելով կառավարման համակարգի ծրագրվող զարգացումները, ինչպես նաև հակառօռուացիոն ռազմավարություններով սահմանված բարեփոխումները՝ ՀՀ կառավարությունը կառավարման համակարգի զարգացումը բնութագրող նպատակային ցուցանիշներով արդեն իսկ գերազանցել Արևելյան Եվրոպայի և Մերձբալթյան Երկրների մակարդակը և նպատակադրվել է 2021թ. հասնել Արևմտյան Եվրոպայի Երկրների կառավարման մակարդակին: Ընդ որում, առաջնային նշանակություն կտրվի հատկապես կառավարման գործընթացի հետագաժողովական պարտավորությունը, օրենքի գերիշխանության ապահովմանը և հակառօռուացիոն միջոցառումներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ կառավարման համակարգի սահմանադրական բարեփոխումների փաթեթով նախատեսված վերոնշյալ քաղաքականությունը լիովին համահունչ է առաջատար Երկրների համանման գործընթացների հիմնական սկզբունքներին:

- Պետական կառավարման բարեփոխումները, հակառօռուացիոն և աղքատության դեմ պայքարի ծրագրերը կազմում են ՀՀ կառավարության ռազմավարական Երեք ուղղությունները: Պետական հատվածի բարեփոխման մասով կառավարության հիմնական առաջնահերթություններն են պետական հաստատություն-

ների կառուցվածքների օպտիմալացումը, պետական քաղաքականություն մշակելու և կիրառելու կարողությունների հզորացումը, քաղաքացիական ծառայության բարեփոխումները, պետական հատվածի գործունեության մեջ քաղաքացիական հասարակության մասնակցության ավելացումը և այդ գործունեության նկատմամբ վերահսկողությունը, գործարարությանը խոչընդոտող վարչական արգելքների նվազեցումը, պետական ծախսերի կառավարման բարելավումը և արդարադատության համակարգի բարեփոխումները:

• ՀՀ պետական կառավարման մարմիններում գործառությային վերլուծության արդյունքներով հանրապետական գործադիր իշխանության մարմիններին (նախարարություններ, կառավարությանն առընթեր մարմիններ, տեսչություններ և այլ գերատեսչություններ) հատուկ է եղել նաև կանոնադրությունների կառուցվածքների նկատմամբ խիստ տարբերակված մոտեցումների առկայությունը: Նախարարությունների՝ այդ ժամանակ գործող կառուցվածքներում տարբերակվում էին կազմակերպական և իրավական կարգավիճակի առումով տարբեր, հաճախ բնութով միանման գործառույթներ իրականացնող, բայց տարբեր անվանումներով ու կարգավիճակներով գործողավելի քան 17 տիպի կառուցվածքային ստորաբաժանումներ, ինչպես օրինակ՝ խուրիստրդ, կոլեգիա, հանձնաժողով, ֆոնդ, գործերի տնօրինություն, գործերի կառավարչություն, դեպարտամենտ, տեսչություն, գործակալություն, գլխավոր վարչություն, վարչություն, բաժին, ենթաբաժին, խումբ, ծառայություն, նախարարի աշխատակազմ, նախարարության աշխատակազմ և այլն: Այսպիսի մոտեցումն իրականության մեջ առաջ էր բերում խառնաշփոթ, անարդյունավետ կառավարում, աշխատակազմների կառուցվածքային ստորաբաժանումներում հաստիքների արհեստական ուղճացում: Նման իրավիճակի պատճառը կառուցվածքային ստորաբաժանումների, գործառույթների և խնդիրների ոչ ճիշտ ձևակերպումն էր, կառավարման ուղղաձիգ և հորիզոնական կապերի խախտումը, կառավարման մակարդակների քանակի ու կառուցվածքային ստորաբաժանումների սահմանման միասնական չափորոշիչների բացակայությունը:

• Կառավարության կառուցվածքի «փոշիացված» կամ այլ խոսքերով՝ ապակենտրոնացված կազմակերպական կառուցվածքը, մասնավորապես, նախարարությունների կողմից ստանձնած կառավարման ոլորտները, կարիք ունեն խոշորացման: Վերջինս հնարավորություն կտա մեկ կենտրոնից տանելու արդյունք ապահովող քաղաքականություն: Որպես կառավարության կառավարման ոլորտների խոշորացման առանձին օրինակ դիտարկվել է ներքին գործերի նախարարության

ստեղծումը: Նախարարության կառավարման ոլորտներում կարող են ընդգրկվել պետության ներքին անվտանգության երաշխավորումը և կարգուկանոնի պահպանումը, քաղաքացիների պաշտպանությունը, հասարակական կարգի ապահովումը, հրշեց և փրկարար աշխատանքների հետ կապված հարցերի կառավարումը, քաղաքացիության և միզրացիայի խնդիրների վերաբերյալ համապատասխան քաղաքականության իրականացումը:

- Անդրադառնալով էլեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրներին՝ վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք նկատվել են մի շարք նախարարությունների աշխատանքային գործունեության շրջանակներում: Այդ խնդիրներն առաջին հերթին կապված են Մալբերի (Mulberry) էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ծրագրի հետ: Նշված խնդիրների լուծման նպատակով Առաջարկվել է տարվա կտրվածքով մեկ կամ երկու անգամ կազմակերպել հատուկ սեմինարներ՝ նոր աշխատակիցների ուսուցման նպատակով: Երկրորդ, որպեսզի վերոնշյալ ծրագիրը հնարավորություն ընձեռի կազմակերպել յուրաքանչյուր առանձին նախարարության ներքին գործավարությունը: Երրորդ, Մալբերի ծրագրում տեղ գտած գնահատման բալային համակարգը կամ բացառել, կամ դրա գործածությունը ձևականից տանել դեպի գործնական: Եվ վերջապես, հնարավորություն տալ տեսնելու, թե տվյալ պաշտոնական գրությունն ուղարկելուց հետո երբ է այն ստացվել և հետևել դրա ընթացքին, ինչը ներկայումս հնարավոր է իրականացնել միայն տվյալ նախարարության կամ գերատեսչության շրջանակներում

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն, 1995թ.:
2. ՀՀ Սահմանադրություն 2005թ.:
3. «Կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք, 2011թ.:
4. «Կառավարության կազմի և կառուցվածքի մասին» ՀՀ օրենք, 2006թ.:
5. «Կրթության պետական տեսչությունների» մասին ՀՀ օրենք, 2005թ.
6. «ՀՀ Կառավարության կառուցվածքը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 2002թ. մարտի 16-ի թիվ 1063 հրամանգիր:
7. «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք, 2001թ.:
8. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 2001թ.:
9. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2006թ. հունիսի 1-ին):
- 10.ԱՐՈԾ-2 նախագիծ, Երևան 2008թ.:
- 11.ՀՀ կառավարության ծրագիր, Երևան 2008թ.:
- 12.«Առաջարկություններ նախարարին կից քաղաքականության հարցերով խորհրդի հետագա գործունեության վերաբերյալ» աշխատանքային փաստաթուղթ, հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր, 2007թ.:
- 13.«Առաջարկություններ ԱՐԾ և ծրագրային բյուջետավորման առումներով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի գործառույթների զարգացման վերաբերյալ», Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի աշխատանքային փաստաթուղթ թիվ 49:

14. Խուղավերդյան Ա.Վ., Հանրային ոլորտի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում.-Եր.: Սարվարդ հրատ., 2008թ., 300 էջ:
15. Խուղավերդյան Ա., Սաֆարյան Լ., ՀՀ պետական կառավարման մարմիններում մամուլի քարտուղարների և հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումների առկա կարողությունների և իրավիճակի գնահատման գեկույց, Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի: ՀՀ կառավարության հասարակայնության հետ կապերի վարչություն, Երևան, 2006թ., 137 էջ:
16. Կարապետյան Յ.Զ.՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի գործում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության գնահատման հիմնախնդիրները ատենախոսություն, Երևան-2012:
17. «Մենեջմենթ» / Տ.գ.դ., պրոֆ. Յու.Մ.Սուվարյանի ընդիանուր խմբագրությամբ., Եր. Տնտեսագետ, 2009թ. 608 էջ:
18. Պողոսյան Վ., Թովմասյան Յ., Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005թ., 80 էջ:
19. Սարգսյան Հայկ, ՄարկոսյանԱշոտ, «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները», Երևան, 2014. էջ 194:
20. Սարգսյան Յ., Տոնյան Գ., Քոչինյան Ն., «Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում» Եր., Զանգակ, 2015թ.:
21. Ուսումնասիրություններ և առաջարկություններ ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման (կադրային) ստորաբաժանումների մասով:  
Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ ու աջակցությամբ, 125 էջ:

22. Оրбелиян А., „Ելեկտրոնային կառավարության ներդրման հիմնախնդիրներն ու խոչընդոտմերը Հայաստանի Հանրապետությունումները, Երևան-2010:
23. Орդյան Է., «Պետական կառավարման համակարգը Հայաստանում», Երևան, 1998թ.:
24. Закон “О правительстве” от 27 ноября 1997г . №50/1997, Мадрид .
25. Закон “Об административной процедуре” от 17 июля 1958г . № 29-1958, Мадрид .
26. Закон “Об организации и функционировании генеральной администрации государства” от 14 апреля 1997г ., № 6/1997, Мадрид .
27. Административное право: Учебник / Под ред. Ю.М. Козлова, Л.Л. Попова. - М.: Юристъ, 1999, 728с ..
28. Алексеев Н.Н. Очерки по общей теории государства.  
Основные предпосылки и гипотезы государственной науки.  
Московское научное издательство. 1919 г ., 203с ..
29. Атаманчук Г.В. Теория государственного управления. М.2000 г ., 776с ..

30. Бахрах Д.Н. Административное право.  
Учебник. М., БЕК. 1997, 355с ..
31. Брэбен Г., Французское  
административное право / Пер. с Франц. М.:  
Прогресс, 1998., 158с ..
32. Ведель Ж., Административное право  
Франции / Пер/с Франц. М.: Прогресс, 1973г .512с ..
33. Великобритания. Соединенное  
Королевство Великобритании и Северной  
Ирландии // Конституции государств  
Европы. Т. 1. М.,2001г .,535с ..
34. Венгеров А.Б. Теория государства и права:  
Учебник. 2000, 528с ..
35. Гарнер Д. Великобритания: центральное и  
местное управление / Пер. с англ. М.:  
Прогресс, 1984г .,251с ..
36. Глазунова Н.И. Система  
государственного управления. М.: 2002, 551с ..
37. Государственное и региональное управле  
ние Уткин Э.А. Денисов А.Ф., 2002,329с ..
38. Государственное управление: основы  
теории и организации. /Под ред. В.А.  
Козбаненко. М.: 2000, 912с ..

39. Государственное управление: основы теории и организации. Учебник. В 2т./Под ред. В.А. Козбакенко. Изд. 2-е, с изм. и доп. - М.: "Статут", 2002, 592с ..
40. Диаконов В.В.  
Учебноепособиепотеориигосударстваиправа. 2004, 432с ..
41. Зеркин Д.П., Игнатов В.Г. Основы теории государственного управления. РнД.: 2000, 399с ..
42. Иностранные конституционные права:  
Учебник / Под ред. В.В. Маклакова.- М.: Юрист, 1996, 512с ..
43. Информационные технологии в государственном и муниципальном управлении: учебное пособие / М.А. Абросимова.- М.: КНОРУС, 2011г ., 256с ..
44. Керимов. Исполнительная власть в системе разделения властей. 2001, 210с ..
45. Козырин А.Н., Глушко Е.К. и др., Правительство в зарубежных странах: Учебное пособие / Под. ред. Проф., д.ю.н. А.Н. Козырина и доц., к.ю.н. Е.К. Глушко.- М.: Ось .- 89, 2007г ., 240 с . (Jurisprudentia).

46. Конституции государств Европы. В 3т. Т. 1.  
М., 2001., 824с ..
47. Конституционное право зарубежных  
стран: Учебник для вузов / Под общ. ред. чл.-  
корр. РАН, проф. М.В. Баглай, д.ю.н., проф. Ю.И.  
Лейбо и д.ю.н., проф. Л.М. Энтина.-  
М.:Издательство НОРМА, 2003, 832с ..
48. Крылова И.С. Аппарат управления  
современной Франции. М.:Наука , 1982.,181с ..
49. Кузнецов В. В., Ваховский В.,  
Чебурашкина И. С. Государственное и  
муниципальное управление: Учебное  
пособие.—Ульяновск , 2004, 192с ..
50. Купряшин Г.Л., Соловьев А. И.  
Государственный менеджмент .М., 2004г .,326с ..
51. Магнус Я.Р., Катышев П.К., Пересецкий А.А.,  
Эконометрика, издательство “Дело”,  
Москва 2004, 576с ..
52. Министерства и ведомства: учебное  
пособие / под. ред. А.Н. Козырина и Е.К.  
Глушко .— М.: Норма , 2008г ., 256с .
53. Мишин А.А.. Конституционное  
(государственное) право зарубежных  
стран: Учебник .- М.: Белые альвы, 1996, 400с ..

54. Мэннинг Н., Парисон Н. Реформа государственного управления: международный опыт. М., 2003г ., 496с ..
55. Общая теория государства и права: Учебник / Под. ред. Лазарева С.Н.- М.: Юристъ, 1996, 432с ..
56. Организация административной власти во Франции. Российско-французская серия информационных учебных материалов. М.,1993г., 240с..
57. Организации работы правительства во Франции: на примере Генерального секретариата Правительства. Российско французская серия информационных учебных материалов. № 6. М., 1993, 260с..
58. Оуэн Н. Понять британские государственные институты Б/м., 2000.
59. Очерки политической экономии посткоммунистического капитализма (Опыт Грузии). Папаева В.Г., Беридзе Т.А. М., 2005, 287с ..
60. Перестройка государственных структур: методы и подходы. Посткоммунистические страны в переходном периоде. ПРООН/РВЕС 2001г ., 143с ..

61. Пикулькин А.В. Система государственного управления . – М.: ЮНИТИ, 2001, 398с ..
62. Постсоветский Южный Кавказ .  
Библиография и обзор публикаций по социальным и политическим наукам. М., 2002, 138с ..
63. Пронкин С.В., Петрунина О.Е.,  
Государственное управление зарубежных стран: учебное пособие / С.В. Пронкин, О.Е. Петрунина . – 3-е изд., доп. и перераб. – М.: КДУ, 2007г . 496с ..
64. Протасов В.Н. Теория права и государства. Проблемы теории права и государства: Вопросы и ответы. 1999, 40с ..
65. Рой О.М., Система государственного и муниципального управления: Учебное пособие. 3-е издание .-СПБ.:Питер , 2007г ., 368с .: ил.- (Серия “Учебное пособие”).
66. Роуз Р., Политическая система Англии // Сравнительная политология сегодня: Мировой обзор / Пер. с англ. М.: Аспект Пресс , 2002г ., 344с .

67. Савицкий П.И., Правительственный  
аппарат Пятой Республики во Франции.  
Свердловск: Средне-Уральское книжное  
издательство, 1979г ., 176с ..
68. Сокращение роли государства.  
Государственное управление и  
устойчивое человеческое развитие.  
Региональное бюро для Европы и СНГ. Июль  
1997г ., 158с ..
69. Страшун Б.А., Конституционное  
(государственное) право зарубежных  
стран: Учебник. Том 3. - М.: БЕК, 1999, с. 263.
70. Сухорев Я., Батлер У.Э., "Правовые системы  
стран современного мира" энциклопедия  
справочник. М. НОРМА, 2003г ., 976с ..
71. Уткин Э.А. Государственное и  
муниципальное управление. 2001, с . 304.
72. Уткин Э. А. Денисов. Государственное и  
региональное управление. 2002, с .320.
73. Французская Республика: Конституция и  
законодательные акты / Пер. с франц. М.:  
Прогресс , 1989г ., 445с ..

74. Чиркин В.Е. Государственное и

муниципальное управление М.: Юристъ, 2003г .

320с ..

75. Чиркин В.Е. Государственное управление:

Элементарный курс . М.: Юристъ , 2001г . 320с .

76. Чиркин В.Е. Государствоведение : Учебник .

– М.: Юристъ , 1999, с . 360.

77. Чиркин В.Е.“Опыт зарубежного управления

(государственное и муниципальное

управление )”, Москва ,Юристъ , 2006г ., 184с ..

78. Acosta S. Gobierno y la administracion en la Constitution. Vol. 1, 2.

Madrid, 1988.

79. Alvarez A. El instituto del Decreto-ley. Madrid, 1989.

80. Andre Demichel, Pierre Lalumiere. Le droit public. Paris, 1996.

81. Bar Cendon A. La estructura y funcionamiento del Gobierno en Espana:

una apocimacion analitica. Madrid, 1993.

82. Bamforth N., Leyland P. Public Law in a Multi-Layered Constitution.

Oxford, 2003.

83. Benoit Mercuzot. Organisation administrative. Les institutions

administratives francaises. Paris, 2001.

84. Bradley A., Ewing K. Constitutional and Administrative Law. 13<sup>th</sup> ed.

London, 2002.

85. Garcia-Trevijano J.A., Tratado de Derecho Administrativo. Madrid,

1998.

86. Heywood P., The government and politics of Spain. New York, 2002.
87. Morales A. Historia del derecho y de las instituciones españolas. Madrid 1999.
88. Osborn D., Gaebler T., Reinventing Government: How the Entrepreneurial Spirit is transforming the Public Sector. – Addison. – Wesley. 1992.
89. Rene Chapus. Droit administrative general. 13-e edition. Tome 1. Paris, 1999.
90. Tomkins A. The Constitution After Scott: Government Unwrapped. Oxford, 1998.
91. <http://armstat.am/am/>
92. <http://encyclopaedia.biga.ru/enc/country/GRUZIYA.html>
93. <http://www.e-gov.am>
94. <http://www.gov.am>
95. <http://www.laws.am>
96. <http://www.mta.gov.am>
97. <http://www.ornaone.com>
98. <http://www.parliament.am>
99. <http://www.premier-ministre.gouve.fr>
100. <http://www.rus-lib.ru>
101. <http://www.ucheba.ru>
102. <http://unmepecno.ru/gruziya/index.php>
103. <http://www.usum.am>
104. [www.worldbank.org](http://www.worldbank.org)

**Դավելված 1.**

**Freedom House-ի տվյալները 2014 թ. անցումային տնտեսությամբ  
երկրների համար**

<b>Երկրներ</b>	<b>1 EP</b>	<b>2 CS</b>	<b>3 IM</b>	<b>4 NGOV</b>	<b>5 LGOV</b>	<b>6 JFI</b>	<b>7 CO</b>	<b>8 DS</b>
1. Ալբանիա	4.00	3.00	4.00	4.75	3.50	4.75	5.25	4.18
2. Ճայաստան	5.75	3.75	5.75	5.75	5.75	5.50	5.25	5.36
3. Ադրբեյչան	7.00	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.75	6.68
4. Բելառուս	7.00	6.50	6.75	6.75	6.75	7.00	6.25	6.71
5. Բունիա և Հերցեգովինա	3.25	3.50	4.75	5.75	4.75	4.25	4.75	4.43
6. Բուլղարիա	2.25	2.25	4.00	3.75	3.00	3.25	4.25	3.25
7. Խորվաթիա	3.25	2.75	4.00	3.50	3.75	4.50	4.00	3.68
8. Չեխիա	1.25	1.75	2.75	3.00	1.75	1.75	3.50	2.25
9. Էստոնիա	1.75	1.75	1.50	2.25	2.50	1.50	2.50	1.96
10. Վրաստան	4.50	3.75	4.00	5.50	5.50	5.50	4.50	4.68
11. Հունգարիա	2.25	2.25	3.50	3.75	2.75	2.50	3.75	2.96
12. Ղազախստան	6.75	6.50	6.75	6.75	6.50	6.50	6.50	6.61
13. Կոսովո	4.75	3.75	5.75	5.50	4.75	5.50	6.00	5.14
14. Ղրղզստան	5.50	4.50	6.00	6.50	6.25	6.25	6.25	5.89
15. Լատվիա	1.75	1.75	2.00	2.00	2.25	1.75	3.00	2.07
16. Լիտվա	2.00	1.75	2.25	2.75	2.50	1.75	3.50	2.36
17. Մակեդոնիա	3.25	3.25	5.00	4.25	3.75	4.25	4.25	4.00
18. Սուդան	4.00	3.25	5.00	5.50	5.75	4.75	5.75	4.86
19. Չեռնոգորիա	3.50	2.75	4.25	4.25	3.25	4.00	5.00	3.86
20. Լեհաստան	1.25	1.50	2.50	2.50	1.50	2.50	3.50	2.18
21. Ռումինիա	3.00	2.50	4.25	3.75	3.00	3.75	4.00	3.46

22. Ռուսաստան	6.75	5.75	6.25	6.50	6.00	6.00	6.75	6.29
23. Սերբիա	3.25	2.25	4.00	3.75	3.50	4.50	4.25	3.64
24. Սլովակիա	1.50	1.75	2.75	3.00	2.50	3.00	3.75	2.61
25. Սլովենիա	1.50	2.00	2.25	2.00	1.50	1.75	2.50	1.93
26. Տաջիկստան	6.75	6.25	6.25	6.50	6.00	6.25	6.25	6.32
27. Թուրքմենստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
28. Ուկրաինա	4.00	2.50	4.25	6.00	5.50	6.00	6.25	4.93
29. Ուզբեկստան	7.00	7.00	7.00	7.00	6.75	7.00	6.75	6.93
Միջին	3.99	3.58	4.53	4.72	4.29	4.45	4.89	4.35
Մեջիան	3.50	3.00	4.25	4.75	3.75	4.50	4.75	4.18

Երկրները գնահատված են 1–7 միավորանոց սանդղակով: 1–ը ներկայացնում է ցուցանիշների ամենաբարձր, իսկ 7–ը՝ ամենացածր մակարդակը:

Աղբյուրը. Յ.Սարգսյան, Գ.Տոնոյան, Ն.Քոչինյան, «Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում», Եր., Զանգակ, 2015թ., էջ 50-51:

## Հավելված 2

### Սահմանադրականության համարվի տվյալների շտեմարանները

	Աղբյուր	Հաշվարկող	Երկրների թիվը
1	«Ազատությունը աշխարհում» համարիվ ("Freedom in the World" Index)	Ֆրիդոմհաուզ (Freedom House)	195
2	Տնտեսական ազատության համարիվ (Index of Economic Freedom)	Հերիթիջ իհմնադրամ (Heritage Foundation)	178
3	«Տնտեսական ազատությունը աշխարհում» համարիվ ("Economic Freedom of the World") Institutes	Ֆրեյզեր և Կատո ինստիտուտներ (Fraser & Cato Institutes)	152
4	Սինե Մարդու իրավունքների տվյալների ծրագիր (Cingranelli–Richards (CIRI) Human Rights Data Project)	Դ. Սինգրանելի և Դ. Ռիչարդս	202
5	«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» համարիվ ("Doing Business" Index)	Համաշխարհային բանկ (World Bank)	189


6	Համաշխարհային առևտուրի խթանման համարիվ (The Global Enabling Trade Index)	Համաշխարհային տնտեսական համաժողով (World Economic Forum)	138
7	Վերափոխման համարիվ (Transformation Index)	Բերտելսման հիմնադրամ (Bertelsmann Foundation)	129
8	Համաշխարհային մրցունակության համարիվ (Global Competitiveness Index)	Համաշխարհային տնտեսական համաժողով (World Economic Forum)	151
9	Համաշխարհային կառավարման ցուցիչներ (Worldwide Governance Indicators)	Համաշխարհային բանկ (World Bank)	215

#### Շարունակություն

10	Կոռուպցիայի ընկալման համարիվ (Corruption Perception Index)	Թրանսփերենսի Ինֆերնեյշնլ (Transparency International)	175
11	Մամուլի ազատության համաշխարհային համարիվ (World Press Freedom Index)	Լրագրողներ առանց սահմանների (Reporters Without Borders)	180

Աղբյուր. Յ.Սարգսյան, Գ.Տոնոյան, Ն.Քոչինյան, «Դիսկրետ մոդելավորումը ճանաչողության և դասակարգման խնդիրներում» Եր., Զանգակ, 2015թ., էջ 52:

**Հավելված 3. ՀՀ նախարարության կառավարման կազմակերպական կառուցվածքի  
մոդելի գծապատկեր<sup>107</sup>**



Պետական ոչ առևտրային կազմակերպություններ